

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 11
NOVEMBRE
1929
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԹԿԱՆ ԳՆԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ՄԻ ԾՐԱԳՐԻ ՏԵՈՒՐ ՎԱԽՃԱՆԸ

Լողանի դաշնագրի ստորագրութիւնից անմիջապէս յետոյ, երբ հայ հասարակութիւնը ուղղակի չլմամ էր իր նկատմամբ դործւած ահաւոր անիրաւութիւնից, մեր աղա-ազգայնականները նախաձեռնութեամբ հրապարակեց Սարգարապատի ոռոգման եւ յիտան հազար զաղթականներ հայաստան փոխադրելու հարցը: Արքան եւ ծանր շփոթի մատնւած ու յուսալիք՝ հայ հասարակութիւնը, աննշան բացառութեամբ, արժանաւոր գնահատութիւն արաւ եւ բացասական վերաբերում ցոյց տուց դէպի այդ ծրագիրը. ոմանք սրբապղծութիւն էին համարում ազգային իրէջանքի խորտակման յաջորդ օրն իսկ նման խնդիրներ յարուցանելը, ուրիշներ՝ կարծում էին, թէ Սարգարապատի ծրագիր կարող է վնասել հայկական դատին քաղաքական տեսակէտից. քիչ չէին եւ այնպիսիներ, որոնք, առհասարակ, անիրաւորութիւն, ցնորական էին համարում այդ ծրագիրը: Ընդհակառակը, մեծ պետութիւններն ու խորհրդային իշխանութիւնը բաւական ջերմ ընդունելութիւն ցոյց տւին հայ ազգայնականների մտալոյցացումին, իրեւ իրենց յանցաւոր խիղճը հանդատացնելու մի միջոցի: Ազգերի իրգան այդ առթիւ մէկից աւելի բանաձեւեր քննարկեց, յանձնախմբեր ու ծրագիրներ կազմեց, խորհրդային իշխանութիւնը մի շարք խոստումներ տւեց ու յանձնառութիւններ ստանձնեց: Բազմաթիւ թղթեր ու հեռագրերի փոխանակեցին ժընեւի, Մոսկուայի ու Երեւանի միջեւ, բազմաձայն ճամբորդութիւններ եղան. ինքը զաղթականների բարձր կոմիտար Տր. Նանսէնը ստիպւած եղաւ զնալ Երեւան խնդիրը տեղն ու տեղը կարգադրելու համար: Տարիներ սահեցին ու անցան: Գաղթականները սպասելուց յուսահատ՝ սկսեցին իրենց գլխի ճարը տեսնել. ով ո՛ւր կարող էր տեղա-

ւորեց՝ նոյովեով ե՛ւ իրենց բախտը, եւ իրենց բախտը շահագործողներին: Հայաստանը, կապոյտ թռչնի պէս, անհասանելի երազ դարձաւ նրանց համար: Հետզհետէ՝ յօղս ցնդեց եւ Սարգարապատի ծրագրի հեղինակների խանդավառութիւնը: Նախ՝ պարզեց, որ բոլշեւիկների դաշնակից քեմալականները թոյլ չեն տալիս օգտագործել Արաքսի ջուրը, ապա՝ երեւաց, որ Մոսկւան, թէեւ բաց չի խոստովանում, դէմ է ծրագրին՝ պատրակ բռնելով, որ Ազգ. Լիգայի հեղինակութիւնը կարող է բարձրանալ Հայաստանի ժողովրդի աչքին: Յետոյ, յայտնի դարձաւ, որ Ազգ. Լիգայի անդամ պետութիւններն էլ յօժար չեն դրամ տալու, որ «խորհրդային իշխանութիւնը ուժեղանայ»: Վերջապէս, չէնց ծրագրի հեղինակներն իրենք՝ հայ բուրժուազիան, յանձին Բարեգործականի ու անհատ ներկայացուցիչների, չի հաւատում գործին եւ տրամադիր չէ առանձնապէս մեծ գոհողութիւններ անելու:

Հետզհետէ Սարգարապատի ոռոգման եւ 50,000 զաղթականների տեղափոխութեան մեծ ծրագիրը փոքրացաւ, մանրացաւ ու վերածեց մի խղճուկ հարցի—300,000 անգլիական ոսկիի փոխառութեան՝ Սարգարապատի «փոքր ծրագիրը» իրականացնելու կամ Երեւանի ղուերը, այսինքն՝ մի քանի հազար օրավար հող ոռոգելու համար: Եւ, ի վերջոյ, այս էլ ջուրն ընկաւ:

Սարգարապատի ծրագրի մարտիրոսագրութեան պատմութիւնը արաւ դր. Նանսէնը սոյն տարւայ սեպտ. 19-ին, Ազգ. Լիգայի 10րդ համագումարի առջեւ: Եւ պարզեց, որ, հակառակ բազմաթիւ ու թախանձագին դիմումների, պահանջւած 300,000 ոսկուց կարելի է եղել ճարել հազիւ 155,720ը. մնացած 150,000ը մնացել է բաց: Այս պայմաններում

Երեւանի կառավարութիւնը մերժել է ընդունել ծրագիրը, թէև զր. Նանսէնը համոզուած է եղել, որ աշխատանքների սկզբնաւորութիւնից յետոյ պահասած գումարը կը ճարի:

Իր. Նանսէնի առաջարկի վրա, Ազգ. Լիգան որոշեց քաղաքեցիկ զբաղելի ոտոզման եւ հայ գաղթականների Հայաստանի փոխադրելու ծրագրով եւ «Նուախիբ բարձր կոմիտէիին շարունակել շարժումը ի նպաստ հայ տարագիրների վերադարձի դէպի Երեւանի հանրապետութիւնը եւ մտնի յարարութեան մէջ Կոմիտէի հետ, երբ բարձր կոմիտէութեան գործակցութիւնը երեւայ նպատակայարմար»:

Փաստօրէն այս նշանակում է վերջ տալ այն ձեռնարկին, որի հետ այնքան մեծ յոյսեր էին կապել հայ ազա-ազգայնական խաւերը եւ որը այսպէս ճարպիկ կերպով լահազորեցին մեծ պետութիւնները եւ խորհրդային իշխանութիւնը:

Հայ ազա-ազգայնականների մասին խօսելը աւելորդ է: Նրանց ազգասիրութիւնը եւ քաղաքական որպիսութիւնը հանրածանօթ են: Անջիլ ու աննկարագիր՝ նրանք մի օր ջատագովում են ծովից ծով Հայաստանի պահանջը եւ չեն բաւականանում անգամ «Արարատեան Հանրապետութեանը», միւս օր շատ են համարում նոյնիսկ «Երեւանի Հանրապետութիւնը» խորհրդային փափախի տակ եւ պատրաստ են գոհանալ մի քանի առուներ փորելով: Անհամոզում եւ անողնաշար մարդկանց պատկերն է այս միշտ ու ամէն տեղ...

Աւելի կարեւոր է Ազգերի Լիգայի եւ մեծ պետութիւնների պարագան: Հէնց սկզբից էլ նրանք չէին հաւատում Սարգսրապատի ծրագրին՝ քաջ գիտենալով, որ խորհրդային իշխանութիւնը չի ընդունի իրենց պայմանները եւ իրենք էլ չեն կարող երբեք տալ բոլշեւիկներին: Բայց երկար տարիներ հայ ազգայինջիւղներին քթից բռնած զբաղեցին այդ հարցով, որպէսզի ցոյց տան, թէ հայ ժողովրդի սիրոյ համար պատրաստ են ամէն գոհողութեան, եւ միայն Մոսկուայի ու Երեւանի վարչիւններն են, որ թոյլ չեն տալիս: Հակառակ յարուցած աղմուկին ու շոյալուծ խոստումներին պարզ էր ամենքին, որ երբ բանը հասնի գործի, դրամ տուող չի գտնուի: Այդպէս էլ պատահեց. պահանջւած 300,000 ոսկուց 100,000ը խոստացան տալ հայասիրական ու հայկական կազմակերպութիւնները, իսկ մնացած 200,000 ոսկին կարելի չեղաւ հաւաքել: Ազգ. Լիգայի անդամ 54 պետութիւնները — Անձլիա, Փրանսա, Իտալիա, որոնց ձեռքերը թափախւած են հայերի արինով, անճրկեցին այդ գումարի առջեւ... Եւ դեռ աւելին. տարիներ շարունակ խաղացնելուց, ամենքին յոյսեր ներշնչելուց յետոյ անձլիական կառավարութիւնը յայտարարեց, թէ ինքը դրամ չի տալ, որովհետեւ այդ պիտի նշանակէր...

Իկններին: Մեկնութիւնները աւելորդ չե՞ն:

Մեկնութիւնները աւելորդ կը լինէին եւ խորհրդային իշխանութեան վերաբերմամբ, եթէ վարապետի յետեւի կատարած փաստերը ծանօթ լինէին նաև լայն հասարակութեան:

Որոհորդային իշխանութիւնն էլ Սարգսրապատի ծրագրին փարեց միեւնոյն նկատումներով, ինչ որ եւ մեծ պետութիւնները, այսինքն՝ առանց անկեղծութեան ու հաւատի, միայն իր յանցաւոր ինդըր հանգստացնելու եւ հանրային վրդոված միտքը հանգարտեցնելու նպատակով: Եւ գիտէր ջատ լաւ, որ այդ ծրագրից բան դուրս չի գալու. մի կողմից լաւ էր ճանաչում մեծ պետութիւնների խոստումների արժէքը, միւս կողմից, անգամ եթէ պետութիւնները համաձայնէին էլ, ինքը չէր առիթներ կը գտնէր մերժելու: Այդպէս ինչպէ՞. Լոգանում, երբ Զիշերինը հայկական հարցը ջուրը ձգելու դիտաւորութեամբ հանդէս եկաւ. հայերին Կուրանում տեղաւորելու յանցապարտ առաջարկութեամբ: Այնտեղ էլ, այստեղ էլ հայերը խորհրդային իշխանութեան համար լոկ գործիք էին արտաքին քաղաքականութեան:

Եւ վեց տարւայ դէպքերը՝ անվերջ բանակցութիւններն ու փոխադարձ ամբաստանութիւնների կոյրերին անգամ համոզեցին, որ բոլշեւիկները երբեք ցանկութիւն չեն ունեցել յուրջ կերպով զբաղւելու հայերի վիճակով: Հէնց այն փաստը, որ թիւրքերը թոյլ չուին ստոնել Արաքսի ջուրը Սարգսրապատի դաշտի ոտոզման համար եւ Մոսկուան մտառ մտառի չիփեց իր դաշնակցի այդ վրդովեցուցիչ արգելքը վերացնելու համար՝ բաւական է համոզելու, թէ որքան անյուրջ էր Մոսկուան, երբ ընդունում էր Սարգսրապատի ծրագիրը:

Բայց կայ եւ աւելին. Երեւանում եղած ժամանակ Նանսէնին յաջողւել է համոզել այն ժամանակւայ պատասխանատու վարիչներին, որ ընդունեն Ազգ. Լիգայի առաջարկած փոխառութիւնը, որի առաւելութիւնները Հայաստանի համար ակնհերե էին: Ընդորը միայն մի քանի հարիւր հազար ոսկու մէջ չէր, այլ որ Ազգ. Լիգայի ծրագրած փոխառութիւնը կնքելով եւ միջազգային պարտաւորութիւններ ստանձնելով՝ Հայաստանը, կը մտնէր միջազգային որոշ յարաբերութիւնների մէջ եւ դրանով կը դառնար միջազգային իրաւունքի ինքուրոյն անձն: Այս ինքնին կարեւոր նաճում էր: Սակայն, Երեւանը ենթադրում է՝ Մոսկուրը կարգադրում է. Հայաստանը շահը բաւաւոր փաստ չէ Մոսկուայի համար. Ստալինը վճռական կերպով յետ մղեց Նանսէնի առաջարկները: Պատրւակը պատրաստ էր. «միջազգային յեղափոխութեան յաջողութեան» եւ «խորհրդային իշխանութեան վարկի» տեսակէտից թոյլատրելի չէր, որ Ազգ. Լիգան Որոհորդային Միութեան անհամաներում կատարէր

այնպիսի ձեռնարկներ, որոնք կարող էին ժողովրդի աչքին բարձրացնել ժրնեւի միջազգային միութեան հեղինակութիւնը...

Բայց նոյն խորհրդային իշխանութիւնը այդպէս չէր մտածում մեծ սովի ժամանակ, երբ թոյլ էր տալիս «ամերիկեան զիշատիչ իմպերիալիստներին» նպատամատոյց հոկայ կազմակերպութիւն առաջ բերել Ռուսաստանի անապան կողմերում: Հէնց ինքը Ստալինը բոլորովին այլ կերպ էր վարում այն դէպքում, երբ խնդիրը վերաբերում էր ոչ թէ Հայաստանին, այլ՝ իր հայրենիք Վրաստանին:

1918թ. ամառը, երբ Բազուն օրհասական պայքար էր մղում Նուրի փաշայի հորդանների դէմ, մի պահ բուլղեիկ-հայկական խառն զօրամասերը՝ յետ չարտելով թշնամուն՝ արշաւեցին դէպի Գանձակ ու Թիֆլիս: Ստալինը որ այդ ժամանակ Յարիցիից դեկավարում էր, ի միջի ալոց, եւ Կովկասի նւսձման գործը եւ շատ լաւ գիտէր, թէ այն ժամանակայ պայմաններում ինչ էր նշանակում «արշաւել» դէպի որեւէ երկիր, շտապ ուղի հեռադրաթելի մօտ եւ Լինինի համաձայնութեամբ գիւււած՝ հրամայեց Ստ. Ծահումեանին՝ «Գանձակից աւելի հեռու չգնա՛ք, այսինքն՝ չմտնէք Վրաստանի սահմանները»: Եւ «միջազգային յեղափոխութեան յաղողութիւնը», եւ «խորհրդային իշխանութեան վարկը» ու շահը պահանջում էին «հարածային կարգով» գրաւել Թիֆլիսը, որովհետեւ Անդրկովկասի նւսձուով խորհրդային իշխանութեան առջեւ կը բացւէին լայն հորիզոններ Աստղաւոր Ասիայում — եւ Ծահումեանը հասկանում էր այդ — բայց Ստալինը արգելեց առաջ շարժւել եւ Ծահումեանը հնազանդեց: Ինչո՞ւ: Որովհետեւ «միջազգային յեղափոխութեան» կողքին կար — եւ այժմս էլ կայ — «սեփական զանգուկոտան»՝ փոքրիկ Վրաստանի շահը:

Երկու շափի ու երկու կշռի քաղաքականութիւնը ակնհայտ է: Կարող էր Ստալինը անտարբեր մնալ, եթէ Թիւրքիան գաղանձութիւններ գործէր ոչ թէ հայերի, այլ վրացիների վերաբերմամբ, կարող էր պիղատոսեան դիրք բռնել, եթէ տարագրութեան մէջ տառապելիս լինէին ոչ թէ 700,000 հայեր, այլ վրացիներ: Ինչպէ՞ս կը վարուէր հրեմլը, եթէ նանսէնը գնը խնդրելու ո՞չ թէ Հայաստանի, այլ Վրաստանի համար: Ամենեւին չենք կասկածում, որ նանսէնը ձեռնուճախ չէր հեռանայ: Ստալինը, որ հողազուրկներով ու գաղթականներով ծանրաբեռնւած Հայաստանին մերժում է արտօնել փոխառութիւն անընտի անապատները ոռոգելու համար, անշուշտ, մի «յեղափոխական» ու «միջազգային» ձեւ կը դանէր նման մի փոխառութիւն արտօնելու Վրաստանին: Այդպէս մտածելու հիմքեր շատ կան: Յիշենք հէնց առաջին պատահած օրինակը:

Հայաստանը ուղղակի խեղդում է անհողութիւնից ու գաղթականների թշուառութիւնից, այդ մասին Մոսկուայում մտածող չկայ: Բայց բաւական էր Թիֆլիսում ձայն բարձրացնել վրացի գիւղացիների սակաւահողութեան մասին, որ Մոսկան անմիջապէս շարժէր ու թերեքի ջրջանից մի ահապին հողամաս տրամադրէր Վրաստանին, արտագաղթի համար — թերեքի ջրջանի այն հողերից, որոնք շատ մօտ են Վրաստանին, այլ եւ Սուչիի ջրջանից: Ստալինը, Ենուկիձէնեի ու Օրջոնիկիձէնեի ձեռքով ձգտում էր իրագործել Մեծ Վրաստանի ծրագիրը — դուրս քշել Սուչիի ջրջանի ծխախոտագործ հայ «կուլակներին», տեղի բնակիցները վրացի «աշխատաւորներ» եւ հետզհետէ Սուչին էլ միացնել Մուխոմի ու բուն Վրաստանի հետ: Այն, որ շյաղողէց Ժորդանիաներին ու Գվալաւաններին, գլուխ բերել կոմունիստական ձեռքերով: Եւ նոյն Ստալինը արգելում է 300,000 ոսկիի փոխառութիւն կնքել Հայաստանին՝ հայ գաղթականներին մի քանի հազար օրավար հող պատրաստելու համար... Սրան ատու՛ են խորհրդային միջազգայնութիւն եւ կոմունիստական արդարութիւն:

Իսկ ի՞նչ է Երեանի վարիչների դիրքը այս աղաղակող անիրաւութեան հանդէպ:

Ինչպէս ստացինք, նանսէնը Երեւանում կարողացաւ հասկացնել, թէ Հայաստանի համար ինչ արժէք է ներկայացնում Ազգերի Լիգայի փոխառութիւնը: Հայ բուլղեիկներից ոմանք, անշուշտ, որոշ չափով եւ վրացի կոմունիստները թթու ազգայնամտութիւնից զրգւած, մտածեցին ընդունել այդ փոխառութիւնը, եւ այդքանը արդէն բաւական էր, որպէսզի Ստալինը փոփոքր կատաղութիւնից, եւ երեւանցիները յայտարարէին որպէս «ազգայնականներ», «այլ թերքում» շտապողներ, «ազգային գիծը» խանգարողներ, «Անդրկովկասեան դաշնակցութեան շահատեսողներ»: Եւ «կուսակցական զծով» Լուկաշինները, Կարինեանները, Յովհաննիսեանները դուրս ջըպարտեցին Երեւանից եւ նրանց տեղը դրեցին մի շարք ողորմելի խրճիկներ, որոնց միակ առաքինութիւնը Մոսկուայի կամքը կուրօքն կատարելու մէջ է: Սեփական խելքից ու խոճից զուրկ, Հայաստանի ու հայ ժողովրդի համար օտար ու ատուի, երկրի կարիքներին անհողորդ ու ցաւերին անկարելից — այդ մարդիկ, ի հարկէ, այլեւ փոխառութիւններով ու նանսէնեան ծրագիրներով զբաղւելու չեն:

Այսպիսով ամենքն էլ հասան իրենց նպատակին. «մարդասէք» Եւրոպան տարիներ շարունակ «ճիգ թափեց» օգնելու հայ ժողովրդին, բայց ինչ մեղաւոր է, որ «Հայաստանի վարիչները» մերժեցին: Խորհրդային իշխանութիւնը իր տւած բոլոր խոտուածները «յարգեց», բայց ի՞նչ անի, որ Ազգ. Լիգան չկու-

տարեց ստանձնած պարտաւորութիւնները : Եւ, վերջապէս, չայց ադաւարայինակները անյողում աշխատեցին Ազգերի Լիգայի մօտ, բախեցին մեծ պետութիւնների դուռը, Մոսկա ու Երևան ադաւական դիմումներ արին. եւ մեղքը իրենցը չէ, որ ամենքը խուլ ու անդրդուելի մնացին: Ամենքը կատարեցին իրենց պարտքը, բոլորի խիղճը հանգիստ է, իսկ չայց ժողովուրդը՞...

Բայց մի՞թէ ժողովրդի մասին էին մտա-

ծում մեծ պետութիւնները, կամ Ազգերի Լիգան, կամ խորհրդային իշխանութիւնը, կամ Մարգարապատի ծրագրի անմիջական հեղինակներն ու ջատագովները: Ի՞նչ է ժողովուրդը նրանց համար, ի՞նչ են նրանք ժողովրդի համար: Ինչպէս միշտ, այս անգամ էլ ժողովուրդը ինքը պէտք է տեսնէ իր գլխի ճարը, ինքը պէտք է փնտրէ իր փրկութիւնը: Ուրիշ էլք չկայ:

Մտածումներ Հ. Յ. Դաւնակցութեան մասին

Տեղն է հիմա, որ ուշադրութեան արժենք մի շատ կարևոր պարագայ: Դաշնակցութիւնը քաղաքական կուսակցութիւն է, որ ունի որոշ Մրագիր, այդ Մրագիրը թարգման է որոշ շահերի: Հանրային շահերի պաշտպանութեան և հետադիման կուսակցութիւն լինելով՝ Դաշնակցութիւնը շահակցական կազմակերպութիւն չէ: Նա հանրային շահեր է պաշտպանում և ոչ թէ իր անդամների շահերը: «Դաշնակցական» ոչ թէ իր վիճակի բարեօրծման է հետամուտ, այլ ժողովուրդի կացութեան յեղաշրջումին: Այս պարագան պէտք է պարզորէն դիտակցել և լուսավէտ տարբերել: Մեր կուսակցութեանը անդամակցողը սկզբից արդէն պէտք է հաշուի այն մտքը՝ հետ, որ շատերին կարող է թւայ անխմատ և արտաոտոց՝ թէ նա մտնում է մի կազմակերպութեան մէջ, ուր պէտք է շարունակ տայ և կորցնէ, առանց որևէ նիւթական բարեք սպասելու. որ ոչ թէ կուսակցութիւնն է, որ նրան պիտի սնուցանէ, այլ նա ինքն է, որ պէտք է պահէ կուսակցութիւնը իր աշխատանքով, դրամով ու կեանքով: Հազարաւոր «դաշնակցականներ» թողած են տուն, դիրք և ազդեցութիւն և մտած են այս գարնուրեկի բայց հմայիչ կազմակերպութեան մէջ ու շահած են մահ միայն: Կազմակերպութիւնը շարքաշու թեան ու մահան հրաւէր է կարգում իր անդամներին և ոչ բարեկեցիկ կեանքի: Մի որոշ տեսակետով Դաշնակցութիւնը նման է նախնական եկեղեցուն: Նա կրթում է իր անդամներին գաղափարի համար մեռնելու: Կարծէք չայց մարտիրոս եկեղեցու կենդանի աւանդութիւնը անցած է մեր կազմակերպութեան, թողնելով իր պատմական պատեանը հողով մեռածներին՝ իրենց մեռելները թաղելու եւ գերեզմաններ բերելու, որ < ի են ոսկեք մարդկան և ամենայն պղծութեամբ»: Ոչինչ չի խոստանում Դաշնակցութեան իր անդամներին. ոչ դիրք, ոչ պատիւ, ոչ գանձ, ոչ հանգիստ: Եթէ երբեմն հասցնում է հանրային բարձր դիրքի՝ միմիայն նրա համար, որ այդ դիրքի վրա կատարես «դաշնակցական»

պարտականութիւնը: Երէկ պարզ դիւտը է իր կամ խմբապետ, այսօր դառնում ես նախարար, բայց չես դադարում մնալ «դաշնակցական», ենթակայ որոշ Մրագրի և Կանոնագրի: Ու երբ նկատում է թէ նոր դիրքի վրա դու փորձում ես մտածել ու գործել իբր ոչ «դաշնակցական»՝ նա քեզ գահավիճում է շարաշար, առանց նայելու հռչակիչ ու դիրքիչ: Ծառերը տեսած են հռչակաւոր անուններ, որ յորինած է Դաշնակցութիւնը իր այս կամ այն անդամի համար և դահավէժ անկումներ, որ ստեղծած է նոյն Դաշնակցութիւնը նոյն մարդկանց համար: Իր պահանջն է, որ հանրային գործերը վարեն գաղափարական տիպարներ և դործին միմիայն գաղափարի համար, առանց համարձակելու վայրկեան իսկ մտածել իրենց անձնական շահի համար: Այս պատճառով, այն դիրքերը, ուր խելայիղ մրցութեամբ դիմում են սոսկական փառասանները, «դաշնակցական» մարդու համար ճշմարիտ գողոթմաներ են. ուր ստիպւած են հանրային դիրքի պահանջները հաշտեցնել գաղափարական դաշնակցականի բարձր կոչումին և անարևատ ու համեստ բարեքին: Եւ արդէն այդ դիրքերը ստիպումով է, որ տրուած են «դաշնակցական» և ո'չ իբր մեծարանք այլ իբր պարտադրանք: Դրախ մարդկանց այն ամենը հէքեաթ կարող են թւայ, բայց դաշնակցականները դիտեն, որ այս այսպէս է:

Այս պարագան շատ բնորոշ է մեր կազմակերպութեան համար. կրկնում եմ Դաշնակցութիւնը մի շահակցական ընկերութիւն չէ, ապրուստի և բարեկեցութեան մի ձեռնարկութիւն, իր անդամների նիւթական սպահովող ու բարելաւող մի կազմակերպութիւն, այլ ուխտամաների մէկ միութիւն է սերտորէն մտերմացած, խստորէն կապւած ու տաժանորէն հակակշռուած: Եւ գարմանքն այն է, որ մի անգամ օձիք տողը այլ ևս պատում չունի: Բաւական արիկայութիւն պէտք է յանձնառութեան կապանքները խղելու համար: Այս շարքաշու թեան, անդադրում գոհարբութեան և վտանգալից ասպարէզն իր հմայիչ գեղեցկութիւնն ու-

նի, որ անմատչելի է շատ շատերին: Ամենքը հայտ են ան մտքի հետ, որ մտած են կուսակցութեան մէջ աւելի կամ պակաս դժնելու համար և ոչ թէ շահի. բայց Դաշնակցութիւնը հետամուտ է հայ ժողովուրդի դժբաղդին շահերի պաշտպանութեան: «Դաշնակցականը» պարտաւոր է զոհաբերել, որ հայ ժողովուրդը սարել կարենայ: Նա ուխտած է դուր ու դադար չունենալ, «ամէն ջանք թափել», մինչև հայ ժողովուրդն ազատուի իր ստորադաս և ստրուկ վիճակից:

«Դաշնակցական» ամենից տալը ինքն իր մէջ աշխատում է սպանել պատմական ստրկութեան յետիւ: մնացորդը և վախկոտութեան վերջին հետքերը սրբել: Դրա համար «դաշնակցականները» սովորաբար աւելի խիղախ են, քան արի, թէ և ստրութիւնն ևս անպակաս է նրանց շարքերում: Այնպէս և բարոյական այն հանդարտ քաջութիւնը, որ քառասունին է արութեան, յաճախ պակասում է խիղախին, որ քաջ է պորթիւումով: Սա ոչ թէ ժառանգական արութեան մարմնացումն է, այլ ժառանգական ստրկութեան յեղաշրջումը. ուստի յաճախ «դաշնակցականը» չի ճանաչում շատի զգացում: Բայց աւելի լաւ է խիղախ լինել զայգարնիւրի մէջ, քան թույլամտութիւն ու ստրկամիտ: «Դաշնակցականն» այսպիսով իր իսկ անձի մէջ վերակազմում է նոր հայութեան տիպարը, բարբառելով ժառանգական ստրութեան կայծերը, որ մտադոծ են անթիկում և յարձուճն ինչպիսիութեամբ խորանելով ու պիտանելով ժառանգական ստրկամտութեան վերքերը: Այս բարոյական յեղաշրջումը ամենից աւելի յատկորոշ զինն է մեր կուսակցութեան: Սասունցի Դաթիկ աւանդական տիպարն է, որ կենդանանում է «դաշնակցականի» մէջ, յեղաշրջումով մի դարաւոր մտայնութիւն: Այս յեղաշրջման ճամբին «դաշնակցականը» կորցնում է շատ անձնական շահեր և իրզում է շատ թանկագին կայտը, բայց նրա շնորհի չեն երեւում այլ կուսատները, որովհետեւ մեր կողմից իմանում է կանոնադրի պահանջը՝ «ամէն ջանք թափել», որին նա յանձնատու է դարձած, միւս կողմից կշտամբում կամ քաջալերում է նահատակ ընկերներին թանկագին յիշատակը, որ հսկում է անմարդնկերները, որ ոչ մէկ բանով պակաս էին նրանից և յաճախ շատ բռնով աւանել, և որոնք, սակայն, մեռան այգաբարի ճամբին, կուսակցութեան դրօշը թողնելով իրան: Դաշնակցութիւնն այսպիսով մի ուրոյն բարոյական աշխարհ է, ուրոյն ըմբռնումներով ու բարեբերով. որ ստեղծում ու սնուցանում է ուրոյն տիպարներ: Համեմատելք ուրիշ քաղաքական կուսակցութիւններ նրա հետ և կը տեսնէք անդիպախոր տարբերութիւնը: Սա ոչ թէ շահակից անձնիկ միութիւնն է, այլ արիացող տիպարների ընկերութիւն: Այստեղ ոչ թէ անձնական և նեկթական շահն է, որ կայտը է մարդկանց, այլ բարոյական ուխտի նոյնութիւնն է, որ դարձնում է ընկեր և Երազիր-Կանոնադրի միութիւնը՝ համընթաց: Երգործի ընթացքին, բուն իսկ մարտիկների շրջանում լինին նրանք զէնքի թէ մտքի ընկեր, որ անյնքան Երազիրն ու Կանոնադրին է գգաբուում, որքան բարոյական կայր: Դաշնակցութեան պատմութիւնն այնպէս է ընթացել, որ նա դարձնած է աւելի բարոյական տիպարներ, քան պատրաստած է «գործիչներ» բառի սովորական աւանդով: Եւ շատ անգամ այնպէս է թւում, որ

«դաշնակցական» մարդիկ առանց որևէ Երազիր և Կանոնադրի կարող են մնալ նոյն բարոյական ընտանիքը, յենամ իրենց ոգևորական կառուցումներն և դադարաբանական տիպարին, միւս ասպետութիւն պարտաստակա՞մ զոհաբերելու իրենց կեանքն ու աշխատանքը հայ ժողովուրդի բարօրութեան համար: «Դաշնակցական» տիպարների այս միութեան մէջ — որ մեր կազմական կեանքի բարձրագոյն արդիւնքն է, — Դաշնակցութիւնը դուրս է դալիս կուսակցութեան սահմանից և դառնում է ասպետական կարգ: Նրա մէջ արթնացած է և արժարժուած է վերստին հին և արի հայութեան սոսնձական առաջինութիւնը՝ «հասանել մարտնչել» միամիտ և միասիրտ և «ի վերայ աշխարհին դեմ գանձիւն իւրեանց մինչև ի մահ»: Եւ աւանդական հայ ասպետ հայտնապ կերպարանք է կարծէք, որ աշխատում է վերակենդանացնել անձնուկ «դաշնակցականը» այսօրւան դեմոստատարած հայութեան մէջ, այն ազնւական ասպետի — Մուշեղ Մամիկոնեան, — որ «գրիւ և զգիւր չէր կայր յաշխատութեան. ջանայր և ճղնէր կալ ի ճակատու դատերազմին... Ի վերայ աշխարհին կեալ և մեռանել, ի վերայ անւան քաջութեան, ի վերայ բնակ տերանց և ի վերայ բնակչաց աշխարհին... դանձն իւր զտիտանակ աննկ աշխարհին. և յանձն իւր անխաչք ի մեռանել» (Փաւստոս. Դ. 23 և Ե. 28): Եւ միւս հոյակապ սարձակ — Մանուկ Մամիկոնեան — իբրտն է կարծէք, տւած իր որդուն. — «Լինել միամիտ (հաւատարիմ), ջանալ և վաստակել, և տալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց դանձն քո» (Փաւստոս. Ե. 24). որ աշխատում են կեանքի մէջ դործ ու տիպար դարձնել Սերգաներ ու Գլորգ Զաւարճեղը՝ մթին դիւղերից և Ռոստոմներն ու Քրիստափորները՝ լուսաւոր քաղաքներից: Այս նկատումով Դաշնակցութիւնը մ'է հրաշափառ յարութիւն է հայի արութեան և մի թօթափում ստրկական շրթաների: Ժողովուրդից է նա և ժողովուրդի համար, բայց ժողովուրդը չէ: Իր դերադոյն նպատակն է ստեղծել մի հայ ժողովուրդ իր տիպարի նման, ինչպէս ինքը վերստեղծումն է հայ աւանդական տիպարի, որ խաթարում էր դարաւոր ստրկութեան մէջ: Միացեալ և Անկախ Նոր Հայաստանին պատշաճ է նոր հայութիւն. նոր հայութիւնը միայն կարող է նոր Հայաստան ունենալ. և Դաշնակցութիւնն աշխատում է այդ նոր հայի տիպարն ստեղծել նոր Հայաստանին հասնելու համար:

Եթէ ամէն մի «դաշնակցական» լրիւ գոհացում տայ Կանոնադրի հինգ պահանջներին միաժամանակ, կարող են կարծել, որ այն գէշագում մենք կունենանք միօրինակ տիպարների մի ձանձարալի բազմութիւն: Կրկնելով միևնոյն տիպարը, այդ միօրինակութիւնը թւում է թէ պէտք է իշխէր ժամանակի և տարածութեան մէջ, այսինքն ամէն տեղ նոյն տիպարները և ամէն ժամանակ նոյն տիպի մարդիկ: Սակայն, այդպէս չէ իրօք. Դաշնակցութիւնը բազմազան տարբերութեանց զուգահեռ է: Դաշնակցականները նման տիպարներ են, ո՛ւր և ե՛րբ հանդիպեն, բայց նոյն տիպարները չեն: Ինչպէս եռանկիւնները եռանկիւնի են ամէն տեղ, բայց

կան մեծ ու փոքր, սուրն ու բութը, ուղղածիրն ու կորածիրը: Ամէն մի դաշնակցական շարժում է իր տիպարի ուղղութեամբ, բայց ոչ ամենը նոյն արագութեամբ և նոյն տեղին են հասած: Ամէն մէկն աշխատում է ձածէն ջանք թափելը, բայց ոչ ամենը նոյն գործերի մէջ և ոչ նոյն չափով: Իր էութեան մէջ անդամ — իր Ծրագրի և Կանոնագրի մէջ — Դաշնակցութիւնն անշարժ կուսակցութիւն չէ: Ոչ միայն իր գործերն են փոխուում, այլ և ինքը իրր գործող: Քառասուն տարւայ ընթացքին ոչ միայն մարդիկն են փոխուած, այլ և նրանց ճմտութիւնները: Այդ փոփոխութիւնը բնական է նաև անհրաժեշտ: Այդ փոփոխութիւնն է Դաշնակցութեան ներքին պատմութիւնը, անկախ նրա գործերից, որ նրա արտաքին պատմութիւնն են կազմում: Փոփոխելով միասին՝ Դաշնակցութիւնը մտնում է մի կուսակցութիւն և իր բնոյթով նոյն կուսակցութիւնը: Միտածամանակ նա ամենից աւանդապահ կուսակցութիւնն է և այդ աւանդութեան մէջ է իր մրուութեան ու նոյնութեան գաղտնիքը: Նա իր անփոփոխ չի մնում, որ հինանայ և անպէտքանայ հանրային կենսի զեկակարութեան համար և այդ իսկ պատմապատմութիւնն են և այդ աւանդութեան մէջ է իր մրուութեան ու նոյնութեան գաղտնիքը: Նա իր բնոյթով մնում է նոյնը, բայց յարմարում է կենանքին: Եւ որքան խստորէն աշխատում է հաւատարմով մնալ իր անանդութեանը, այնքան լրջօրէն յարմարում է կենանքին: Նա նման է մարդկային լիցիին: Ամէն ոք աշխատում է ճշտօրէն խօսել իր լսած լիցուն և հարգապատ մնալու ճիշտով՝ փոխում է լիցուն, ու մի օր աննուն էնք ճիշտար դարձած է աշխարհաբար, թէ և 1500) տարի բոլոր գաւակներն աշխատած են իրենց մօր լիցուն խօսել հաւատարմութեամբ: Երկուսն էլ հայոց լիցու են, բայց տարբեր են արդէն. նման են, բայց նոյնը չեն: Այն է բնական ճամբան ամէն մի բարեխղճութեան: Ամէն փոփոխութիւն ոչ թէ բեկումն է արտեղ, այլ հոսում. ոչ յեղաշրջում, այլ բարեշրջում: Ձգտելով յեղաշրջել հայոց կենանքի պայմանները, Դաշնակցութիւնը ներքուստ բարեշրջում է. ուստի նա մնում է մի և նոյն, թէ և փոփոխում է շարունակ: Կանոնագրի հինգ պահանջները շարունակում են մնալ պարտադիր, բայց գոհացում են տարբեր եղանակով ու բովանդակութեամբ:

Այս երևույթը ընկերաբանական է և արժէ կանգ առնել իր մեկնութեան վրա: Այս ինչպէս է, որ Դաշնակցութիւնը մնում է նոյնը, բայց և փոփոխում է շարունակ՝ յարմարելով կենանքին ու միջավայրին: Հիմնական պատճառը իր կատարած գործն է: Միշտ հաւատարմով իր Ծրագրին ու Կանոնագրին՝ Դաշնակցութիւնը յղանում ու կատարում է գործեր, որ իր համոզումով տանում են դէպի Ծրագրի իրացումը: Անկախ ձեռնարկի իջից — յաջող կամ անյաջող — այդ գործի համար մշակած մասնաւոր ծրագիրն ու որոշումները՝ գործի վախճանին՝ դառնում են աւելորդ. նրանք յղացումներ ու միճիտներ չեն այլևս, այլ իրացած փաստեր: Այդ իրացած փաստերի հետևանքով փոխում է կացութիւնը: Կենանքի մէջ ստեղծում է մի փաստ, որ առաջ չկար. և կուսակցութիւնը կատարած է արդէն մի գործ, որ առաջ չուներ: Նա հիմա մի որոշ գործ կատարած

կազմակերպութիւն է: Ընկերները հիմա ունեն մի գործի փորձառութիւն, որ առաջ չուներ: Ուրիշ ընկերներ աջակցած են արդէն մի որոշ գործի, որի մասին առաջ լուր իսկ չուներին: Եւ շրջակայքում, որ առաջ մի որոշ վերաբերում ունէր դէպի կուսակցութիւնը, այս նոր գործից յետոյ փոխում է իր վերաբերումը դէպի լուր կամ վատը, նայած թէ կատարած գործը բարիք է համարում թէ չարիք: Գործից չափող ու տուժողը տարբեր վերաբերում են մշակում դէպի գործողը: Մի խօսքով փոխում է կացութիւնը ներքուստ և արտաքուստ. կուսակցութիւնն՝ իր գործով, որ նոր դրուող է դառնում իր հին պատմութեան, գործողն՝ իր ձեռք բերած փորձառութեամբ. աջակից ընկերներն՝ իրենց օժանդակութեամբ, շրջակայքին՝ իր վերաբերմամբ:

Ձեռնարկում է հերթական գործը Ծրագրի իրացման համար. կազմակերպում է նոր ձեռնարկը, բայց արդէն տարբեր են պայմանները ներքուստ և արտաքուստ: Թէ յաջողոյն ու որոշողը և թէ գործադրողը փոխած են արդէն, նրանք նոյն մարդիկն են ուղեցէ, բայց արդէն փորձառու են: Գործի ծրագիրն ու որոշումները նոյնը չեն, ինչ որ առաջ, քանի որ ձեռնարկն ինքը նոր է և տարբեր, բայց հին փորձառութիւնն ազդում է նոր ծրագրի և որոշումների վրա: Սրանք նոր մտայնութեան արդիւնք են, որ ինքն արդէն արդիւնք է նոր փորձառութեան: Կուսակցութիւնն իրան զգում է աւելի փորձառու, քան նախորդ գործի փամանակ, ուստի աւելի ինքնավստահ է կամ աւելի զգուշաւոր իր նոր որոշումների մէջ, նայած թէ նախորդ գործը յաջող թէ անյաջող ելք է ունեցած: Նոյն ելքէ հետևանքով՝ նոր ծրագիրը կազմում է աւելի լայն կամ աւելի նեղ շափերով: Մի խօսքով՝ կուսակցութիւնը նոյն է, բայց կուսակցականը փոխում է. իր նախորդ գործը մի փաստ է արդէն թէ՛ հանրային կենանքի մէջ և թէ՛ կուսակցականի և հանրութեան գիտակցութեան մէջ, եթէ նախորդ ձեռնարկը մի ահարկում էր, այսօր ահարկածը չկայ այլ ևս: Նոր գործի պայմանները փոխած են արդէն: Եթէ ահարկածը խուզարկութիւն էր կատարում շարունակ՝ նրան փոխարինողը զգուշաւորում է. դրա հետևանքով դէնքի փոխադրութիւնը դիւրանում է: Իսկ եթէ նրբեկն աւելի դաժան է՝ հալածանքները խստանում են, կացութիւնը վատթարանում է, ընկերները բանտարկւում են, ոմանք նահատակում են, ուրիշները խուսափում են. բունում են մասնիչներ և այլն և այլն: Այսպէս ուրեմն գործերի հետևանքով փոփոխում է կացութիւնը — գործիչներն ու շրջակայքը, փորձն ու մտայնութիւնը և դրա հետևանքով նոր որոշումներ են կայացում և գործելու նոր ճամբաներ գծում: Բայց հիմնականը մնում է նոյնը այս դէպքում: Ծրագիրը ու Կանոնագիրը փոփոխութիւն չեն կրում. փոխում են միայն մարդիկ, որոշումներն ու ձեռնարկները: Կուսակցութիւնը նոյն է իր Ծրագրով ու Կանոնագրով, բայց փոխում են իր որոշումները, գործերն ու անդամները:

Ոչ միայն մենք ենք, որ փաստեր ստեղծելով ազդում ենք մեզ և ուրիշի վրա, այլ և ուրիշ միջավայրերում ստեղծում են փաստեր, որ ազդում են մեզ ու մեր միջավայրի վրա: Ծագում է համաշխարհային

պատերազմը՝ ոչ մեր կամքով ու որոշումով: Ստեղծուած է անկախ Հայաստանի մի համեմատ կորիզ: Քոնսուած են միջկապի տարածանքը: Գիտում են գործերն ու գործիչները: Նոյն «գաղանկացական» մարդիկն են, բայց պէտք է ուրիշ գործեր յայնան և ուրիշ որոշումներ կայացնեն: Հին փորձառութիւնն օգտագործուած է նոր յղացումների համար, հին գործիչները՝ նոր գործերի համար, կատարած գործերն ազգում են մշակուող ծրարքների վրա: Հիմնական ծրարքի պահանջները հիմա մեղմից է կախուած գործադրել: Մի մասն իրանում են անմիջապէս, միւս մասը հերթի են ապաստում: Բայց ստեղծուած կացութիւնն այն չէ, որ ակնկալած կամ նախորդած էր Մրազիբը: Նա պահանջուած էր դաշնակցականորէն միացած Կովկաս՝ Ռուսաստանին դաշնակցօրէն միացած: Բայց Ռուսաստան չկայ, որ Հայաստանը նրա հետ դաշնակցօրէն միանայ, և ոչ Կովկաս դոյութիւն ունի, որ Հայաստանը դաշնակցաբար միանայ նրան: Թաթար ու վրացի անկախ միւսուորներ են դարձած: Նոյն Դաշնակցութիւնն է, նոյն Մրազիբով ու Կանոնագրով, բայց պայմանները փոխուած են: Բազմաճապար ցանկացածներ — դաշնակցական, համակիր, գործակից, սոսկական հախիբ՝ առանց կուսակցական պիտակի՝ բոլորուած են Դաշնակցութեան շուրջը և գործուած են նրա ղեկավարութեան տակ: Մոտենք են առնուած նոր տեսչեր, բացուած են նոր հորիզոններ այն բարձունքից, ուր հասած է հայութիւնը պատմական դէպքերի ախիբներով վերացած, ինչպէս մէկը, որ հասնում է մի լեռան գագաթ: Կատարուած գործերը վստահութիւն են ներշնչում գանձաւորներին և վարիչներին, կացութիւնը հզօր թելադրանքներ է անում և կեանքի անդիմադիր բերումով փոփոխութեան է ենթարկուած ամենից աւելի անփոփոխելին — կուսակցութեան Մրազիբը: Ինքնավար, դաշնակցաբար Կովկասին և նրանով Ռուսաստանին կապուած Հայաստանի զարգացարք միջազնու է մարդկանց գիտակցութեան մէջ և նրան փոխարինում է Միացեալ և Անկախ Հայաստանի զարգացարք: Փոխուած է կուսակցութեան դերն ու դիրքը հայ կեանքում ներքուտ և աշխարհի մէջ՝ արտաքուտ: Մշակուած է մի նոր Կանոնագիր, որ սահմանում է պետական մարմինների և կուսակցութեան յարաբերութիւնը: Մրազիբը դառնում է զրդիչ բազմատեսակ գործառնութեանց ու ձեռնարկների: Նոյն կուսակցութիւնն է դարձեալ, բայց արդէն փոփոխ ծրարքով, Կանոնագրով ու գործերով: Այսպէս ուրեմն կատարած դարձր ինքնին սկզբունք է փոփոխութեան և վերակազմութեան:

Բայց ինչն է, սակայն, որ այս բոլոր փոփոխութեանց մէջ կայուն է պահուած կուսակցութիւնը և կազմակերպութիւնը — դաշնակցական տիպարների նոյնութիւնը նախորդ գործիչների համեմատութեամբ: Անկախ գործերի տեսակից ու շափից՝ դաշնակցականները մտած են նոյն տիպարի մարդիկ, նոյն բարոյական կանոնները, աշխատանքը հայ ժողովրդի անկաշտ և անձնէր սպասաւորներ, որ ենթարկու են նոյն Կանոնագրին և հետամուտ են նոյն Մրազիբ իրացման: Կուսակցութիւնը փոփոխած է իր Մրազիբի մի մասը և յաւելում բերած է իր Կանոնագրին, բայց ասպետական կարգի բարոյական խարխիւնները նոյն են մնացած և

անկամների տիպարները իրենց բարոյական էութեամբ անփոփոխ են տեսպէս: Ըստ էութեան նոյն Դաշնակցութիւնն է ամէն տեղ և նոյն դաշնակցականները, որ «ամէն ջանք թափում են» Կանոնագրի հիւղ կէտերին գոհացում տալու:

Կազմակերպական փորձառութիւնը, որ ձեռք է բերած համեմատ խմբերի և մարմինների մէջ, դառնում է գորաւոր աղղակ հանրային մեծ շարժումներ վարելու գործում: Եարժուաները փոխուած են իրենց ընթացքը, դառնում են նպատաւոր կամ աննպատա, բայց կուսակցութիւնն իր էութեան մէջ մնում է նոյնը և «գաղանկացական» հաւատարմօրէն կրկնում է նախորդ տիպարների հիմնական գծերը: Այս տեսակէտով ոչ այնքան գործերն են կարեւոր, որքան կազմակերպութիւնը և կան օրեր, երբ պէտք է գործերը լքել, կազմակերպութիւնը պահելու համար: Կարճատևներին կարող է թլալ, որ սա կր նշանակէ միջոցն աւելի գերադասել, քան նպատակը, բայց իրական կեանքն և ուղիղ դատումը մեզ տարբեր բան են ասում: Կազմակերպութիւնն ունենալով միշտ կարելի է գործեր կատարել, բայց կազմակերպութեան գոյութիւնը վստահելով, Մրազիբը կը մնայ անտէր և անտիրական և հանրային գործերը կը ստանան «քնակալ» ընթացք: Եւ ճիշտ այս է պատճառը, որ հայ ժողովուրդի ներքին և արտաքին թշնամիները գիտարարութիւնը թէ անկողնակցաբար ամէն կերպ աշխատում են ջաջալայել Դաշնակցութիւնը, որովհետեւ լաւ գիտեն թէ քանի նա կայ, միշտ կարող է «գործեր» ստեղծել, իր ծրարքին հետամուտ և Կանոնագրին ենթակայ, իսկ եթէ նա վերանայ՝ հայութեան կեանքը ցրիւ և անկազմակերպ գործերի մի պլոտը թուր կը դառնայ, ուր ամէն ոք կարող է իր ուզած ձուկը որսալ:

Այսպիսով Կանոնագրի հինգ պահանջները, որ առաջին շառք թուում են այնքան համեմատ ու հասարակ իրօք մեծաթիւք են ոչ միայն կուսակցական այլ և հանրային տեսակէտով: Եւ այդ պահանջների ամենօրեայ կատարումը, որ ոմանց թուում է աննշան ու տաղտկալի, իրօք այն մտրճն է, որ դարբնում է կուսակցութեան պողպատը, դարձնելով նրան հատու գէնք ընկերային պայքարների մէջ: Այդ պահանջներին հաւատարմօրէն գոհացում տալով է, որ կուսակցութիւնը մնալով միշտ նոյն՝ ենթարկուած է արբեւանոր փոփոխութեանց և տեսաբար յարմարելով կեանքին՝ չի գուլանում ու ժանկատում իսպաղ օրերին:

Այս տեսակէտով ամէն մի «գաղանկացական» կոչուած է նոյն գերը խաղալու կուսակցութեան մէջ, ինչ որ նրա հիմնադիրներն ու յետագայ պահմարդները Մի խումբ նոյն տեսչերն ունեցող մարդիկ ժամանակին մշակած են մի քաղաքական-սոստանական յեղաշրժման իրագործելի Մրազիբ: Իրենց Մրազիբ իրացմանը հասնելու համար նրանք կազմած են մի Կանոնագիր և հերթական ձեռնարկների համար հանած են որոշումներ, որամպարած են շատ համեմատ դրամայն միջոցներ և աշխատած են իրենց զազափարները տարածել և կուսակիցներ գտնել, անձամբ «ամէն ջանք թափելով» իրենց Մրազիբ, Կանոնագրի և որոշումների իրագործութեան համար, կանգ շահնելով մինչև իսկ մահան ատըն: Նոյնը վիճակուած է անելու և յետագայ անդամներին: Ընկերներ

Նրանք գտնում են խմբի մէջ, որոնց թիւը պարտաւոր են աւելացնել։ Ծրագիրը նրանք գտնում են պատրաստ, բայց որ կոչւած են փոխելու՝ յարմարելով կեանքի բերումին։ Ենթակայ են մի կանոնադրի, որ կարող են փոփոխութեան ենթարկել՝ ընկերների հետ համախորհուրդ, կատարում են որոշումներ, որ իրանք են հանած կամ իրենց ընկերները՝ համախորհուրդ իրանց հետ։ Կուսակցական տուրք են վճարում և պարտաւոր են «ամէն ջանք թափել» իրացնելու իրենց Ծրագիրը, Կանոնադիրն ու որոշումները։ Այսպիսով ոչ միայն ասանդ են ստանում, այլ և աւանդ են ստեղծում նախորդները՝ պէս։ Ոչ միայն հաւատարմութեամբ պահում են աւանդը այլ և հաւատարիմ մնալու համար փոփոխում են շարունակ։ Այսպիսով, ըստ էութեան, կրկնում են ոչ միայն դաշնակցական տիպոյտները, այլ և նրանց պարտականութիւնն ու դերը կուսակցութեան մէջ։ Դաշնակցութեան անդամակցելի, «դաշնակցական» կոչումն իրաւամբ ասնել իր վրա նշանակում է աշխատել, որ ընկերային զորաւոր ազդակը — Դաշնակցութիւնը —

սեպակա մնայ զորաւոր՝ իր ընկերային յիզափոխական դերը կատարելու մեր կիսաբուժ։ Ամէն մի «դաշնակցական» կոչւած է Սասունցի Դաւթի նման «թուր կայծակին» շարժելու Մարայ Մելիքի դէմ։ Նա պարտաւոր է հողալ թէ իր բաղկի զորութեան մասին՝ բարոյական տիպարը կշակելով իր մէջ և թէ կայծակի թուրի զօրութեան մասին՝ «ամէն ջանք թափելով», որ նա չզուլանայ և շժանդոտի անսուղի և անվայել դործերի մէջ, այլ միշտ սրբած ու պատրաստ՝ ասպետական անշահախնդիր ձեռքի մէջ, օրհասական պայքարների օրերին՝ իջնի թափով ու դարկէ սարսափով...

Ահա թէ ինչ են թելադրում Կանոնադիր Երկու չոր ու ցամաք յուշածները։

Ն. ՀԱՆԳՈՅՑ

Թուուցիկ յուշեր Գրիտափորի կեանքից

II

Գրիտափորը չէր եկած Բազու կուսակցական ընթացիկ խնդիրներով զբաղելու համար։ Եկել էր արտասահմանից Կովկաս յատկապէս «ՓՈՒՅՈՒՆ» զործերով։

Իսկ միջոցներով դրամ հանգանակելու գործին զէմ էր Գրիտափորը, բայց երբ Պատասխանատու Մարմինը, հակառակ իր ձայնին, որոշում տուց, նա, ի հարկէ, ենթարկեց միջամասնութեան որոշման։ Բայց, ինչպէս ինքն էր պատմում չափազանց զայրացած և կըշտամբանքով, ընտրւած մարմինը մօտ 2-3 տարի մասը մատին չլսեց, իսկ որոշ գործեր, որոնք պիտի կատարէին այդ գումարներով, բոլորովին կանգ էին առել, Գրիտափորը ստիպւած իմէր գործի անցաւ, որպէսզի յարգած լինի կուսակցութեան որոշումը, և այդ նպատակով էլ ժընեւեց մեկնեց Կովկաս։ Սախայն հէնց սկզբից, գործը գնաց չափազանց անյոջող...

Գործը բոլորովին նոր էր։ Անտեղեակ Կովկասում գտնւած ուժերին՝ Գրիտափորը շրջապատել էր իրեն բազմապիսի, միմեանց անհամապատասխան և գործի համար միանգամայն անպէտք մարդկեցիկով։ Այդ իսկ պատճառով, գործի դեռ սկզբնական շրջանում, Շուշում, ձերբակալւեցին Գր.Վարդանեանը (Մարդիս Բարսեղեանը), ուսանող Արսէն Ամիրեանը (Մուսեանը) և

Սմբատ Մարգարեանը։ Եթէ ամբողջ գործը չբացւեց և չզարձաւ հասարակութեան սեփականութիւն, այդ էլ՝ շնորհիւ այն ժամանակեայ կուսակցական խիստ դաւանապահութեան և կովկասեան ոստիկանութեան անկազմակերպ վիճակին։

Գրիտափորը ստիպւած էր անմիջապէս փոխադրել նորից Բազու և այս անգամ, նախկին սխալները չկրկնելու համար, խիստ դադողնապահութեամբ անձամբ էր վարում գործերը։ շէր խորհրդակցում ոչ միայն երիտասարդ ուժերի, այլ մինչև իսկ իր մտերիմ Լ. Թաղէտեանի հետ, որի խիստ դադողնապահութեան վրա ոչ մի կասկած չուէր։ Լևոն Թաղէտեանից զաս Բազուում ապրում էին Գրիտափորի միւս ջրով ուրբիները — Եղբ. Յովնաթանեաններ, վերին աստիճանի համեստ և ազնիւ արհեստագործներ, որոնք մեծ պաշտամունք ունէին ղէպի Գրիտափորը։ Սրանց ազգականն էր Մատթէոս Յովհաննիսեանը*), զինուորապետութիւնը վերջացրած մի Երիտասարդ՝ բարձրահասակ, կայտառ, եղնիկի աչքերով, իր սեւ, անխնամ օձուրդով, թաւ յօնքերով, կոպիտ, անվարժ շարժումներով միշտ հետաքրքրութիւն էր գարթեցնում ղէպի ինքը։ Գրիտափորը, որին նա «քեռի» անունով էր մե-

*) Շարունակելի № 10-ից։

*) Այս այն Մատթէոսն է, որի յուշերը տպւում են «Հայքնիք» ամսագրում։

ծարում, նրա դերագոյն սրբութիւնն էր, Քրիստափորի խօսքը նրա համար պատգամ էր...

Յիշում եմ, թէ ինչպէս մի օր Մատթէոսը շատով ներս մտաւ և «Բեռուց» հարցրէր. «Բեռին» իրեն կանչել է, ինքը չգիտէր, թէ ինչի՞ համար... Քրիստափորը դրողած էր միւս սենեակում: Մատթէոսը երկիւղածութեամբ մտաւ նրա մօտ և մի ջանի բուպէից դուրս եկաւ վալյուն ու կենտրոնախ աչքերով և մտաւ բարեարաւ ինձ՝ յայտնելով, որ մի ջանի ամսով պէտք է դնայ իրենց դիւղը: Ուրախ և ինքնագոհ հետադարձ: Շատ ուշ միայն պարզեց ինձ համար, որ Մատթէոսը ոչ թէ էջարեանի դիւղն էր դնացել, այլ Մոսկւա:

Որչա՞ ժամանակ անցած, Մոսկւայում, օրը ցերեկով, հայոց եկեղեցու բակում, հարիւրաւոր մարդոց ներկայութեամբ սպանեց մեծահարուստ ժամհարեանը: Այն ժամանակայ հայ, բայց մասնաւոր օտար մամուլը լիքն էր սպանութեան մանրամասնութիւններով, ահարկիչի նկարագրութեամբ. նրա յաղթական կեցածքը, յանդուգն յայտարարութիւնը, թէ ինքը անձնական ոչ մի թշնամութիւն չունէր ժամհարեանի վերաբերմամբ, որ այդ սպանութիւնը կատարել է երկար ժամանակ խորհելուց յետոյ և այդ նպատակով էլ եկել էր Մոսկւա, որովհետև ժամհարեանը, հակառակ սուած ազնիւ խօսքին, ոչ միայն չվճարեց իր խոտացած գումարը յողուտ տանկահայ ժողովրդի դատի, այլ և ամբողջովն մատնութիւններ կատարեց. հայ ժողովրդի արդար վրէժն է, որ ինքը հանց այդ մեծահարուստից, որը մի. ջանի դիւղերն էր ընթացքում վատնում է շատ աւելի, քան իրենից ուղած գումարը:

Սպանութիւնը շատ շատերի, մասնաւոր հարուստների համար դարձել էր միանշամայն խորհրդաւոր. ոչ ոք չգիտէր, թէ ո՞վ է այդ ահարկիչը և որտե՞ղից է եկել, որովհետև Մատթէոսը յամառօրէն ծածկում էր իր ինքնութիւնը: Այս հանդամանքը կատարելու խուճապի էր մատնել բոլոր նրանց, ովքեր գիտակցում էին, թէ հայ լինելով հանդերձ՝ չեն կատարել իրենց պարտականութիւնը և թէ անա մօտեցում է հատուցման ժամը...

Պէտք է ենթադրել, որ Քրիստափորը որոշել էր օգտագործել այդ դրութիւնը, որովհետև նոյն օրերին Բաղու եկաւ մի անձնաւորութիւն՝ յանձնարարած Բաթումի Կ. Կոմիտէից, որին դիմել էր Քրիստափոր՝ խնդրելով ուղարկել մի տանկահայ դաշնակցական*): Մի երեկոյ ինձ ներկայացաւ Քրիստափորի հասցէն ստանալու համար, Բաթումի Կ. Կոմիտէի նամակով, առիական և եւրոպական տարօրինակ ու մաշած հագուստների խառնածքով մի երկտասարդ, որի արտաքինը այնքան ճնշել էր, որ երկար տասանութ էի այդ մուսայիկի կերպարանքով մարդուն տանել Քրիստափորի մօտ: Քրիստափորը ընդունեց նրան նոյնպէս բաւա-

կան դարմանքով, կարգաց Բաթումի Կ. Կ.—ի նամակը և ուսից մինչև վրէժս նայելով նրան խօսու հայեացքով, իր ակնոցների տակից, այդպէս նայում էր, երբ մի անահորժ քան էր լուսւ կամ տեսնում: Ու հարցրեց.

- Անունդ ի՞նչ է:
- Միհրան:
- Գիտե՞ս ինչի համար են ուղարկել ջեղ:
- Ոչ:

Եւ զստնայով ինձ կրկնեց, թէ Միհրանը կը մնայ իմ մօտ և այստեղ էլ կը քնի, իմ սենեակում: Գիշերը կը խօսնեք ինչ որ պէտք է, վաղը առաւօտեան կասեմ, թէ ինչ պէտք է ստել:

Միւս օրը Քրիստափորի կարգադրութեամբ Միհրանը բոլորովին կերպարանափոխեց: Երբ մի առաջնակարգ հաղուստովանուոի մօտից դուրս եկանք, Միհրանը դարձել էր մի կատարեալ ճշնտրվէն: Երբ վերադարձանք, Քրիստափորը բոլորովին չէր հուսաւորւմ, թէ սա Միհրանն է, այնքան փոխւած գտաւ նրան:

Քրիստափորի կարգադրութեամբ Միհրանը անմիջապէս պիտի մեկնէր Թիֆլիս և ներկայանար Մ. և Ա. մեծահարուստներին, որոնց պիտի յանձնէր «Փոթորիկ»-ի կողմից ուղարկւած նամակները: Դրանից զատ ուրիշ ոչ մի դեր չունէր: Մեայն պիտի աւելացնէր, եթէ պէտք լինէր, որ յատկապէս եկել է Պոստից այդ նամակները նրանց յանձնելու համար, և այսօր և եթ վերադառնում է: Այդ յանձնարարութիւնը կատարելուց յետոյ, անմիջապէս պիտի վերադառնար Բաղու գեղուցանելու Քրիստափորին:

Չորրորդ, թէ հինգերորդ օրն էր, երբ Միհրանը վերադարձաւ Բաղու: Քրիստափորը զոհ էր, որ Միհրանը յաջողութեամբ կարողացել էր կատարել իր վրաց դրած պարտականութիւնը, և կարգադրեց, որ հնչե նոյն օրը վերադառնայ Բաթում իր գործին:

Երեկոյեան դէմ էր, երբ ես մտայ Քրիստափորի մօտ: Նախասենեակում լուսւ էր նրա բարձր ձայնը: Սենեակի մէջուցը կարծում աչքերով, անկարծ մացերով կանգնած էր Քրիստափորը և ստեղծի ծանր յանդիմանական խօսքեր էր թափում Միհրանի դիմին, որ ընկճած, ոչնչացած, չգիտէր ինչ անել: Մէկ և կէս տարի Քրիստափորին հարաբեր թէ տեսնում էի սովին օր, տեսել էի նրան Արախութեան, տարութեան և յուզմունքի ժամերին, բայց այդպէս յուզած և այլալուսւ երբք չէի տեսել: Ինձ համար պարզեց հետեալը: Միհրանին կայարան ուղարկելուց յետոյ, Քրիստափորը, յանկարծ, ինչում է, որ որոշ յանձնարարութիւններ պիտի անի Թիֆլիսի վերաբերմամբ և անմիջապէս մարդ ուղարկելով՝ յետ է կանչում Միհրանին՝ պատկերելով, որ թողնէ այդ գնացքը և յաջորդ գնացքով մեկնէ: Միհրանը արդէն տեղաւորւած է լինում գնացքում, երբ նրան զտնուում և բերում են Քրիստափորի մօտ: Եթէ ճանապարհորդները նշանակւած գնացքով չէին մեկնում, այն ժամանակայ օրէնքով, կայարանում պէտք է որոշ ձևականութիւն կատարէին, որպէսզի տոմբը չկորցնէր իր արժէքը: Քրիստափորը մտահոգւած, թէ Միհրանը անձնաօթ կը լինի այդ օրէնքներին, ուզում է տեղեկանայ, թէ արդեօք կատարե՞լ է այդ ձևականութիւնը և երբ առնում է տոմբը, զարմացած նկատում է, որ Միհրանը գնած է եղել

*) «Փոթորիկ»-ը գործում էր յանուն վիշապի (Պոսի) Կ. Կոմիտէի. ստացած գումարները պիտի գործադրէին ցուցակով անհապիկներին վրա վիշապում և ծովափնայն քաղաքներում, ուստի և դիմումներ կատարող անհապիկ յօսուս էին իբրև Պոսից եկամտեր և վիշապի Կ. Կոմիտէի անունից:

ատաղին կարգի տոմս փոխանակ երբորդ կարգի, ինչպէս վարւում էին անխտիր մեր բոլոր ընկերները և, առհասարակ, դեմոկրատական ըմբռնում ունեցող մարդիկ: Անա այդ տոմսն էր Գրիստափորի աղպիսի փոթորկոտ գալթոյթի առիթը: Իմ ներկայութեամբ Միւրանը աշխատում էր արդարանալ, թէ ինչը մեղաւոր է, թէ ինչընէ է երբորդ կարգի տոմս, իսկ տոմսավաճառը սխալմամբ տւել է առաջին կարգի, և այդ բացարձակ սուտը աւելի էր գալթացնում Գրիստափորին, որը դառնալով ինձ հարցնում էր գալթացած, թէ հնարաւօր է արդեօք այդպիսի թելերիմացումներն: Ես չէի կարող ստել և չպաշտպանեցի Միւրանին, որովհետև երբորդ և առաջին կարգի տոմսերը բոլորովին այլ տեղեր էին վաճառուում և պարզ էր, որ Միւրանը փոխանակ իր արածը անկեղծօրէն խոստովանելու, ստում էր: Գրիստափորը գալթացած պատուեց ատաղին կարգի տոմսը, դուրս վաճուեց սենեակից Միւրանին և ինչոյց ինձ երբորդ կարգի մի տոմս դնել և անմիջապէս ճանապարհ դնել, որպէսզի այդևս չերևայ իր աչքին...

Այդ դէպքը այնպէս էր ազդել Գրիստափորի վրա, որ նա զանազան ժամանակներ գալթացած կրկնում էր Միւրանի այդ «բաջադրծութիւնը»:

— Տեսա՞ր այդ ողորմելուն, իշո՞ւմ ես նրա ցնցորտները: Հազնուեց զարդարուեց կուսակցութեան հաշին, այդ բաւական չէ, այժմ էլ համարձակուած է ատաղին կարգով ճամբորդել: Դեռ ևս մի շնչին դործ էր կատարել, միայն մի նամակ էր տեղ հասցրել, հասպա եթէ փոքր է շատե՛ր աչքը գարնող դործ կատարել, կը խեղդէ՞ մեզ, կը խեղդէ՞ կուսակցութիւնը*):

Եւ պատմում էր, որ թէ ինչը և թէ իր ընկերները՝ Սիմոնը, Ռոստոմը և ուրիշները երբեք երկբորդ կարգով չեն ճանապարհորդել, այլ միշտ երբորդով:

— Մի անգամ միայն բացառութիւն է եղել իմ ամբողջ կենսելի մէջ, պատմում էր Գրիստափորը, երբ Թիֆլիսից դալիս էինք Գանձակ, երբ ես ստիպւած էի գիշերել ուրիշներ թախանձանքին, որոնք նոյնպէս դնում էին նոյն պնացքով և որոնց հետ անհրաժեշտօրէն պիտի լինէի և ես:

Այս ինչը ըստ ինքեան փոքրիկ դէպքը հաւանօրէն չեն կարող ըմբռնել մեր երիտասարդ ընկերներից շատերը. այսպիսի խիստ վերաբերմունքը առաջ էր դալիս գլխաւորապէս ոչ թէ խնայողութեան ըմբռումից, այլ որ յեղափոխականը հեռու պիտի լինէր քաղքեցի, շույն և շքեղ կեանքից, յեղափոխականը պէտք է լինէր ոչ միայն արտաքին ձևերով դեմոկրատ, այլ և իր էութեամբ, այլապէս նա արժանի չէր յեղափոխական լինելու. գործով և ոչ խօսքով պէտք էր սպացուցանել, որ յեղափոխականները ժողովրդի հետ են և ժողովրդի համար են աշխատում. այս է եղել մեր կուսակցական

ըմբռնումը և այն անհասկացողութեան դէմ էր, որ այնքան յաճախ և արգարացիօրէն գալթանում էին մեր հին ընկերները, որոնք ոչ միայն խօսքով, այլ և իրենց ամբողջ կեցածքով ու կեանքով մտային խակական դեմոկրատներ և երբեք չդաւաճանեցին իրենց բարձր վարդապետութեան:

Գրիստափորը սպրդում և կլանւած թէ կուսակցական և թէ «Փոթորիկի»-ի դործերով, իր սպրդուտը Նոգալու համար ծառայում էր ճիւղաքարդիւնաբերողների խորհրդին՝ մէջ և շնայելով այդ բազմակողմանի աշխատանքներին՝ միաժամանակ զբաղւած էր և Պոլսի գործի համար ընկերներ ճարելով: Ենթադրում եմ, որ Պոլսի գործի ամբողջ նախադրել, ինչպէս և իր մասնակցութիւնը այդ գործի մէջ վերջնականապէս ձևակերպել է բազում: Ասում եմ այս ենթադրաբար, որովհետև այդ բոլորի մասին բացի անմիջապէս մասնակցողներից, միանեցը ոչինչ չգիտէին կամ ենթադրաբար կուսում էին, որ ծովափնեայ բաղաճներում և դիւտաւորապէս Պոլսում որոշ քաներ պիտի կատարւէին, սակայն, թէ ի՞նչ, գուցէ և իրենք մասնակցողներն էլ չգիտէին: Գուցէ այս բոլորի մէջ բացառութիւն կայմէր միայն Դումանը, որի հետ յաճախ էր խորհրդակցում և որի փորձառուութիւնը, մասնաւոր, այսպիսի գործերի մէջ, շատ էր դիւահատում Գրիստափորը: Կառ ճանաչելով Գրիստափորի տարօրինակ զգոյնապահութիւնը, անհասկանալի եմ համարում, որ Բազում լինէին անձինք, մինչև իսկ կուսակցութիւնից հեռու մարդիկ, որոնք հեռաւոր դադափար անգամ ունենային Գրիստափորի դերի մասին «Սուլթանի մահափորձի» մէջ. նա ինքը այդ խնդիրը վճռել էր վերջնականապէս և լռիկ մնչիկ լրացնում էր իր ընկերներին, որոնք անձապոյն մասը նոր ուժեր էին:

Գրիստափորի Բազում գտնւած ժամանակ, մեր կենտրոնը դարձել էր ճիւղաքարդիւնաբերողների խորհրդի Բախախնի մասնահիւրը, որի վարչին էր Յովհ. Գաջազնունին, որը այն ժամանակ թէպէտ իրեն Դաշնակցութեան համակողմ էր համարում, բայց միշտ մեզ հետ էր և մտերմական կապողով էր կապւած մեր ընկերներից շատերի հետ: Այստեղ էին ծառայում Յարութիւն Ծարիկեանը, Մարտիրոս Մարգարեանը (Մաֆօ), Նիկիօր (Դուման) և շատ ուրիշ երկրորդական ընկերներ: Նախարդիւնաբերողների խորհրդի բազմաթիւ ծառայողները բոլորն էլ սկսել էին տարւել դաշնակցական հոսանքով և ետևողով մասնակցում էին եղած եւ ու գեոին: Այդ շարժումը սկսել էր վարակել նոյն տեղում ծառայող նոյնպէս ուղտախօս հայ մտաւորականներից շատերին, որոնք մինչ այդ բոլորովին կտրւած էին հայութիւնից. դրանք մէջ էին Բ. Չաւրեանը, որը սպազալումը դարձում էր կարեւորագոյն ընկերներից մէկը: Նրա քոյրը՝ արիւն Անշուկովան, օր. Ս. Արէշեանը (Ռուբինան), օր. Մ. Չէյց (գեթմանուհի) — և դիւտաւորապէս սրանցից էր, որ Գրիստափորը ընտրեց իրեն ընկերները Պոլսի գործի համար, և բոլորը արւում էր այնպիսի ձևերով, որ հեռու է մնացել ամէն բանով հետաքրքրուող և շատ բան տեսնող աչքերից: Հնչուութեամբ է արդ՞օք Գրիստափորը տւել այդ վճիռը, դժաւարաւում եմ ստել: Ճիշտ է, որ ես մի երկու անգամ նկատել էի, որ նա աւելի

*) Դժբախտաբար, Գրիստափորի վախերը իրականացան. Միլիթանը այնուհետև մասնակցեց մի երկու անձնաբերների և ստացաւ խմբապետ անունը, արից յետոյ պատանախա արքաւա կուսակցութեան գլխին: Երբ կուսակցութիւնից արտաքսուեց, գործիք դարձաւ դատական քննիչ Լիփիւնի Բեռքին, 1907-08 Բալականներին՝ մատնելով իր բոլոր ընկերներին, մինչև որ Դաշնակցութեան գնդակը վերջ տւեց նրա կեանքին:

և աւելի մտադրող է դառնում. սկսել էր յաճախ մրմնջալ իր սիրած առասկան յեղափոխական տխուր երգը, որ նշան էր, թէ ծանարեւունած է ինչ որ հողսով, բայց չէի կարողանում անդրադառնալ, թէ ի՞նչ մտադրազուժ է, որ տիրել է նրան: Ես այն ժամանակները շատ անփորձ էի մարդկային հողիններ կարգալու, իսկ մտերմորէն հարցնել չէի համարձակւում: Եւ այսպիսով երբևէ չիմացայ նրա ասրումներն ու մտաճողութիւնները...

Մի դիշեր, յիշում եմ, հաւաքած էինք նոյն այդ ճնաւթազդ ինասրբողներ խորհրդէ՞ Բալախանիի շքր-լանի շէնքում, Մարտիրոս Մարգարեանի մօտ: Ընկերական մի հաւաքոյթ էր ի պատիւ Մարդիկ Օհանջանեանի, որը զնում էր «Ներկիր»: 1898 թվոց յետոյ ոչ ոք «Ներկիր» չէր անցել, կարելի էր աւել, որ կուսակցական կապը կտրուէլ էր «Ներկիր» և Անդրկովկասի միջև. ի՞նչ էր կատարւում այնտեղ — ոչ ոք չգիտէր, և մե՛ծ էր մեր ոգևորութիւնը, Լերբ Ս. Օհանջանեանը ցանկութիւն յայտնէլ Ներկիր անցնելու: Ընկերներ մի ստանձին դուրբուրանքով էին վերաբերում նրան. ամենքին թուժ էր, թէ նա գիտակցօրէն ղէպի մաս է գնում. այդ իսկ պատճառով մտածում էինք ամէն կերպ դո՛ճանապարհ՝ ձեռն նրան: Հասարակութիւն, բնականօրէն, եղան բազմապիսի ճառեր ու բարձրագոյնութիւններ, խօսեցին համարեա թէ ամենքը, խօսեց և Քրիստափորը, որի մօտ նստած էր Յով. Բաղդուևին: Մեզնից շատերը նկատեցին, որ Քրիստափորը իր ճառից յետոյ այսպիսով ելաւ սեղանից և դուրս եկաւ. նրան անվախապէս հետևեց և Բաղդուևինին: Մեր հաւաքօյթը շարունակեց մինչև ուշ դիշեր, և երբ պատրաստուժ էինք ցրելու, Բաղդուևին, անցած Քրիստափորի թևը, կարելի էր աւել ուժով ներս մտցրեց: Քրիստափորի աշքերը տարբրակ կերպով կարմրել էին, կարծես լաց էր եղել, դէմքը այսպիսով և յուզումայից էր և մի կողմից աշխատելով ազատել իր ձեռքը, միւս կողմից կրկնում էր դալորոյթով, թէ՛ «դու ինձ խորը, շատ խորը վիրաւորեցիր»: Մենք փորձեցինք միջամտել, հասկանալ այդ բոլորը, բայց թէ՛ Քրիստափորը և թէ՛ Բաղդուևին յամառօրէն լռեցին և ոչ մի խօսք չսասացին: Ետտ տարիներ յետոյ միայն, երբ այդ դէպքը յիշեցրի Բաղդուևինուժ, նա պատմեց, որ երբ Քրիստափորը Ս. Օհանջանեանի մասին զովասանական խօսքեր էր աւել և նստել տեղը, Բաղդուևինին, իրեն յատուժ սանասարտութեամբ և տարօրինակութեամբ, կշտամբել է նրան և մեղադրել, թէ անկեղծ էր իր խօսքերի մէջ, որովհետև եթէ այդպէս անհրաժեշտ է «Ներկիր» գնալը, ի՞նչի ինքը Քրիստափորը չէր գնում և սրանց նմաններին է ուղարկում... Ահա այդ անտեղի և անսրդար մեղադրանքն էր եղել պատճառը, որ յուզել էր Քրիստափորին այնքան խորը, մինչև լաց լինելու ատօհման:

Ես չեմ սխալի, եթէ կրկնեմ, որ հաւանաբար այն ժամանակները եղել են և ուրիշ նոյնանման ակնարկներ ու մեղադրանքներ ուրիշների կողմից էլ, որովհետև այն ժամանակայ ըմբռումներով ով Տաճկահայաստանում չէր եղել, նրան յեղափոխական չէր կարելի հասարել, յեղափոխական էին մասնաճիւղ նրանք, որոնք մի անգամ եղել էին «Ներկիր» ու տեսել էին վառողի

հոսը կամ տաճկական բանտերը: Անշուշտ, մօտիկ ընկերական շրջանակներում և կարևոր ժողովներում նոյնանման ակնարկներ պիտի լսած լինէր և Քրիստափորը, որը, իրօք, մինչև այդ «Ներկիր» չէր զնացել և չէր էլ կարող դառն իր Ֆիդիքսական պատճառով (նա կաշ չէր). բայց կուսակցութեան մէջ երևի որոշ խաւեր ողջակէզ էին փնարում և այդ ողջակէզը պահանջում էին, որ լինի ամենեց լաւը — իրենց ղեկավարը:

Նման անտեղի ակնարկները, անշուշտ, դեր են կատարել և ներշնչել են, որ Քրիստափորը զիտակցօրէն զնար այդ ճամբով՝ լռեցնելու համար ցանազան անարժէք կատարանքներ և խուժ փոփոտկներ: Մեր այն ժամանակայ գոճան իրականութեան արդէնք պէտք է համարել, որ կուսակցութեան ղեկավարները, նրա սիրան ու հողին զիտակցօրէն գնում էին դէպի մահ — Սիմոնը զնաց կլկիկայի խորքերը, Քրիստափորը՝ դէպի Պսիխ...

Քրիստափոր մօտ մէկ և կէս տարի Բաղու մնալուց յետոյ, ստիպւած էր հետանալ, որովհետև նախ՝ որոշել էր մասնակցել Պոտոյ գործին, երկրորդ՝ պիտի աշխատէր երկրորդ Ընդհանուր ժողովը զլուս բերելու, որի վերաբրմամբ բաւականին շատ պահանջներ կային և, որ զլուստըն է, նրա կացութիւնը Բաղուժ հետզհետէ դառնում էր վտանգաւոր: Գրեգօր Վարդանեանը (Սարգիս Բաբելեանը), որը, ինչպէս ասացի, բախտարկւած էր Շուշայ բանտում և որին դատական քննիչը մեղադրում էր ծանր պատճական յօդւածով՝ համարելով նրան ժամհարեանի գործի զլիտաւոր կազմակերպիչներից մէկը, Շուշայ բանտից Գանձարի բանտը փոխադրելու ժամանակ, Մարգար ժամհարեանի, Ստեփան Ստեփանեանի և Աղաբէկ Միլիշ-Շահնապարեանի աջակցութեամբ կարողանում էր փախչել և հետը կորցնել: Ժամհարեանի ահաբեկիչ Մատթէոսը, հակառակ դատական քննիչի խիտ պահանջներին, չի իտապանում իր ով լինելը և որտեղից դալը և ամէն կերպ աշխատում է այդ գործին անհատական բնոյթ տալ, բայց երկար խուզարկութիւնները ապացուցանում են, որ նա մենակ չէ եկել Մոսկուա, որ նրան ուղեկցել է և մի ուրիշը, որի հետ իջել են միևնոյն չիբրանցան և երբեք պարզել, նախ քան Մոսկուա դալը, նոյն անցազրով իրած էր եղել և Բագուալ: Այս բոլորը ցոյց էին տալիս, որ գոյութիւն ունի մի զարանի կազմակերպութիւն, որը զարմանալի կերպով ղեկավարում է այդ գործը թէ՛ Անդրկովկասում և թէ՛ Մոսկուայում: Այն ժամանակները դեռ ևս յայտնի չէր Դաշնակցութեան ինչպիսի կազմակերպութիւն լինելը, մասնաճիւղ պետական պաշտօնէութեան համար, որը իր խուզարկութիւնները բնականաբար պիտի տանէր ոչ թէ կուսակցական ճանապարհով, այլ գործին մասնակց անհատներ փնարելով: Այդ իսկ պատճառով Մոսկուայի դատական քննիչը խիտ հրաման էր տւել կովկասեան ոստիկանութեան ամէն միջոց գործարկել և անպատուա բանալ այդ գործի ղեկավարներին և մասնակիցներին»:

Ոստիկանութեան յաջողւել էր Շուշայ գտնել այն բնակարանը, ուր ապրել էր Քրիստափորը, և խուզար-

կու ոստիկանութիւնը փնտրում էր նրան Բազում, իր տրամադրութեան տակ ունենալով Քրիստափորի մահաբանան նկարագրութիւնը: Թէպէտ Քրիստափորի ներկայութիւնը շատ օգտակար էր Բազում, որը սկսել էր դառնալ Դաշնակցութեան գլխաւոր կենտրոնը ամբողջ Անդրկովկասի մէջ, բայց և այնպէս թոյլ տալ, որ վերջի վերջոյ ոստիկանութիւնը նրան գտնի և պատասխանատուութեան ենթարկի, կը լինէր անհանդուրժելի մեզ համար, ուստի ամէն կերպ նպաստեցինք, որ նա սպահով կերպով կարողանայ անցնել սահմանը, առանց դազանի ոստիկանների կողմից նկատուիլու:

Նախ քան Քրիստափորի հետանալը Բազում մի շարք ժողովներ տեղի ունեցան մօտիկ և կարևոր ընկերների շրջանում: Մենք զու ևս չէինք կարողանում անդառնալ, որ սա մեր վերջին հանդիպումը պիտի լինի, որովհետև լաւ չէինք պատկերացնում նրա խաղալիք դերը Պրնում, իսկ որ նա կարող է սպանել, այդ երբեք մեր մտքերից չէր անցնում: Անդրկովկասում աշխատող ընկերներին համար չափազանց կարևոր էր այն, որ շուտով պիտի կայանար Երրորդ Ընդհանուր ժողովը, որին, բնականաբար, պիտի մասնակցէր Լ. Քրիստափորը: Եւ այդ ժողովից էինք սպասում մենք, թէ արդեօք Դաշնակցութիւնը պիտի՞ զբաղւի ռուսահայ ժողովրդի շահերի պաշտպանութեան խնդրով, թէ ոչ, որովհետև խոշոր հայ գանձածները, որոնք օր ըստ օրէ անում և քաղաքականապէս զարգանում էին Դաշնակցութեան մէջ, չէին կարողանում բաւարարել այն աշխատանքով, որը տարւում էր տաճկահայ դատի համար. տաճկահայ դատը այն ժամանակները այն կերպարանքը ունէր, որ չէր կարող մշտապէս դրադեցնել լայն գանձածները: Սակայն թեւ անհասնել էին, որոնք ներած էին գործին՝ ոմանք «Նրկիր» անցնելով և ոմանք զբաղւելով արտասահմանի սրբուպանդայի գործով, լայն գանձածից պահանջւում էր դրամական օժանդակութիւն միայն, որը, բնականաբար, չէր կարող բաւարարել նրանց, որոնք կինդանի գործ էին պահանջում, տեսնելի է՛ իր շօշափելի արդիւնքի հետ միասին: Աշխատատեղերին մօտիկ կանոնած դաշնակցական ընկերները լաւ դիտակցում էին, որ ԼԹԷ օր ըստ օրէ ստեղծ տեղական խնդիրների վերաբերմամբ Դաշնակցութեանը որոշ զայտու ջանէ, նա կը զրկւի կենդանի ուժերից, որոնք պիտի գնան ձուլւելու օտար, անհարգատ կուսակցութիւնների մէջ, գտնելու համար իրենց հօգուտ համապատասխան գործեր: Մեր մէջ կային և այլ կերպ մասնողներ, որոնք բոլորովին ուրիշ տեսակէտ ունէին. նրանց պատճառաբանութիւնը այն էր, որ Դաշնակցութիւնը կազմակերպւած է յանուն տաճկահայ դատի, հետեւապէս և պիտի զբաղւի միմիայն տաճկահայ խնդրով՝ թողնելով Կովկասին վերաբերող հարցերը այլ տարրերի և կուսակցութիւններին: Գործնական տեսակետից ևս օգտակար չէին գրտնում, որ Դաշնակցութիւնը խառնի ռուսական գործերի մէջ, որովհետև զբանով նախ՝ մեզ պէս փոքր մի ժողովուրդ անկարող է միաժամանակ երկու ճակատի վրա կռուել և երկրորդ՝ դրանով անլի խտացրած կը լինենք ռուսական կուսակցութեան վերաբերմունքը տաճկահայ դատին ներքեւ հայ յեղափոխականներին հանդէպ: Այդ ընկերների կարծիքով ռուս կառա-

վարութիւնը դիտակցօրէն չի խանգարում Տաճկաստանի ղէմ ուղղւած մեր աշխատանքներին և դիտուորեալ կերպով շտեմնել է ձևացնում մեր զինական խմբերի և զէնքերի փոխադրութիւնները*): Այս տեսակէտը, որ սկզբի շրջանում համեմատաբար ուժեղ էր, աստիճանաբար թուլանում էր. որովհետև 1902 թւի սկզբները յեղափոխական արիւնքներ Ռուսաստանում անլի և անլի էին ծաւալում: Յեղափոխականների զնգակից ընկան բռնապետութեան կարևոր սիւներից լուսաւորութեան նախարար Բօգրչեպովը և ներքին գործոց նախարար Սիպեագինը, անկարգութիւնների համար փակուցին Մոսկւայի և այլ քաղաքների համալսարանները, ռուսանոտրները, մտաւորականները և բանւորները մարտակալ էին ուղղում Ռուսաստանի բոլոր ճնշւած ազգերին՝ անողք կռու սկսել բռնակալութեան ղէմ: Գաղաքներում սկսած շարժումները արձագանք էին գտնում գիւղերում, գիւղացիական և կալաճատիրական հողերի շրջաններում:

Ռուս «ճոճիկ»-ը, որ միշտ համարել էր անտարբեր, անշարժ, կրտսրական և հլու հնազանդ տարր, 1902 թւականի երկրորդ կէսից սկսում է սաստիկ արեկոծւել, և այդ շարժումները մեծ արագութեամբ անցնում էին մի կալաճից միւրը, մի նահանգից երկրորդը՝ Վոլգայից մինչև Դնեպր: Զուր էր փորձում կառավարութիւնը այդ շարժումները դադարեցնել համար ցօրք, կողակներ կենտրոնացնել մի որևէ նահանգում: Մի նահանգում չզուպած շարժումը բռնկւում էր միւս նահանգում և այսպէս անլիքը: Մի խննթ, մոլեգին ցատում էր պատել ռուս գիւղացուն, որը դուրս գալով իր անասնական վիճակից՝ փշրում, աչրում և ռնչացնում էր ամէն ինչ, որ պատկանում էր կալաճատիրոջը. խօսում էին արդէն, որ Նիկոլայ Բ. կայսրը որոշել է «ազատութիւններ շնորհել» իր ժողովրդին, որ իբր թէ կաթմւել են առանձին յանձնադրողները սահմանադրական օրէնքներ մտցնելու համար, որ նորից հրապարակ է կեւել «Նորիս-Միլիտաի սահմանադրութիւնը»: և այլն: Թէպէտ այդ լուրերը յաջորդաբար հերքւում էին ուրիշ լուրերով, բայց և այնպէս հաւատ էին ներշնչում, որ միապետութեան դէմ մղուող պայքարը այնչափ էլ անյայտ գործ չէ:

Այդ բոլորի հետ միասին, շնորհիւ սկիտաբայ Գոլիցինի, աստիճանաբար զարգանում էր Կովկասում հայահալած քաղաքականութիւնը: Ծիշտ այն ժամանակ, երբ Ռուսաստանի լաւագոյն տարրերը պայքար էին մղում և պահանջում ազատութիւն և հուսալարութիւն բնութիւնը ճնշւած ժողովուրդների համար, Անդրկովկասի էջզարթը (ռուսադաւանների հողեւոր պետը) անվախ կերպով և մեծ շուքով շրջազայում էր Երևանի նահանգում ռուսապաւանութիւն ընդունած հայ գիւղերը, օժում էր նորակառոյց ռուս եկեղեցիները, հիմք էր դնում ռուսական դպրոցների հայկական գիւղերում:

*) Ապագայում եղած փաստերը ապացուցեցին, որ մեր ընկերները սխալում էին և որ ռուս կառավարութիւնը ոչ միայն լռելիայն չէր ֆաչպերում մեր սահմանի վրա եղած շարժումները, այլ և համալսարանի տանիկ կառավարութեան անխնայօրէն հալածում և կատարում էր հայ յեղափոխական զինւած խմբերը:

և յանուն Բրիտանոսի զարողած «Մէկ հօս և մէկ հոպիւ-
լի» առաջարկում էր Հայոց կաթողիկոսին միանալու
նուսական եկեղեցուն: Իսկ փոխարքայ Գրիգորին Հայ
Եսեպարտովմբո՞ ոչնչացնելու համար*) դեռ ևս 1901
թւին գնացել էր Պետերբուրգ, ուր մի տարբրիակ գե-
կուցումով, առաջարկում էր բոլոր Հայերին զաղթե-
ցնել Անդրկովկասեց զէպիլ Մերիբ, իսկ նրանց տեղը
բերել վստակեիլի ուս գաղարկայաննր, ճիշտ այնպէս,
ինչպէս տասնեակ տարիննր յետոյ Հայ Ժողովրդի մի
ուրիշ թշնամին՝ բուշեիկ Ձիչինը Լոյանի խորհրդա-
Ժողովում, Հայրական հարցը մէջ տեղեց հանելու և
Թերբերին սիրաշահելու համար առաջարկում էր Հայ
զաղթականներին փոխադրել Իւրդեկատանի և Ուրալի
կողմերը գտնւած տարատաններ: Ճիշտ է, այն Ժա-
մանակայ Պետերբուրգը ընդուսով չգնաց Գրիգորին
այդ խելագար առաջարկին, սակայն, անվճար Գրիգոր-
նը նոյն այդ 1902 թւականներին էր, որ ներկայացրեց
Հայրական եկեղեցական կալածանքի գրաման ծրարի-
բը՝ առաջարկելով յարբունիս գրուել Հայ եկեղեցական
կալածանքը, որոնց բազմամիլիոն եկամուտները, իբր
թէ, ծախսուում են անկառնորս կերպով հայ յեղափո-
խականների ձեռքով գամագամ հակապետական նպա-
տակների համար...

Այն բոլոր տեղեկութիւնները, որ զայլս էին մի
կողմից դաւաճանքից և միւս կողմից՝ Պետերբուրգից
ու Մոսկուայից, վճատեցնելու չափ աղբում էին բոլոր
նրանց վրա, որոնց համար թանկ էին Հայ Ժողովրդի
չհանրը: Տեսնել այդ բոլորը և լռել, ոչ մի թալլ չանել,
մնալ անարգ գիտողի դերում և համակերպել այդ
բոլորին, — անկարելի էր թւում դիւաւորացիս երի-
տասարդներին համար: Այդ էր ահա մեր մտահոգու-
թեան առարկան, և կամեցանք էինք, որ Քրիստափոր
աշխատի, որ Երբորը Ընդհանուր Ժողովը զրական
կերպով լուծէ այդ խնդիրները: Մանաւանդ, որ Քրիս-
տափորը ինքն ևս համակարծիք էր մեզ և նոյնպէս
գտնում էր, որ Դաշնակցութիւնը պիտի դուրս գայ այդ
անշարժ դրութիւնից և մտնի գործոն աշխատանքների
չըհանը...

Քրիստափորը գնաց և այդ եղաւ մեր վերջին հան-
դիպումը...

Ինչպէս յայտնի է, Գ. Ընդհ. Ժող. ոչ միայն զբաղեց
կովկասահայերի վիճակով, այլ և Հակոտակ նրան, որ
կուսակցութեան առաջ գրած էին չափազանց կարեւոր
աշխատանքներ Տաճկաստանի վերաբերմամբ, գիտակ-
ցելով այն յարաճուն շարժումը, որը տեղի էր ունեւում
Ռուսաստանում և այն վիճակը, որին ենթարկում էր
հայրութիւնը Կովկասում, որոշեց — Հ. Յ. Դաշնակ-
ցութիւնը, ընդունելով հանդերձ, թէ իր հիմնարկու-
թեան նպատակը եղած է և այսօր այ է Օսմանեան
Հայաստանի պատմական դատը, ճանչցած և վաւե-

*) Այն ժամանակները հայ ժողովրդի քննամիներ
բէ ուսական մամուլի մէջ և թէ պետական շրջանակ-
ներում յամառորէմ տարածում էին այն միտքը, թէ
հայերը ցամախում են մի պետութիւն տեղծել անջատ
Ռուսաստանից, որը պիտի սկսեր Արարատից և տա-
րածէր մինչև Նար-Նայիջեան, Դոնի ափը կամ, նայն
իսկ, վորանծ:

րացած միջազգային դաշնագրերով, չի կրնար, սա-
կայն, անտես ընել Հայ Ժողովուրդի մարդկային իրա-
ւունքներու բուսարարումի ծանր դէպքերը, որոնք վեր-
ջերս տեղի են ունեցած և սկսած են յաճախել Թերբ-
բուրգին դուրս ևս, սկզբունքով ընդունեց պաշտպանել
այդ կարգի իրաւունքները, տակտիկին վերապահելով
որովէլ՝ Լե՞նին չափերով կատարել ինքնապաշտպանու-
թեան այդ գործը: Ներկայիս Դաշնակցութիւնը իր վրս
տանելով կովկասահայ տարրի ինքնապաշտպանութեան
գործը՝ որոշեց յանձնել այդ՝ Կովկաս Դատարանա-
տու Մարմնին, որը պահելով իր «Ինքնապաշտպանու-
թեան Կենտ. Կոմիտե» անունը՝ պիտի շարունակէ
գործել «Դաշնակցութեան» պաշտօնական անւան տակ):

«Ընդհ. Ժողովը Կովկասի վերաբերմամբ ընդունեց
բերանացի և գորաւը պրոպագանդի, տեղերի, Ժողո-
վրդական ցոյցերու և զինւած դիմադրութեան տակ-
տիկը», «զաշնակցական քանուրպակն խումբերը, այն
գործարաններու սահմաններուն մէջ, ուր անոնք կաշ-
խատին, կը մասնակցին բոլոր քանուրպական գործա-
դուներուն և շարժումներուն, երբ անոնք կապած են
քանուրպերու ընդհանուր վիճակին հետ, իսկ ինչ կը
վերաբերի գործարանական կեանքէն դուրս ցոյցերուն,
որոնք կրնան առաջարկել որեւէ կուսակցութիւններու
կողմէն, բայց որոնց առիթներն ու նպատակը կրնան
տարբեր ըլլալ, իւրաքանչիւր դէպքէ համար մասնակ-
ցելու կամ չմասնակցելու խնդիրը կը մնէ Պատասխա-
նատու Մարմինը»*):

Կարելի է ասել, սա եղաւ Քրիստափորի վերջին
աշխատանքներից մէկը մեր կուսակցութեան համար:

Անցեալ դարու վերջին, ինսունական թւականնե-
րի սկզբներին Հասարակական գործիչ տեր Հոտատու-
թեամբ նա կարողացաւ ցրւած և բազմապիսի ձգտում-
ներ ունեցող Հայ յեղափոխականներից կազմել Հ. Յ.
Դաշնակցութիւնը, որը համաձայն այն ժամանակայ
իդէալներին, պիտի զբաղէր միմիայն տաճկահայ դա-
տով: Ուղիղ 13 տարի յետոյ, երբ Հ. Յ. Դաշնակցու-
թիւնը մեծացել և ուժեղացել էր, մէկը եղաւ, որոց է
կարեւորներից մէկը, որ մղեց Դաշնակցութիւնը վեր-
ցնել իր վրս Հայ Ժողովրդի բովանդակ շահերի պաշա-
պանութիւնը. այլ ևս չկային սահմանի այս կամ այն
կողմի խնդիրներ և կամ, ինչպէս ինքը Քրիստափորն էր
ասում՝ մեզ համար գոյութիւն ունեն միապետ կոշ-
ւած աւազակների ձեռքով դժուած սահմանները, Հայ
Ժողովուրդը մէկ է, լինի նա սահմանի այս կամ այն
կողմը»:

1905 թւի Հայ-թաթարական ընդհարումների շը-
ջանին էր, երբ կովկասահայութիւնը, մանաւանդ Հ. Յ.
Դաշնակցութիւնը ամբողջապէս լարւած աշխատանք էր
դարձել, մի ծանր և ցուտ օր հեռադիրը գուժեց,
թէ՛ Մոֆիալում, վիտոշ լերան լանջին, ուումբի զոհ
գնաց մեր անդադական Քրիստափորը:

Ինքնը դիտէինք, որ Քրիստափորը գնում էր դէպի
մահ, որ վերջ է վերջոյ աղպիւնի վախճանը անխու-
սափելի էր, բայց մեզից և ոչ մէկը չէր հաւատում,

*) Քաղած «Երբորը Ընդհ. Ժողովի անունագրու-
թիւններէ». Կոմիտեներու համար. Ժընև, 1905թ.
«Դրօշակ»-ի տպարան:

որ, իրօք, Քրիստափորը կարող էր մեռնել...

Այժմ, երբ մօտ 25 տարի է անցել նրա մահից, երբ մեր ժողովրդի գլխից անցան մեծամեծ փոթորիկներ, երբ մեր կուսակցութիւնը երևան բերեց նորանոր և խոշոր դէմքեր, Քրիստափորի գերբ մնաց միշտ եզրային մեր կուսակցութեան մէջ... Մեր ընկերական և մտերմական շրջանակներում դեռ ևս Քրիստափորի և Սիմոնի կենդանութեան ժամանակ, երբ երիտասարդական խանդավառութեամբ կլանում էինք բոլոր ամն տեղեկութիւնները, որոնք վերաբերում էին մեր աւագ ընկերների կեանքին, ևս առիթ եմ ունեցել մեր աւագ ընկերներից շատ անգամ լսելու, որ Քրիստափորը և Սիմոնը եակասնեայ ուժեր լինելով՝ միմեանց խանգարում են: Կային ընկերներ, որոնք մինչև իսկ չէին քաշուում արտայայտելու, որ կուսակցութեան շահի տեսակէտից լաւագոյն կը լինէր, եթէ դրանցից մէկն ու մէկին յանձնէր կուսակցութեան ղեկավարութիւնը և միւսը հեռանայ ասպարէզից...

Գիտելով մեր կուսակցական կեանքը այն ժամանակները և նրանից յետոյ էլ, ևս եկել եմ այն վճռական համոզման, որ այդպիսի նկատուութիւնները արդիւնք էին խորը տգիտելի և տառապեան. թէ՛ մեր կուսակցութեան առաջագրած դադափարների և թէ՛ մեր խոշորագոյն երկու ընկերների վերաբերմամբ:

Անշուշտ, թէ Քրիստափորը և թէ Սիմոնը այն մեծ ուժերից էին, որոնք ոչ միայն կարեւոր դեր կարող էին խաղալ մեզ պէս մի փոքրիկ ժողովրդի մէջ, այլ և մեծ և խոշոր ազգերի հասարակական կեանքի առաջատար շարժիչները կարող էին լինել. չնայելով իրենց խառնածքի հիմնական տարբերութեան Քրիստափորը և Սիմոնը գարնանախօրէն միմեանց լրացնում էին և ստեղծում մի մեծ ամբողջութիւն. կարելի է ասել, որ մէկի գործը առանց միւսի պիտի լինէր պակասատար: Քրիստափորը այն ճարտարադէտներէց էր, որ յղանալով խոշոր ծրագրեր և հիմք դնելով որոշ շէնքերի, շատ անգամ գանցատութեան էր տալիս թէ ինչեց է պատրաստած շինանմանութիւնը. Սիմոնն էր, որ իր սուր երբեմնային գործնալի մրապետութեամբ մտալու էր գանգաձոր, որով շէնքը դառնում էր աւելի կանդուն և հաստատուն. դեռ աւելին, չնայելով Սիմոնի խորթափանց խելքին, հասարակական երեւոյթները ճշգրտորէն ըմբռնելու կարողութեան, հակառակ նրա ինքնուրոյն և անկախ մտածելակերպին, նա մենակ անկարող էր այնպիսի հմտութեամբ և տեսականօրէն վարել մեր հասարակական կեանքի ղեկը, ինչպէս այդ կատարում էր Քրիստափորը, որը ժողովրդական գանդուածների գլուխը անցնելով՝ արտակարգ վարպետութեամբ վարում էր նրա երասանակները: Սխալած չենք լինի, եթէ ասենք, որ մեր ընկերներից և ո՛չ մէկը չէ ունեցել ղեկավարողի այն մեծ ընդունակութիւնը, որ ունէր Քրիստափորը, որը նոյնպիսի հմտութեամբ կարող էր վարել անհամեմատ աւելի մեծ զանգվածներ և գործի լծել անհամար բազմաթիւները: Քրիստափորի գերագոյն առաւելութիւններից մէկը այն էր, որ նրա համար բացի հասարակական գործից չկար ուրիշ ասպարէզաշխարհի փառքը, հարստութիւնը, որով սկսել էին յոփանալ նրա նախկին ընկերներից շատերը, մանա-

ւանդ Բազում, երբեք չզբաւեցին նրան. սաք բոլորի մօտից նա անցաւ առանց զբաւելու, մնալով միշտ իդէալիստ, հողով և գործով իսկական ղեմնորդատ. նա ամէն կերպ աշխատած էր, որ երբեք գործը չհակասի խօսքին. այդ երկուսի անխառն քուսակցութիւնն էր, որ վերջ է վերջոյ նրան տարաւ հայկական Գողգոթան: Չնայելով իր փորձառութեան նրա հողին երեսայնի պարզութիւնն ու միամտութիւնը ունէր, ընկերների խօսքը անքննադատելի մի ճշմարտութիւն էր նրա համար. նա հաւատում էր ամէն բանի, մինչև իսկ չափազանցութիւնների, և թէ հաղորդողը ընկերն էր, բայց վայ նրան, ով է շարք կը գործածէր նրա հաւատը, այդպիսի դէպքերում նա անողոք էր և կատարի, այլ ևս ոչ մի գնով և ոչ մի ձևով չէր կարելի վերականգնել նրա հաւատը դէպի այդ անձը: Ուղղամիտ իր համոզումների մէջ մէկ անգամ ընտրած ուղին նա կը զնար յամտութեամբ և մեծ վճռականութեամբ, առանց տատանելու: Եւ շորհուր առյպիսի բարձր ատաքինութիւնների, նա դարձել էր Հայ մտաւորականութեան և երիտասարդութեան կուռքը, որի ձայնին ունկնդրում էին ամենամեծ երկիրաճութեամբ և ակնածանքով, աշխատելով իրենց ուժերի չափ օգտակար լինել այն գործին, որին ծառայում էր Քրիստափորը:

Մի կողմ թողնելով Քրիստափորի գրաւոր կերպով արտայայտած դադափարները, որոնք արժանի են մեծ ուշադրութեան և վերլուծման. ընկերական մտերմական շրջանակներում նա այսպէս էր ըմբռնում հայկական դատի իրականացման ճանապարհը. երկրում պէտք է շարունակել ժողովրդական զինումը, մինչև որ ժողովուրդը ի վիճակի լինի ինքն իր ուժերով պաշտպանելու: Եթէ այդ զինման ընթացքին տեղի ունենան ընդհարումներ, որոնք կարող կը լինեն որոշ վայրերում ժողովրդական ապստամբական շարժումների կերպարանքը ստանալ, այդպիսի շարժումներից չպէտք է խուսափել և երբման պէտք է քաշալերել, բայց հարցի վերջնական լուծումը դիտարկուած սպիտի կարեւոր լինի եւրոպական դիպլոմատիայից, որը կը միջմտէ այն ժամանակ միայն, երբ կը վտանգւեն եւրոպական պետութիւնների շահերը: Այդ իսկ պատճառով մեր հարցի համոզոյցը նա համարում էր Պոլսի և Ծովալինայի քաղաքները, որոնց մէջ զլխաւորապէս Իզմիրը, ուր, Պոլսոյ հետ միասին, սկսեցին դաւադրական աշխատանքներ:

Եւրոպական քաղաքական շրջանակների վերաբերմամբ այնքան էլ մեծ կարծիք և հաւատ չունէր. նա համոզած էր, որ դրամով ամէն ինչ կարելի է անել՝ և՛ մամուլ, և՛ քաղաքական գործիչներ, մինչև իսկ նախարարներ և կառավարութիւններ կալելի է դարձնու, յօգուտ մեզ, եթէ անհրաժեշտ դրամը լինի: Այդ էր պատճառը, որ նա մինչև ինքնամտացութեան աստիճան կլանում էր այն մտով, թէ Ե՞րբ, վերջապէս, կարելի պիտի լինի անհրաժեշտ քանակութեամբ դրամը ձարել և յաճախ, երբ մի որեւէ նախարարական ասպարէզ էր առը զալիս եւրոպական պետութիւններից մէկում, նամանակնառ Չրանախյում, անկեղծօրէն քաղականչում էր. «Տեսա՛ր, ա՛յ քեաֆուր, դարձեալ ուշացանք, է՛յի՛ փող չկայ, որ ամէն ինչ կատարէինք յօլուս մեր գատի»...

Քրիստափորը խորապէս համոզուած էր, որ հայկական հարցը շուտով, շատ շուտով կը լուծուի, առնական ներքին ինքնավարութիւն կը ստացուի, եթէ անհրաժեշտ աշխատանքները թափուեն: Յաճախ մտերմական խօսակցութեան ժամանակ մեզ՝ երիտասարդ ընկերներէս ոչևերած՝ յայտարարում էր. «Տեսէ՛ք, շուտով Հայաստանը պիտի ազատուի, Սասնոյ բարձունքները վրա կը շինեմ իմ դղեակը և կը յանձնեմ ձեզ երկիրը կառավարելու. վա՛յ ձեզ, եթէ վատ կառավարէք և կամ ժողովրդի շահերը չպաշտպանէք, այն ժամանակ, չնայած իմ կող ոտքիս, կայծակի արագութեամբ կիջնեմ ցած և շարաշար կը պատժեմ ձեզ»...

Նրա մահից յետոյ նրան ճանաչող մի խումբ ընկերներ յաճախ առիթ էինք ունենում խօսելու նրա մասին և մեր մէջ, մանաւանդ, Կոստա Համբարձումեանի և իմ մէջ հասունացիլ էր այն միտքը, որ անհրաժեշտ է Քրիստափորի կեանքի գծերից կազմել մի դասազիբք, մի ընթերցանութեան գիրք զպրոցական մատաղ սերնդի համար, որպէսզի պատանի սերունդը զպրոցական նստարանից սկսած շնչի նրա հողին և դաստիարակի այդ մեծ հայ քաղաքացու իրէաներով, բայց, Պժժարխտարար, մեր հասարակական կեանքը այնպիսի փոթորիկներէ ենթարկեց, որ Քրիստափորին ճանաչող ընկերներից մեծագոյնը անդարձ կերպով կորու գնաց, առանց մի խօսք անգամ գրելու նրա մասին, և զարմանալի չէ, երբ այժմ նոր սերունդը կամ բնաւ չէ ճանաչում նրան, կամ գիտէ շատ չնչին և հատու կտոր պատմութիւններ ու գէպքեր նրա կեանքից, որով չի կարողանում պատկերացնել, թէ որքան մեծ բաց է ունեցել մեր հասարակական կեանքը նրա մահւան պատճառով:

Ամէն անգամ, երբ առիթ է լինում վերլիշելու Քրիստափորին և նրա եղբրական վախճանը, հօգիս լցում է մի անգօր կատաղութեամբ, երբ մտածում եմ, որ շնորհիւ մեր կեանքի դատան պայմաններէ, նա ընկաւ իր կեանքի կատարեալ հասունութեան շրջանում, երբ դեռ ևս հնարաւորութիւն ունէր ապագայում աւելի մեծ գործերի ղեկավարութիւնը ստանձնելու և հայ հասարակական կեանքի փոթորկոտ նաւի հմուտ և կորովի նաւավարը լինելու:

Ի. ՍԵՒԵԱՆ

Յ. Գ. Քրիստափորի կենսագրութիւնը կազմողների համար իբրև նիւթ կուղէի յիշատակել մի քանի խօսք նրա աշակերտական կեանքից: Ինչպէս յայտնի է Քրիստափորը սովորել և վերջացրել էր Թիֆլիսի ուսուցչական ճեմարանը: Մեր երիտասարդ ընկերներից Ստեփան Ստեփանեանը*), որ աւարտել էր նոյն այդ ճեմարանը Քրիստափորից աւելի քան քսան տարի յետոյ, պատմում էր, որ Քրիստափորի աշակերտական շարադրութիւնները ինամբով պահուած էին դպրոցական վարչութեան կողմից և իբրև օրինակելի աշխատանք կարդացւում էին յետագայ շրջանի աշակերտներին և շնայելով, որ աւելի քան քսան տարի էր անցել, այնուամենայնիւ այդ շարադրութիւնները իրենց արժէքը չէին կորցրել, և աշակերտները կարդում էին մեծ հետաքրքրութեամբ:

1907 թէին գնացքի մէջ ևս պատահմամբ ծանօթացայ Քրիստափորի դասընկերներից մէկի հետ: Երկուսով էինք գնացքի յարկաբաժնում: Ռուս մտաւորականներից էր և Դաղստանի շրջանի զպրոցների ընդհանուր տեսչի պաշտօն ունէր: Երբ իմացաւ իմ հայ լինելը, շիտեց ինձ հետեւեալ հարցումով. «Պիտէ՞ք, ես ունեցել եմ մի հայ շատ տաղանդաւոր դասընկեր Թիֆլիսի ուսուցչական ճեմարանում, նրան կոչում էին Միքայէլեան, — և սխեց նկարագրել արտաքինը: — Ես գիտէի, որ նա մի ժամանակ Թիֆլիս էր բնակւում, բայց հետքը կորցրի և չգիտեմ ոչինչ այժմ նրա մասին:

Իմ դրական պատասխանի վրա նա պատմեց, որ Միքայէլեանը իրենց դպրոցի աչքի ընկնող աշակերտներից էր և մեծ աղքեցութիւն ունէր բոլորի վրա: Եւ շատ ցաւեց, երբ իմացաւ, որ Քրիստափորը ունեցել է այդպիսի եղբրական վախճան, բայց չզարմացաւ:

— Այո՛, նա գնում էր այդպիսի ճանապարհով և աշակերտ ժամանակից երևում էր, որ պիտի ունենայ այդպիսի ազնիւ վախճան, կրկնում էր անդադար խորթ թախիծով...

*) Ստեփան Ստեփանեանը ուսուցիչ էր Քագի պետական դպրոցներում, եղի է շ. Յ. Գ. Կ. Կամիսի Երանդուն անդամներից, «Անջատական» շարժման ժամանակ անցաւ «անջատականների» կողմը և յետոյ միացաւ Ռուս Սոց.—Յեղափոխականներին: Սպանեց Քագի գրաւած ժամանակ թուրքերի ձեռնով:

Տնտեսական և ազգայնականութեան խնդիրներ *

(Հնգամեայ ծրագրի շուրջ)

3. Թեքև արդիւնաբերութիւն

I. Հիւսածեղէնի ճարտարաբանտ Հայաստանի ամբողջ հում նիւթը վերամշակող:

II. Ծխախոտի արդիւնաբերութիւն Հայաստանի ամբողջ չուկան սպասարկելու և ամբողջ հումքը օգտագործելու համար:

III. Ալթ-օճառի և յարակից նիւթերի արտադրութիւն:

IV. Պահածոների արդիւնաբերութիւն՝ գոյութիւն ունեցածը վերականգնել, լայնացնել:

V. Ջաղացներ — Լթէ հաց պիտի բերել զբւից, աւելի լաւ է ցորեն բերել, հարիւրաւորների աշխատանք տալ և աղման մնացորդներով անասունների կերը աւելացնել:

VI. Կաշի գործարանների արդիւնաբերութիւն և կոշիկի արտադրութիւն:

VII. Ծաբարի արդիւնաբերութիւն:

VIII. Օսլայի և սպիրտի արտադրութեան հիմնում լեռնային, դետանինձորով հարուստ շրջաններում: Այս հարցի շուրջը երկար ժամանակ է խօսուում է, նիւթական շնչին միջոցներ են պահանջուում, բայց զեռ ոչինչ էլ յաջողուում:

IX. Ապակեղէնի արտադրութիւն, որի համար թէ՛ հում նիւթ կայ և թէ՛ պահանջ: Այս գործի համար, համեմատած «Ս. Հ.» միլիոններին, որ ծախուում են և պիտի ծախուեն, ընդամենը 300.000 բուլբլ է պահանջուում, բայց այս մասին ոչ մի խօսք ծրագրի մէջ մտցնելու մասին իսկ չի լուում: Ինչո՞ւ.— որովհետև կարող է Բորժոնի ապակու և շէրի գործարանի արտադրութիւնը պակասել, մինչդեռ ապակեղէնի պահանջը նոյնիսկ 20 առ հարիւրը չի բաւարարուում Բորժոնը, ոչ էլ Թուսաստանի գործարանները:

X. Մետաքսեղէն արտադրող արդիւնաբերութիւն. այս ուղղութեամբ անցելուում Լգածը վերականգնել է, նոյնիսկ մի քանի էլ առաջ է արել, բայց գործը կարգում է որակեւ թանրութեան ուժեղի պակասից, որ հեշտութեամբ կարելի է լրացնել հայ զգաութիւններից, մասնաւոր, որ հարեան խորհրդային երկրներում էլ չկան պատրաստած մասնագէտներ:

XI. Ցեմենտի գործարանի հարցը:

XII. Հանքային ջրերի շահագործում. Արզնին, որի հիմնումով մեծ դափնինկ ուղեցին քաղել հայ բուլբլները, գործախտաբար, մնաց կէս ճանապարհին: Ինչո՞ւ.— որովհետև հէնց որ Արզնիի հանքային ջուրը շուկայ հանեց, թիֆլիսը անհանդուտացաւ, թէ շինի թէ Բորժոնի միջոցով հանքային ջրի սպասումը կրճատել: Եւ հրահանգեց, որ Արզնիի ջուրը սպասել:

* Սկիզբը՝ «Իրօշակ»-ի սեպտեմբեր համարում:

միայն Հայաստանում և արտաճի միայն Պարսկաստան, ինչպէս սպաղարեց և «Ռորհըր. Հայաստան» պաշտօնաթերթում իր ժամանակին:

Հայաստանի թեքև արդիւնաբերութեան վերաբերեալ բոլոր կարեքները ընդգրկել հնարաւոր չէ: Մենք առաջ բերինք միայն հնգամեակին արժանի և աչք ծաղկո քացերի ցանկը:

Ելեքորակի շինարարութիւն.

Գոյութիւն ունեցող և ծրագրելիք Ելեքորակայանների մասին աւելորդ ենք համարում խօսել, ոչ, ի հարկէ, այն պատճառով, որ քննադատելի կէտեր չկան, այլ որովհետև այդ գործը, իր ընդհանուր ձգտումով, համապատասխանում է Երկրի տնտեսական շահերին: Աշխատանքի շարունակութիւնը այս սպաղարեցում բացատրում է նրանով, որ Թիֆլիսը անտարբեր չի կարողանում նայել հայ մասնագէտների յաջողութեանը այդ խնդրում և Ռիօնդէսը վերջացնելուն է սպասում, որպէսզի իր համաձայնութիւնը տայ Հայաստանի աշխատանքների շարունակութեանը, մինչդեռ տարբեր են Երկու Երկրների պայմանները այդ խնդրում. քնական առաւելութիւնները Հայաստանի «սպիտակ անուխի» կողմն են և նոյնքան աննպաստ պայմանները՝ Ռիօնդէսի կողմը, որի ծրագրերը, միջի ալոց, կազմել է հայ ճարտարագէտ Մեխիք-Փաշայեանը, որը, սակայն, իրաւացիորէն հարցական էր համարում, թէ ինչի՞ պիտի ծառայի այդ քան ելեքորակայանութիւնը, ո՞վ պիտի սպասի այդ ոյթը: Նա չէր կարող, որ 1925 թւին վրացի կոմունիստներին պիտի յաջողի անցկացնել տալ ելեքորակայան երկաթուղու մի ծրագրի Ռիօնի մօտ, այժմեան պայմաններում մի թանգ, տնտեսական հիմք չունեցող և աննպատակալարմար մի ձեռնարկ:

Ելեքորակայանարարութեան մէջ մեր երկրի շահերը պահանջում են Երկաթուղիի ելեքորակայանացումը, որը հիմնաւորում է մի շարք անվիճելի հանդամանքներով.

- 1) Ելեքորակայան ոյթի չափապահան փաճան ինքնարժէքը Հայաստանում.
- 2) Նախային նիւթերի արտաճման առարկայ լինելու հանդամանքը.
- 3) Երկաթուղային արագ սպասարկութեան հնարաւորութիւն տայ նաև Հայաստանին, որի դիմը վառելիքի ներկայ նիւթով (ածուխ և մագուիթ) չի կարող արագ սպասարկութիւն հաստատել:

Եթէ հարեանների թղթէ ծրագրների հսկայական չափերի հետ համեմատենք, Հայաստանի երկաթուղու ելեքորակայանացումը, որ, ի դեպ, վարուց, դեռ նախախորհրդային շրջանում քննած էր մասնագէտների կողմից, պէտք է դուրսը Հայաստանի հնգամեակի առաջին հերթին իրագործելիք խնդիրների շարքում, այն ինչ

նա նոյնիսկ մամուլի քննութեան նիւթ չէ: Այդ պարագան կարելի է բացատրել միայն նրանով, որ Հայաստանի Երկրաբանական Համաձայնագրովույստն ան նշանակութիւն չի տրուում և կառավարչներին չի շահագրգռում:

Լեռնարդիւնաբերութիւն.

Այնքան, ինչքան որ Հայաստանը ուսումնասիրւած է ղէթ Եւրոպական իմաստով, առ այժմ ծանր արդիւնաբերութեան տւայնիւր չկան: Հայաստանի Հարստութիւնը պղինձն է, որը վիճակը նոյնիսկ Հայկողմուսի վերջին պիւնուսը իր բանավեճում դուռ շատ ողբայի-մենք ոչինչ չենք կարող աւելացնել այդ բանավեճին, միայն թէ արդիւնաբերացման նշանաբանի հերոսները, ինչպէս կոչուում են իրենց հայ կոմունիստները, հպարտանալու քան չունեն:

Հնգամակը չի նախատեսում նոյնիսկ հինգ տարուց յետոյ էլ նախապատերազմեան թւերին հասնել, մինչդեռ Հայաստանի երկաթուղիի Ելեքաբանական կողմին, նմանողութեան կարգով, պղինձ արդիւնաբերութեան վերականգնումն էլ պէտք է վերջացած լինէր, ինչպէս հարեանների նման նշանակութիւն ունեցող ճիւղերը վերջացան 1926 թիւին: Այժմ Հայաստանի տնտեսական քաղաքականութիւնը պիտի ձգտէր պղնձի հանքահանութիւնը դարձնել պղնձի արդիւնաբերութիւն:

Լեռնարդիւնաբերական Հարստութիւնների շահագործման մէջ մեր երկրի շահը պահանջուած է, որ առաջին հերթին մշակւեն այն հանքերը, որոնք կարող են տրամական չուկայի բացը լրացնել և, իրեն պատրաստի ապրանք, չուկայ հանել և յետոյ միայն այն նիւթերը, որոնց կարիքը տեղական չուկան չի գտում, արտածման համար:

Արթիկի տուփը և Անիի պեմզամ.

Արթիկի տուփը բնակարանային շինարարութեան նիւթ է, իսկ պեմզան՝ թէ՛ բնակարանային և թէ՛ արդիւնաբերութեան: Արթիկի տուփը պիտի ծառայի կենտրոնի, գլխաւորապէս Մոսկուայի և միւս ուսական քաղաքների բնակարանային շինարարութեան, իսկ պեմզան արդէն արտածուած և արտասահման և վախճալային ապրանք է: Արթիկի տուփը էլ սիւտի արտածիւր գրում է «Արտո»-ը, Հայաստան»-ը, բայց մենք թերահաւատ ենք այդ խնդրում: Թէ Արթիկի տուփը և թէ, պեմզան Հայաստանի չուկային չեն ծառայելու, նրանց կարիքը այնտեղ չկայ: Բայց, ինչպէս հայ թերթերի լինթերոզները գիտեն, Հայաստանի շինարարութիւն կոչւածը այդ երկու ձեռնարկութիւնների չուրջ է պտտում: Մէկը Ռուսաստանի քաղաքներին է պէտք, միւրը վախճաւած ձեռք բերելու համար է, այդ պատճառով, թէ և պղինձը չի վերականգնւած, թէ և Հայաստանին անհրաժեշտ երկաթադուսն ծրարները ջրում են, Արթիկը և Անի-պեմզան և՛ երկաթուղի են ստանում և՛ ամէն ինչ: Այս երկուքը մարդկային լեզուով որակւում է գաղութների շահագործում. Հայաստանը՝ գաղութ, Ռուսաստանը՝ շահագործող: Հայաստանի Հարստու-

թիւնը պիտի արտածուի, հայ բանորութիւնը պիտի շահագործուի («Յ»-ը յուլիս 27, 1929 գրում է, թէ ռուսները պիտի պեմզայի արտածման արժէքը 50% իջնան, Հայաստանը դրանից ի՞նչ շահ պիտի ունենայ, իբր պետական և տնտեսական միւտուր: Բացի մի քանի հարիւր վատ վճարող բանորներէից, գրեթէ ոչինչ: Հայաստանի տնտեսական և պետական շահերը պահանջում են, որ համամիութեանական նշանակութիւն ունեցող այդ ձեռնարկները, որոնք ուղղակի Մոսկուային են Լեռնարդուած, առաջին հերթին իրենց շահը փոխանցեն Հայաստանին կամ թէ՛ փթատորքի ձեռով որոշ կեղծուստ ապահովեն հանրապետական դանձարանին: Որպէսզի Արթիկի տուփը ոչ միայն ելեմտական, այլ և տնտեսական նշանակութիւնը ունենայ երկրի համար, անհրաժեշտ է ամէն գնով անցկացնել այն սկզբունքը, որ տուփը պէտք է արտածուի միայն իբրև պատրաստի ապրանք և ոչ անմշակ քար: Դրանով հիմք կը դրի խոշոր քարամշակման արդիւնաբերութեան, որը ապրուստի միջոց և շահ կապահովի Հաղարաւորների, մինչդեռ ներկայ ձեռով միայն մի քանի հարիւր սեղանային բանորներէի գործ է հայթայթուած, իսկ փոխարէնը երկրից դուրս են հանուած հոկայական հարստութիւնների: Բացի այդ, Հայաստանին ևս պէտք է տրուի այդ ձեռնարկութիւնների շահի մի մասը, ինչպէս Անի-Ֆիւրը տայիս է Աղբրէջանին, մանգանիզը՝ Վրաստանին:

Միայն սպաւորութիւն չպէտք է ստանալ. մենք այդ ձեռնարկներին դէմ չենք, որոնք ուրիշ ձեռնարկներ չլինելու դէպքում ողջունելի են ու խրախուսելի, բայց գտնուած ենք, որ Արթիկի տուփից և պեմզայից առաջ տրամադրելի նիւթական միջոցները պէտք է ծախսուեն աւելի կենսական, ժողովրդական տնտեսութեան համար հրամայական կարիքների համար: Արթիկի տուփը և Անիի պեմզան ծառայում են միայն Ռուսաստանի օտարին. այդ է պատճառը, որ արդիւնաբերութեան այդ ձեռնարկներում ոչ միայն պղինձ (ծրազիր) է իրագործուած, այլ և աւելին: Աշխատանքը այնքան շտապ է կատարուած, որ բանորները օրական 15 ժամ են աշխատեցուած, թէ և արտածմանն աշխատանքը վարձատրութիւն ըստ օրէնքի չեն ստանում: Շահալիկ դրանիս գործարանն էլ նոյն պատկերն է ներկայացնում:

Պետական հաստատութիւններ և շէնքեր.

Վերն արդէն մասնանշնչիցնք, որ Թիֆլիսը ամբողջ Անդրկովկասին սպասարկելու համար նախկին իշխանութիւնից մնացած բազմաթիւ հաստատութիւններ ու շէնքեր ունի: Այժմ, երբ պետական ձեռ գիտւած և կարիքների սպասարկման երկրի կենտրոններ ստեղծւած են, բնական էր սպասել, որ այդ անհասարկութիւնը կը վերացուի: Ընթացիկ տնտեսական քաղաքականութիւնը պէտք է դեկավարէր նրանով, որ երեք հանրապետութիւններն էլ ունենան վարչական և մշակութային սպասարարման սպասանքեր: Այսինքն, անդրկովկասեան բեւոյճով պէտք է լրացնելն Հայաստանի և Աղբրէջանի կարիքները, այն ձեռով, որ մինչև Հայաստանը և մասամբ Աղբրէջանը Վրաստանին չհասարակելին, այս վերջինին անդրկովկասեան գծով որեւէ յատ-

կացում չարէր, բացի այն դէպքերից, երբ Աղբրջմանը և Հայաստանը ունեն, իսկ Վրաստանը չունի: Այս սկզբունքն էլ կարող էր ունենալ լոկ տեսական նշանակութիւն, քանի որ դործնականում նման հիմնարկ գոյութիւն չունի: Պարզեւք մեր միտքը օրինակով թիֆլիսը դուր թեով 300.000 բնակիչ ունի, իսկ Երևանը՝ 70.000: Կար թիֆլիսում չինել է բազմաթիւ գլուրոցական շէնքեր, որոնք ծառայել են ամբողջ Անդրկովկասին. նաև ոչ-պետական, հայկական բազմաթիւ դպրոցական շէնքեր անցել են Վրաստանին: Որպէսզի իրօք եղարանութիւն և համերաշխութիւն լինի, պէտք է, որ եթէ թիֆլիսը 300 հազար բնակչի համար ունի 300 դպրոցական շէնք, Երևանի դպրոցական շէնքերի թիւն էլ հասցւի 70-ի հաշիւ անդրկովկասեան բիւզնէի, և թիֆլիսում 301-րդ չպտի շէնք, մինչև որ Երևանը չունենայ 70 շէնք: Նոյնը նաև ամէն տեսակի պետական հաստատութիւնների շէնքերի վերաբերմամբ, ինչպէս փոստ-հեռագրական, լեռնարդիւնարկական, ջրային, երկրաչափական վարչութեան և այլն և այլն:

Մենք մատնանշած ենք այն ճիւղերը, որոնց կարիքը Հայաստանում խեղճող է Հէնց այսօրայս Երևանի կառավարիչների տեւաներով: Նոյնը և անդրկովկասեան, աւելի ճիշտ, կովկասեան թանգարանի և գրադարանների ու թատրոնների շէնքերի նկատմամբ: Միայն այս սկզբունքով է, որ հաւասարութիւն կը լինի, ապա թէ ոչ, բառ «Экон. Вестник Армении», այլ կերպ վարելը ճամբացնում և խորացնում է գոյութիւն ունեցող սահմանաարութիւնները առանձին հանրապետութիւնների միջև» (№ 1 1928, էջ 79):

Փոխանակ այս եղբայրական պարզ և աշխատաւոր գանգաւաններին հասկանալի ձևով վարելու, դործնականում ուղղորդի հակառակ է տեղի ունենում: Պոսեւք դարձնալ օրինակներով. Երևանը արարում է բնակարանային ահաւոր տաշնապ. Անդրկովկասի կառավարութիւնը փոխանակ Երևանում, օրինակ, «Ս. Հայաստան» թերթի և հրատարակչութեան համար չէնք կառուցանել, թիֆլիսում ի հաշիւ ամբողջ Անդրկովկասի «Ջարեա Վաստկա»-յի համար նոր պալատ է շինել, մինչդեռ իրենց արամագրութեան տակ են հայ բուրժուաների տասնեակ պալատները, ինչպէս և փոխաբայութեան օրգան «Կաւկաս»-ի շէնքը, իսկ «Ս. Հ.»-ը մի տեղ ունենալու համար տասնեակ ընտանիքներ է փողոց թափել:

Մի ուրիշ օրինակ. թիֆլիսը և Բագուս ունեն բազմաթիւ թատրոններ՝ շինած ցարերի և հայ բուրժուազիայի ձեռքով, ցարերը Հայաստանից էլ տուրքեր են քերթել այդ թատրոնները շինելու համար. հայ բուրժուաներն էլ հայ աշխատաւորութիւնը շահագործելով են կանգնեցրել այդ թատրոնները: Երևանը թատրոն չունի: Անդրկովկասեան Գործադիր Կոմիտէի նիստը Երևանում, սրանից 3 տարի առաջ որոշեց Երևանի համար ժողովրդական տուն (թատրոն) շինել «հարաւածային կարգով», ի հաշիւ Անդրկովկասի, իբրև «նւէր

Երևանի աշխատաւորութեան»: Միայն այս տարի յուլիսի վերջին բարեհասնեցին այդ նպատակով Երևանին տալ 150 հազար ռուբլի նախազօծ համար, իսկ թէ երբ պիտի «նւէրը» իրականութիւն դառնայ, մտած է հանելու, իսկ մինչ այդ, ինչպէս յայտնում է «Ս. Հ.»-ը, իր յուլիս 28, 1929-ի համարում, «Անդրժողովուրդի անհրաժեշտ գտաւ հին վրացական արևեստի ցուցահանդէս կազմակերպել Գերմանիայում և յանձնարարեց Անդրժողովուրդի միջոցով ցուցահանդէսի կազմակերպման անհրաժեշտ գումարը»: Նման մի ցուցահանդէս մտ մի միլիոն ռուբլի ծախք է պահանջում, այսինքն այնքան, որքան նախատեսել է Երևանի «Ժողովրդական Տան» կառուցման համար: Էլ չենք խօսում այն մասին, որ Անդրժողովուրդի գործը չէ քնա վրացական հին արևեստի ցուցահանդէսների կազմակերպելու: Հայաստանում թիւ մնաց Երզնկեանի դուրսը ուսէին նրա համար, որ հողային կոմիտարիատի նոր շէնքը Ջարթնոցի ոճը ունի, իսկ Անդրժողովուրդը վրացական հիմ, այսինքն եկեղեցական արևեստի ցուցահանդէս է սարքում...

Վերջերս շեշտած ձգտում է նկատում բոլոր վարչական, տնտեսական և մշակութային ճիւղերը հետզհետէ վերածել անդրկովկասեանի, կենտրոնացնել թիֆլիսում, որով մեծ շահեր և առաւելութիւններ են ապահովում Վրաստանին, շահեր Եկամուտի և տուրքի: Առնենք, օրինակ, «Ջակգոտորգը» (Անդրկովկասեան Պետական Առևտրական Ընկերութիւն) շահում է ընդհանուր Անդրկովկասից, իսկ տուրք է վճարում Վրաստանին. նոյնը նաև Անդրկովկասեան Գիւղատնտ. դրամատուն, նոյնը «Ջակատոտորգով» (Ինքնաշարժի Անդրկովկասեան Ընկերութիւն) և այլն և այլն: Համասնդրկովկասեան նշանակութիւն ունեցող բոլոր ձեռնարկները պէտք է բաժանել հանրապետութիւնների մէջ. այսպէս, «Ջակգոտորգը» կարող է լինել թիֆլիսում, «Ջակատոտորգը» Երևանում, Անդրկովկասեան Գիւղատնտեսական դրամատունը՝ Բագուսում և նման բազմաթիւ եկամտի և մշակութային կենտրոններ ստեղծող կարևոր ձեռնարկութիւններ և հիմնարկներ: Այս ձևով կարելի կը լինի որոշ չափով հաւասարեցնել թէ հանրապետութիւնների մշակութային մակարակարգ և թէ պետական բիւզնէն: Հեռագրի և անթելի գարգացումը այդ համասնդրկովկասեան հիմնարկների և ձեռնարկների ցրումը երեք կենտրոններում միանգամայն նպատակալարմար է: Կոմունիստները սկզբունքով չպէտք է հակառակ են նման բաժանման, որովհետև Հէնց իրենք են, որ Անդրկովկասեան Գործադիր Կոմիտէի նստաշրջանները դումարում են երեք հանրապետութիւնների կենտրոններում: Եթէ սա ստակ ցուցամոլական քայլիը չեն, ապա պէտք է հետևողականօրէն տարածեն և միւս ձեռնարկութիւնների և հիմնարկութիւնների վրա:

Այս է միակ շիտակ ուղին, որով կարելի է գէթ մասամբ վերականգնել անարդարութիւնը: Այս ուղիով պէտք է ընթանայ և «հնդամեակը»: Հակառակ պարագային նա կը լինի նոր խթան հայ աշխատաւորութեան իրաւագործութեան և շահագործման Մուսկայի և «հարևան քորը հանրապետութիւնների» կողմից:

Ն. ԲԱԿԱԼԵԱՆ

*) Այս նախադասութեան համար էր, որ փակեցնի «Экон. Вестник Армения»-ն, և թիֆլիսը գրկեց Երևանը սնունտագիտական օրգանից:

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ

(Մահւան 15 ամեակի առիթով)

Ժողովրդականութիւն վայելող մեր ակնաւոր ընկեր Ռուբէնը իր «Հայ յեղափոխականի մը յիշատակները» գրւածքում «Հայրենիք» ամսագրի մէջ այսպէ՛ս է արտայայտուում Նիկոլ-Դումանի մասին:— «Իմ մանր քաղաքումսք անձնաւորութիւն մըն է. անոր կեանքն այնքան հարուստ է արկածներով և անոր դերը մեր յեղափոխական շարժման մէջ այնքան մեծ է ու բացմակդամի, որ պէտք էր ամբողջ առանձին հատոր մը նւիրել զինքը և իր գործը ներկայացնելու համար: Այստեղ կը քաւակամանամ միայն ըսելով, որ Դումանը Դաշնակցութեան ամենաինքն մտաւարական ֆէդայիքն էր: Ան հեղինակութիւն էր մեր բոլոր ֆէդայիներուն համար, ամենախմբաւ գինարժէն սկսած մինչև Հրայրը, Գեորգ Չաւուշն ու Անդրանիկը. բոլորն ալ հաւասար սիրով պատրաստ էին ենթարկուելու այդ Ղարաբաղցի լեռնակառնի պողպատէ կամֆին»:

Այստեղ սիրով պիտի արձանագրեմ, որ «Դումանի կեանքն ու գործունէութիւնը» ես ամփոփել եմ մի հատորիկի մէջ, ուղեկցած տասն և եօթ գլուխներից և արդէն ուղարկել եմ «Հայրենիք» ամսագրին տպագրելու համար մեր անգուզական Հերոսի մահւան 15 ամեակի առթիւ. այստեղ նպատակ ունեմ միայն «Երօզակ»-ի սուղ չէրը ներածին չափով տարու Դումանի չոր ու ցամաք կենսագրականը, զանի որ նրա մահւան 15 ամեակը լրանում է հոկտեմբեր վերջին:

Հ. Յ. Դաշնակցութեան հեղինակաւոր ռազմիկը ծնւել է պատմական Արցախ-Ղարաբաղի Սաչն գաւառի Ղւշաղ գիւղում, 1867 թւին: Նրա հայրը քահանայ էր: 9-10 տարեկան հասակում Նիկողայոս կամ Նիկոլ Տէր-Յովհաննիսեանը մտել է Շուշույ թեմական դպրոցը, որի այն ժամանակւայ 5 դասեան դասընթացը աւարտել է 1887 թւին:

Շուշին այն ժամանակ կովկասահայութեան քաղաքակրթական կարևոր կենտրոններից մէկն էր: Դպրոցն աւարտելուց յետոյ Նիկոլը Արցախի թեմի կոնսիստորիալում ծառայում է նախ իրը սուկ գրագիրը, ապա քարտուղար և արժանանում է կոլլեժսիկի ընդհատար տնտեսին:

Թողնելով Շուշին, Նիկոլը 2-3 տարի ուսուցչութիւն է անում Հիւսիսային Կովկասի Հայոց դպրոցներում, ապա, 1891-ին, տեղափոխուում է Թաւրիզ նոյն պաշտօնով, ունենալով յեղափոխական գործունէութեան որոշ հեռանկարներ... «Հայկազեան» դպրոցում նրա մօտ են գրագիտութիւն սովորել Թաւրիզի այժմեան հասարակական ծանօթ գործիչները՝ Գասպար Յակոբեան, Արմենակ ԱՖթանդիլեան (տեսուչ), Լևոն Գրիգորեան (նրաժէշտ), Միքայէլ Ստեփանեան և ուրիշներ:

1893 թւին Նիկոլը տեղափոխուում է Սալմաստ, յատկապէս Ղարաբաղ, ուր ձեռք է բերում մեծ ժողովրդականութիւն իբրև ուսուցիչ, յեղափոխական, ագրասէր և հոսիկու մարտիկ: Նիկոլը սոսկ ուսուցիչ չէր միայն, այլ և միաժամանակ մարզիչ-յեղափոխական և ղեկավար-գործիչ...

Թաւրիզում և Սալմաստում նա հանդիպում է բազմաթիւ արկածներ, ընդհարումներ է ունենում տեղական թուրքերի և քրդերի հետ և միշտ դուրս է գալիս յաղթող՝ շնորհիւ իր բնածին խիզախութեան, անվահերութեան և ռազմական ճարտարութեան. Նիկոլը հրաշալի նշանածիղ էր և հմուտ որսորդ: Նա իր մարտական մկրտութիւնը ստացաւ Դերիկայ վանքի կոնուներում: Նրա զինակիցների մէջ էին և Սաքօն, Ջալալը, Թաւաքախանը, Դերիկի Մովսէսը և ուրիշներ:

1894-ին, աշնանը, Տաճկահայաստանից Սալմաստ է անցնում մի զինատար խումբ, որ զինուում է և վերադառնում Երկիր: Այդ խմբի հետ Երկիր են անցնում և Վարդանը, Իշխանը (Արդութեան), Սարգիսը (Օհանջանեան), Ոսկան Նազարեանը (Ալլոբ վարժապետ), Շերօն, Միքօն, Բազիկը և ուրիշներ, թուր 18-20 հոգի: Նոյն 1894-ին Նիկոլը մի խումբ պատրաստեց, որ Վան անցնի, բայց Փայտուկ գիւղում արմենականների մէջ զժտութիւն է ընկնում, և հաշտարարի դեր կատարելիս Նիկոլը պատահաբար ազդրից վիրաւորուում է. «Գիծ» Դաւիթը (արմենական), որ խենջալը քաշում է, որ խփի Ոսկանին, բայց յանկարծ վրչուում է միջամտող Դումանին: Շրջապատողները ջանկանում են Լինչի դատաստանի ենթարկել Գիծ Դաւիթին, բայց Նիկոլը չի թողնում վհահանցօրէն, առարկելով, որ նախ Դաւիթը նպատակ չէ ունեցել իրեն խփելու, ապա՛ նա պէտք է դուրս գաղափարի ճանապարհին...

1895-ին աստուկանում է կուսակցական պայքարը դաշնակցականների և արմենականների միջև: Նիկոլի դրդմամբ Թեհրանում Վրթ. Փախազեանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Շաւիղ» թերթում գետեղում են երգիծական յօդածածներ Սալմաստի բարբառով արմենականների հասցէին. Նիկոլի ձեռք առած միջոցների շնորհիւ վարկապուրկ է լինում արմենական հոսանքը Սալմաստում և փոխարէնը տարածուում է Դաշնակցութեան հմայքը:

1895-ի օգոստոսին Երկիր էին անցել Աւետիսեանը, Մարտիկը և Պեասօն. երեք կուսակցութիւններն էլ համերաշխ էին դործում ազգային ինքնապաշտպանութեան խնդրում. Պետոն նոր ոյժ էր պահանջում. նոյն թւին Վազգէէնը (Տիգրան Դերոյեանը) եկաւ Սալմաստ զինատար խմբով:

Նիկոլը 54 հոգուց բաղկացած մի խումբ կազմեց. նրա հետ կային և 10 արմենականներ, որոնց թւում

իրեն պատահաբար վիրաւորող Գիօթ Դաւիթի և Ներսէս Բօգիկեանը, որին մի անգամ պատահել էր Նիկոլը... ԸՄԻր նպատակը մէկ է։ — ասաց Նիկոլը և ընդունեց նրանց իր խմբի մէջ։ Բնութեան արճաւորքները յալթաճանարեղով՝ Նիկոլը իր խմբով հոկտեմբերի վերջին, 1895 թիւ, մտաւ Սարալի գոմերը. հայդուկների ոտները սառել էին, փայտացել, նոյնիսկ արմենական զինագործ Փանոսը ցրտամահ էր եղել։ Սարալում Նիկոլը նկատուում է ջրդերից, բայց մի թևքէ ընդհարու՜մից յետոյ մութն ընկնում է. գիւնը մտնու շարունակուում է ճանապարհը և հասնում Բօզազ-Քեասան. ցրտամահ է լինում և զինուոր Աբգարը, իսկ Սարալի կուում սպանուում է Հաֆթեանի Աւետիսը։ Դերոյեանը մի տանակով անջատել էր ճանապարհին. նա առանց կոխներին մասնակից լինելու, կարողանում է անխափան լինել և ապահովաբար հասնում է Վան, այն ինչ ջրդերը պաշարում են Նիկոլին։

Երկու մարազի մէջ էին տեղաւորւած ցրտահար հայդուկները Բօզազ-Քեասանում. նրանք թևքէ կրակ էին արել, որ մահից ազատեն, ցրտին յալթաճան են, բայց ջրդերի վտանակները պաշարում են նրանց։ Մի մարազում Նիկոլն էր, Ներսէս Բօգիկեանը (արմենական) և 20-ից աւելի տղաներ, իսկ միւս հայդուկները Լարաբազի Ծարութինի գլխաւորութեամբ Երկրորդ մարազում էին։ Քրդերը միայն Նիկոլի մարազն են նկատում և պաշարում, իսկ Ծարութինի տանակալը հանդատանում էր...

Քրդերը բարձրանում են շրջակայ մարազների կտուրները և դիրքեր բռնելով՝ սկսում են կրակել կրակի պէս. նրանք գտնուում են խոտի խորքները և կոյտ-կոյտ շարտում ուղիղ մարազի դռան մօտ։ Նոյն իսկ մի քանի ջրդեր բարձրանում են Նիկոլի մարազը և վերևից կրակում դէպի մարազի ներսը։ Մահը թուում էր անիտուսափելի բոլորի համար, սակայն, անվշտ Նիկոլը կարողացել էր դուրս գալ մարազից և հրացանի կոթով ցրտը ան նրան խորոյիւ։ Ինքն էլ մէկն ցատկում է խորոյի վրայով և դիմում դէպի դաշտը, որպէսզի բարձրանայ մօտակայ սարը։ Մարազի կտուրից ջրդերը նկատում են ձևածու կրակին» և զնդակներ տեղում վրան, սակայն, Նիկոլը ո՛չ թէ միայն սագամ է մտնու նրանց զնդակներից, այլ և ինքը ճանապարհին մահ ստիպում իր շուրջը։ Տեսնելով, որ մի ծառի տակ ջրդեր կան նստած, Նիկոլը չորում է և իր հրաշագործ մօտիով տապալում, սպանում Ջնդի և Ծաւշ ցեղապետներին։ Ծիրթութիւնը կատարեալ էր. թշնամին սարսափահար է լինում և խորհրդաւոր, Երթարահասակ, միտուքաւոր զեանուրին Դումամ է կոչում, այսինքն՝ փոթորիկ, մտախտու... Այդ օրւանց Նիկոլը-Դումամը դառնում է առասպելական քաղ-գիւց-ագին, և հերոսապաշտ ջրդերը բազմաթիւ երգեր են հիւսում նրա մասին, իսկ հայ մարտիկները գլուխ են խոնարհեցնում նրա առաջը...

Աւելցուել հրացանների շուրջը որոշ տարաձայնութիւններ են ծագում Վան հասած դաշնակցականների և արմենականների միջև. երկու կուսակցութիւնների կոմիտէները տենդոտ մրցման մէջ են մտնում, սակայն, միջամտում է Դումամը՝ յայտարարելով, որ չայս վէճը կարող են հարթել իրենք՝ գէնքի ընկերները

միայն»։ Երկու հրացան տուրով արմենականներին, Երեքն էլ դաշնակցականներին՝ Դումամը ստեղծում է համերաշխութիւն, որ այնքան կարեւոր էր և անհրաժեշտ մեր յեղափոխական պայտմարիեան այն տաղանապալից և երազուն ժամանակներում...

Վանում, հայոց թաղում, մի տաճիկ ոստիկան է սպանում։ Հայերի գլխին կախում է ընդհանուր կոտորածի ուրախանք, որ, ի հարկէ, ո՛չ մի կալ չունէր ողորմելի ոստիկանի սպանութեան հետ, այլ դուրային ծրագիր էր, Արգիւլ-Համիդի կողմից յղացւած...

Երկրում զգացում էր նոր մարտական և զինական ուժերի անհրաժեշտութիւնը։ Վանից Սալմաստ են ճանապարհւում զինատար խմբերը՝ հնչակեաններինը Սարկիւազի, արմենականներինը Ներսէս Բօգիկեանի և շարվազար Աբասի, իսկ դաշնակցականներինը Դումամի ղեկավարութեամբ։

Ճանապարհին Դումամը դարձեալ կուի է բռնում, այս անգամ Դերիկում։ Նրա խումբը բաղկացած էր 60 հոգուց, ամենքն էլ ընտիր հայդուկներ՝ Ախրէրը, Ծերօն, Փոխիլը, Դումօն, Միքօն, Լօրդօն...

1896-ի մայիս ամսին էր, որ Դումամը վերադարձաւ Սալմաստ. 60 հոգուց 12-ը հրացանաւոր էին, 20-25 ատրճանակաւոր, իսկ մնացածը զինչ չունէին։ Կոիւր բորբոքեց տաճիկ կառավարութեան պահանջով աւերակ դարձած Դերիկայ վանքում։ Այստեղ էլ կլրկնում է Բօզազ-Քեասանի դրձխակերպ և փոթորիկ-Դումամը իր տղաներով բարձրանում է Սպիտակ սարը, ուր, հանգստանալուց յետոյ, ճանապարհը շարունակում է դէպի Սալմաստ։ Ես այստեղ չեմ տալիս Դերիկայ կուի մանրամասնութիւնները, միայն պիտի յիշատակեմ, որ թշնամին ունենում է մեծ կորուստ, իսկ մերոնցից սպանում են Յ-Ա հոգի, Դումամն էլ վիրաւորում է ուսի տակից։ Քեոհնա-Շահարում Դումամը և իր տղերքը մատնում են և ձերբակալում, որովհետև չեն ուզում կուի պարսիկ զօրքերի դէմ, քանի որ Դումամը հրահանգում էր, թէ «քործ չունենք Պարսիստանի հետ. նա մեր բարեկամն է»։ Սալմաստի մեր ընկերները կտրուել միջոցներ են ձեռք առնում և ազատում են Նիկոլը-Դումամին իր գէնքերով և տղաներով։ Դումամի խմբի միւս մարդ Լարաբազի Ծարութինի ղեկավարութեամբ անվտան հասնում է Սուրա զիւղը և մնում անիտուրձ։

Արմենական զինատարներն էլ Պոյումն են ձերբակալում, իսկ հնչակեաններն անիտուրձ հասնում են Սալմաստ, բայց չեն կարողանում վերադառնալ Երկիր՝ աննպատակ պայմաններ պատճառով։ Մեր դաշնակցական տղաների մեծ մասն էլ ամիսներ բանտարկւած մնալուց յետոյ են միայն ազատուում։

Վրա են հասնում Վանի յուլիսեան ընդհարումները, ապա և կտորածները։ Պարսկա-առճակական սահմանադիտում, Արքալու, Բարդուղիմէոս առաքելայի վանքի մօտ, սպա և Գարահիսար լիքան գլխին նահատակում են Աւետիսեանը, Մարտիկը և Պետոն Իրանի խմբերով և զալթական գանդաւանների հետ. ազատում են 2-3 հոգի, որոնք Սալմաստ վալով՝ դուժում են սեբօթը։ Տնչուում է Դումամը, շտապում օգնութեան մի մեծ խմբով, բայց արդէն ուշ էր — ո՛չ ոք կենդանի չէր մնացել...

Դուժանը մտայնում է և իր գլխում ու սրտում մտմտում է այն օրւանից միայն սրբազան փոխ-վրէ-
ժր...

1896-ի նոյեմբերին նա դնում է թիֆլիս, տեսնում է անմահ Քրիստափորի Հևու և ուրազոճում Խանասորի արչաւանքը: Երկիր են անցնում Կարոս Սևրեճճեանը, Արամայիսը, Յարութիւն Չորգարեանը, Աշտարակեցի Լեւոնը և շատերը, ապա անցնում է Վան՝ Շեհօն 30 հոգով, պատրաստուած է զնալ և Կարո Չորեանը, բայց սլայթում է Վանի Լիկորոզ կոթիւ:

Տղերքը հարկադրւած են լինում թողնելու զիչերով Վանը և անցնել Պարսկաստան երկու գծով, ճանապարհ-
հին տալով գոհեր...

Այդ օրերին է տեղի ունենում և Փայաջուկի վար-
ժուճի դաշնակցական օրերով Մարտի ինքնասպանու-
թիւնը: նա չի ուզում իր սիրով կաշկանդել Կարօին, որ
պատրաստուած էր զնալ կուրի:

Եկել էին Սալմաստ ու Քարբիդ Հ. Յ. Դաշնակցու-
թեան լաւագոյն գաւակները՝ Ն. Մարտինեանը (Վա-
հան), Աւ-Քարեցի Մաքօն, Մամոնը, օրիորդ Սաթե-
նիկը, Իշխանը, Վարդանը, Բոխչը (Ք. Օհանեան),
Շատարիցի Յովսէփը, Հաջի Մուրադը, Աղբէրը (Մո-
կացի Յարութիւնը), Գուրգէնը, Փոխիկը, Թորոսը
(Գարսամ Ալայեան), Ս. Օհանջանեանը, Մարտիկեանը,
Մամոնը Խէջօն և շատերը: վերադարձաւ թիֆլիսից և
Նիկոլ-Դումանը, իր հետ բերելով Խանասորի արչա-
ւանքի ծրարներն ու հրահանգը:

Հանրածանօթ արչաւանքը տեղի ունեցաւ 1897 թւի
յուլիս ամսի 25-ին: հայկական փոխ վրէժն էր այդ,
սքափեցեցեց տաճկական բռնութեան ձեռքում գործիք
դարձած զրդերին:

Խանասորում գոհեցին Կարո Չորեանը, Գանձակե-
ցի Իւսանը, Կրետացին, Սաղաթեւ խանը և ուրիշները,
թւով 19 հոգի:

Սյունահետև Դումանին տեսնում ենք Բագու-Բա-
լխանի՝ Տէր-Յակոբեանների, Դուկասեանների և
նաւթատէրերի խորհրդի գործարաններում իբրև կա-
ռավարչի օգնական կամ վերահսկողի դերի մէջ: նա
մեծապէս օժանդակում է Քրիստափորի հիմնած «Փո-
թորիկ»-ի գործունէութեանը, նմանապէս Կովկասի
հայկական ինքնապաշտպանութեան կոմիտէին 1903,
1904 և, մանաւանդ, 1905, 1906 և 1907 թւականներին
թէ՛ կալւածքների ցոյցերի, թէ՛ ահաբեկումների և թէ՛
հարթաթարական ընդհարումների ընթացքում...

Մինչ այդ, 1904 թւին, Դումանը հակառակ իր
համոզումների, ենթարկելով ընկիւնների որոճանքը՝
խմբով ճանապարհուում է Սալմաստի վրայով դէպի Սա-
սուն, որովհետ տեղ հասնել և ղեկավարել Սասնոյ ծա-
ւալըղ ասպատակութիւնը, շնայած որ այնտեղ, Սաս-
նոյ լեռնապետ կալին Հրայր, Գէորգ Չաւուշ, Անդրա-
նիկ... Դումանը համոզւած էր, որ ինքը չի հասնի
Սասուն, որովհետև Սասունը մինչև իր հասնելը պար-
տութեան կը մատնի, իսկ լաւ դէպքում կը հասնէ
գուցէ Վան, այնուամենայնիւ իր հետն առնելով 16
կրակ ու ռոք, ընտիր նոյանք, բոլորն էլ ձիւտը, կա-
սարում է փարսը, ինչպէս անասնում էր ինքը: 1904
թւի մայիսին նա իր խմբով Սալմաստից արժուեց Կո-
թուրի գծով և ճանապարհահին ընդհարում ունեցաւ զերդ

աշխարհների և տաճկական համադիէ գործերի հետ:
Թշնամիների թիւը հասնում էր 2-3 հարիւրի, այնու-
ամենայնիւ Դումանը կարողացաւ դիմադրել որպէս
տաղանդաւոր ռազմավար և Հ. Յ. Դաշնակցութեան
հարկուկադիտը մեծ պատուով դուրս եկաւ այդ ան-
տարկեթայ փորձի...

Պակաս չէր փարձ չէր Դումանի արածը Բագուում
1905 թւի փետրուար (6-9) օրերին, երբ Կովկասն ապրում
էր անօրինակ վանդէան, երբ ցարական կառավարու-
թիւնը յեղափոխական հայերին կոտորել էր տալիս
խաւարած թուրք հորդանների ձեռքով, որովհետ
կորսարասպան կուրիների պատճառով իրարից բաժանի
ըմբոստացող կովկասեան ազգերին և աշխարհով ամ-
բայնդէ իր խարխլած զիւրքերը, որոնք շատ էին թու-
լացել ուսու-ճապողական պատերազմի և յեղափոխական
չարժումների շնորհիւ...

Դումանը կրկին արհամարհում է իր սուրբացան ու
թողախտը, որոնք հիւժում էին իր մարմինը և վեր է
կենում Բալխանիից՝ եօթ հոգով մտնում արեան քա-
ղաքը, ուր տասնակնիցով դուրսում էին անգէն հայե-
րը: մտադէրը ձեռնի, չորս հոգով, մտնում է զիչերով
թուրքական թաղը և այնտեղից, Հ. Յ. Դաշնակցու-
թեան մի գաղտնի պահեստից, բերում է 10-12 հրա-
ցան, սարքում, կարգի բերում, ապա սկսում իր անօ-
րինակ հունձը: թուրք օսչիները, Ջնդի-Շաէճ զերիք
ցեղապետների նման՝ տապալում են «կասծու կրակ»
Դումանի և նրա կրակ դարձած տղաների՝ Դրօների,
Խէջօնի և Մարտիրոսների ձեռքով...

Երկրորդ և երրորդ օրը հայկական կոտորածները
դառնում են թուրքական կոտորածներ շնորհիւ միայն
զերբանական Դումանի...

Բագուից Դումանն անցաւ Երևան և կոնց ու կոփեց
Արարատեան Երկրի հայ գանդաւանների ինքնապաշտ-
պանութեան վսեմ գործը: նա անկամ յաջողութեամբ
և խիղախօրէն վարեց իրեն վիճակած պատմական դե-
բը: նա այդ օրերին հայ մարտիկների մարտախան էր,
թէպէտ մնաց միշտ համեստ, հեռու սնափառութիւնից
և ցուցամուրթիւնից...

Դործի և ռազմի ասպետն էր Դումանը, բառիս
ամենայնի մտքով: նա միաժամանակ հանդիսացաւ և
համայն հայութեան ինքնապաշտպանութեան և զինման
տեսաբանը իր մի զբոյժով, որ կրում է «Նախագիծ»
անունը: Դումանը հայի ֆիզիքական գոյութեան պահ-
պանման մարտական դադափարախօսն է, զինւած զի-
տական-ռազմական տեսութիւններով և նրանց՝ գործա-
դրութեան կերպերով: այդ զբոյժովում նա սովորեցնում
է արեան դասեր:

Դարձեալ Դումանն էր, որ հանդէս բերաւ իր
պողպատէ կամէր Միհրանական փոքր-թուփիւնների և
անջատականների քաջըռուկների օրերին և կարողացաւ
հմուտ ռազմավարի պէս պահել Հ. Յ. Դաշնակցութեան
զիրքերը և հաշուարարներ ենթարկել աջի ու ձախի
վտանգները:

Լժփինի ծուլակի մէջ շընկաւ Դումանը: ծպտուած
այրեց Ռուսաստանում, ապա արտասահմանում: մաս-
նակցեց Կոստենիստի միջազգային ընկիւղարական հա-
մագումարին, վարեց աստանդական կենսք, եղաւ Ժը-
նեւում, Պոլսում, Եջիպտոսում, սակայն, ամէն տեղ

էլ նոյն Դումանն էր՝ կենդանի գործ, գաղտնապահ, խոռուց, հեռատես, անխօս, հպարտ իր գիտակցութեան մէջ, կամակար, յանդուգն ու ռազմատէր, կորովի, մի խօսքով Դումանը հէցն իմեր չ. Յ. Դաշնակցութեան մարմնացումն էր, նրա կենդանի արտացոլումը...

1911-ին Դումանը մասնակցում է Ատրպատականի պարսկական-յեղափոխական շարժումներին, թէպէտ ոչ սերտով և Հակոտակ կրկին իր ներքին համոզումների. այնուամենայնիւ Դումանի հարիւրեակը փայլեց Ղարաբեկի, Լալալի, Վամինջի կռիւներում և ամէն տեղ օգնութեան հասաւ նեղ ընկած սահմանադրական թուրքերին, որոնք բարձր էին զնահատում նրա ռազմական տաղանդը և սիրով լսում տւած լուրջ խորհուրդները: Նիկոլ-Դումանն այդպիսի ղեկավար էր, որ ատողջանում էր կռիւը սկսելիս, իսկ խաղաղ ժամանակ հիւանդ տառապում անխօս ու անձայն, կարծես իր ոսկրացանն ու թոքախորը ճակատագրական դառն պարզներ էին, ուղարկւած նրան մի անողոք և անարդարադատ ոգու կողմից, որ միաժամանակ և նրան օժտել էր բարձր իմացականութեամբ և երկաթէ սրամաքանութեամբ. ինքնատիպ էր իր արտաքին և ներքին բարեմասնութիւններով, կախարդական իր անբիծ բարոյականութեամբ և առանձնալատուկ գծերով՝ բնկերայիքաթեամբ, անճնագոհութեամբ և ռազմական կորովով...

Ատրպատականում թաղաւորում է մի առ ժամանակ ցարական բիրտ ոյժը, տեղի են տալիս յեղափոխականները. ասպարէզից քաշւում են Սաթթար և Բաղըր խաները, սպանւում է պարսկական յեղափոխութեան շունչն ու ոգին՝ Եփրեմը, Թարբիզում ճօճում են կախաղանների վրա Սրղաթը-Իսլամը, Հաջի-Ալին, Շէյխ Կելիմը... և Պետրոս խան Մեկե-Անդրէասեանը...

Դումանը իր հարիւրեակով ճեղքում անցնում է սահմանադրական Տաճկաստան, ուր մի ժամանակ կուով էր ներս մտնում. նա հիւրի հանգամանքում մնում է Վանում մի քանի ամիս, մինչև որ ցարական Ռուսաստանի պահանջով տաճկական կառավարութիւնն առաջարկում է Վանը թողնել և անցնել երկրի խորքերը: Դումանը դարձեալ աստանդական կեանք է վարում 1912, 1913 և 1914 թւերին և շարունակ տառապում է օտարութեան մէջ, միւս կողմից էլ հիւժուում էր թոքախտի և ոսկրացաւի ճանկերում. այդ հիւանդութիւնները բոյն էին դրել նրա երկաթէ մարմնի մէջ Հայրու-

կային կեանքի և որսորդական մոլութեան պատճառով:

1914-ին, Համաշխարհային պատերազմը յայտարարուց յետոյ, Դումանը դնում է թիֆլիս և զգած անլեզալ կեանքի «Հրապոյրներից», անձնատուր է լինում ոստիկանութեանը և յայտնում իր ինքնութիւնը. նրան բանտարկում են Մետիսում, սակայն, դաշնակցական ընկերներն անմիջապէս կտրուկ միջոցների են դիմում և ազատում նրան. Դումանին նախ փոխադրում են թիֆլիսի Արամեան հիւանդանոցը, ապա Բագուի վրայով Հանքային Ջրերը, սակայն այնտեղ էլ չի դիմանում, վերադառնում է Բագու, ուր հարկադրւած է լինում պտակելու Լարիոնովի հիւանդանոցում, որտեղ նրան խնամում էին բարձրագիտ ընկերները, հարապատ եղբայրները, նմանապէս կինը, տիկին Ջարուհին:

1914-ի Հոկտեմբեր 20-ին պաշտօնապէս յայտարարուց ոռու-տաճկական պատերազմը. Դումանը լսեց և իմացաւ, որ հազարաւոր Հայ կամաւորներ են խմբել անւանի խմբապետների շուրջը և պատրաստուած լեզալ կերպով սպառազինւած անցնելու Տաճկաստան՝ վրէժ լուծելու դարաւոր թշնամիներից, այն ինչ ինքը կծկել է մահճում և չի կարողանում վեր կենալ. էլ չի դիմանում Սարալի, Բօզաղ-Քեասանի, Դերիկայ, Ունասորի, Հայ-Քաթարական կռիւների աննման հերոսը. նա վճռականօրէն հանում է բարձի տակ պահւած ասորճանակը և խիւում է կրծքին, անչչանում, որովհետև անիմաստ է գտնում այդպիսի ձանձրալի կեանքը:

47 տարեկան հասակում մեռնում է Դումանը 1914 թի Հոկտեմբեր վերջին: Բիւրօից հեռազրով հրահանգ է դնում Բագու՝ «Դումանի դին փոխադրել թիֆլիս»...

Բագուի ընկերները և հազարաւոր Հայ բանտարներ ուսամբարձ տանում են Դումանի դագաղը կայարան և զննելով յատուկ վագոնում՝ 40 ներկայացուցիչների ուղեկցութեամբ ճանապարհում են թիֆլիս, ուր մեծ շքով, յեղափոխական կուսակցութիւնների ներկայացուցիչների և բարձահազարեան յուզարկաւորների մասնակցութեամբ՝ Վանքի եկեղեցուց տանում են Ուղիվանքի գերեզմանատունը և հողին յանձնում Հայ մարտական կուսակցութեան մեծ գաւակին, ռազմադէտ Դումանին: Նա Հանգչում է Սիմոն Ջաւարեանի կողքին, իսկ յետագայում ևկան Դումանի կողքին Հանդէլու նաև Քեոնի և մեր մտաւորական լաւագոյն ուժերից մէկը՝ Աւ. Շահխաթունեանը...

ՅՈՎԱՆ ԱՍԵՓԱՆԵԱՆ

ԹԻ Ի Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ր Ջ

Թիւրքիոյ մասին վերջերս հետաքրքրական — թէկ թուացիկ — բաներ պատմեց «Մաթէն»ի շրջուն թղթակիցը, որ միևնոյն պաշտօնով դրկւած էր Անգլիա, Գերմանիա, Իտալիա և այժմ Պաղեստինէն ձայն կու տայ:

Ոչ մէկ արտասովոր մերկացում՝ Անրի տը Քորապի այդ յօւսածաշարքին մէջ: Օրը օրին, աւելի ծանրակշիռ իրողութիւններ կը պարզեն թիւրքերէն թերթերը: Իսկ, թիւրքերը չմարտեցին իր դիպուստի հարւածները, և հայրենասիրական պարտականութիւն սեպեցին հայհոյել, յառաջիկային փառաբանելու համար: Մասնաւոր եթէ յաջողի փոխառութիւն մը ձեռնարկը, որուն զետիւր պատրաստելու համար «պարզեւտր» մրցում մը սարքած է Պոլսէն, պատկառելի գումարով մը, զի սէտս զարգացելոց: Ի պատի՛ւ Փարիզի ծանօթ մամուլին, որ ոյժ ունի ո՛րևէ ձեռնարկ յաջողցնելու կամ ի դերև հանելու:

Համախի թոռներ մարմինը վերցուցին, բայց ոգին կը պահեն: Քաղաքացիական և լրագրական վարիչներու բարբերուն, և դարերէ ի վեր վայելած ըլլալով «անուշեղ» քաղաքականութեան անգին բարիքները, անոնք հաւատարմօրէն կը շարունակեն հայրերուն աւանդութիւնները, և եթէ առաջին, երկրորդ, երրորդ փորձը չյաջողի, կանգ չեն առնիր տասներորդին առջև, ամէն անգամուն ճոխացնելով հրապոյրներն ու գումարները: Աւելի հետունները չերթալու համար, յիշե՛ք, որ զեռ 1894-ին, մինչև իսկ դեպքաններ և հրապարտողները, կամ անոնց թարգմաններն ու գործակատարները հրապուրելու ձեռք գտած էր հանգուցեալ Պապը Ալին, որպէսզի «պատշաճ» եղանակով խմբագրելի ջարդերու տեղեկագիրները, եթէ կարելի չլլայ ըրողութիւն ուրանալ, հերքել զանոնք: Կիրակիոյ դրաման շրջանին, հրաշքներ գործեց Սուպհի փառա մը, իր հանքմին հետ: Այնուհետև, քանի սաստկացան հայահալած բարբարոսութիւններն ու հայաջինջ սարսափները, այնքան կատարելագործեցան հրապուրելու միջոցները, կարեւորական ցանցը հասաւ մինչև մայրաքաղաքները, և Արևելքի ամենէն բարբարոս պետութիւնը սկսաւ տուն տալ պաշտօնական և կիսապաշտօնական օրկաններու խմբագրականներուն: Ըօթիները, Գյոտ Տարէրներն ու Մարշանները պատահական երևոյթներ չեն: Հարկ է թղթատել, մանրակրկիտ պրպտել պետական և սեղանաւորական գրասենեակներու դիւանաթուղթերը, իմանալու համար ամբողջ գաղտնիքը շատ մը այլապատկանաց: Բոյճիկները քանի մը տարի առաջ հրատարակութեան տէին: շատ մը փաստաթուղթեր, Փրանսական մամու-

լին շնորհաւճ պարգևներու մասին, սուլթաններու և ցարերու կողմէ: Իսկ այսօր աւելի դժուար է իմանալ քաղքեհի-գրամատիրական մամուլին վայելած շնորհները ոչ միայն իթթիհատական կամ քեմալական իշխանութեանց, այլ և խորհրդային իշխանաւորներու ձեռքով:

Ուրեմն, աւանդութիւնները կը շարունակւին: Ու մի գարմանաք որ, այդ մամուլին մէջ, տող մը դէր չէք տեսներ հայ ժողովուրդին մասին: Իսկ թիւրքիոյ և թիւրքերու մասին միշտ արգասուոր է զետիւրը, կը բաւէ, որ ցանող և հնձող գտնուի:

Սերմացան մը եկած է արդէն, Պոլսէն: Թրքական երեքշորս վարչաձեւերու տակ եփած մարդ մը, որ Փրանսացի ըլլալու առաւելութիւնն ալ ունի, և շատ լաւ կը հասկնայ փարիզեան խմբագրի լեզուն:

Ի՞նչ իրողութիւններ կը մատնանչէ «Մաթէն»-ի խմբագիրը—

1. Ոստիկանական և լրտեսական խտուրթիւններ: Անտանելի և երկար ձևակերպութիւններ՝ անցադրի վաւերացման համար: «Ձորս ժամ թափառեցայ գրասենեակէ գրասենեակ»:
 2. Առևտրական մեղեւորութիւն: «Ձի բաւեր վերցնել վանդակներն ու ջողերը»:
 3. Դարաւոր սովորամուծութիւն, անհողութիւն: «Նապալա-եալաջ»:
 4. Խոր անվստահութիւն օտարներու հանդէպ:
 5. Անսահման ամալութիւն և քայքայում Պոլսէն մինչև Կիլիկիա, որոնց դիմաց կատարւած աշխատանքները շատ ողորմելի են: 157 միլիոն ոսկի ունին չըջարերութեան մէջ, մինչ և լեւմտացոյցը կանցնի 230 միլիոնը: «Մէկ ջրիս գմբուխտով երկիր չի վերաշինելը»:
- Եւ այս բոլորը՝ ցիր ու ցան, պատահական խօսակցութիւններով երևան հանւած: Հանրօրոշուտ շինութեանց գործավարը կը խոստովանի թէ՛ հազիւ 3500 ջրիմետր երկաթուղի ունին, գոր պիտի բարձրացնեն 10,000-ի: Ծախք հաշւած են 600 միլիոն ոսկի, որուն հարիւր միլիոնը հարւած է արդէն: Տակաւին պիտի չունեն նասահանգիտներ, թուճբեր, խճուղիներ (2500) ջրիմետր՝ ինքնաշարժի համար, դէպի Կովկաս և Պարսկաստան) ևն: Կարճ խօսելով, պէտք ունին քսան միլիոնա Փրանքի, չառ առաւելն 15 տարւան մէջ, որպէսզի թիւրքեան դառնայ փոխանակութեան էական քառուղիկ Եւրոպայի և Ասիոյ միջև:

* * *

Հիմա թղթատեղք թիւրքերէն թերթերը:
 «Թիզամ»-ի համաձայն, Լեթէ չհասկնաք Ռուսաստանը, Եւրոպայի մէջ ոչ մէկ երկիր թիւրքերոյ չափ ընդարձակ տարածութիւն ունի: Արգարե, թիւրքերոյ տարածութիւնն է 762,736 քառ. քիլոմետր, «որ կրնայ հարիւր միլիոն հոգի կերակրել»: Ձեզընը՞վ անպէտ հողերը, կը մնայ 500,000 քառ. քիլոմետր, «որ եւրոպական երկիրներուն չափ հարուստ է»:

Արդ, այս տարածութեան վրա թիւրքերը կը հաշւին 14 միլիոն բնակիչ, որուն առևանգն մէկ երրորդը կը դալարել սև թշուառութեան մէջ, առանց հաշուելու պարբերական աղէտները և ներքին խռովութիւնները:
 Անշուշտ այս իրողութիւնը չի նշանակեր թէ թիւրքեան սրբնթաց կը կործանի: Ազարակապան մը կրնայ 100 արտ ունենայ և անոնց տասը միայն մշակել, միւսները ձգելով խոպան: Այսօրեան թիւրքեան ալ այդ վիճակին մասնուած է: Միայն թէ՛ չի կրնար բարգաւաճել իբրև պետութիւն, առանց ներքին հօգը ճիգի մը, այլ մասնաւոր պրտաքին շահախիղ ամպլոգութեան: Իսկ այս վերջինը կը պահանջէ անհաշիւի միլիոններ, որոնք եթէ տրամադրին, թիւրքեա դժուար թէ կարենայ այնքան յոխորտանալ իսսիլ իր ազգային անկախութեան մասին: Գաղաքական անկախութիւնը, այսօր, իր սնունդը կտանէ արեւտական անկախութեանը, և թիւրքեան, որ կուզէ ստիւիանայ և արդէն խոշոր քայլեր նետեց, յարատև պայքարի մէջ է, երկուքը մէկ ապահովելու համար: Նորէն «Թիզամ»ն է որ կողորայ.

«Իժբախտաբար մեր բնական հարստութիւնները գիտականօրէն քննած են: Գիչ մը մուծին մէջ կը քայլենք, չենք դիտեր մեր հարստութեան ստորիանը: Մենք այս մասին դրամ չենք ծախսած և մեր ունեցած տւեալներով չենք կրնար կատարել այս գործը»:

Թողունք բնական հարստութիւնները, որոնց պետումն ու շահագործումը միայն պիտի կանխէր թիւրքերոյ տարեկան ելեմտացոյցը: (Յիշենք, անցողակի, որ ամէն տարի իբրև նախաձեռն ցոյց կը տրի 200-240 միլիոն ոսկի, բայց այս դումարը պարզապէս աչքի փոշի փչելու համար է: Իրականին մէջ շատ համեստ ելեմտացոյց մը ունի թիւրքեան): Թողունք հողին տակէն հարստութիւններ հանելու և շահագործելու խնդիրը: Հողին երեսը եղած հարստութիւններն անգամ փճանալու դատապարտւած են: Այս ամառ թիւրք թերթերը երկար զբաղեցան կաղինի բերքով: Հիւանդութիւն մը փճացուցեր է բերքը և մարդիկ դեռ նոր խնդի եկեր են: Անցեալ Յուլիսին, առևտրական սենեակի պաշտօնապալէս կը հաղորդէր թէ 250,000 կենտինանք է այս տարւան բերքը: Յետոյ ճշտումներ կատարելով, հաշուց 200,000, 90,000, մինչև 60,000 կենտինանք, ինչ որ հաւասար է աղէտի մը: Ամէն տարի կաղինի ընդհանուր բերքը նազգադոյն 100,000 կենտինար էր, իսկ առաւելագոյն՝ 600,000: Մինչդէռ այս տարի անցեալ տարւան կէսին ալ պակաս է, որով արտածումն ալ 14 միլիոն ոսկի պակաս պիտի ըլլայ, եթէ չհաշուենք անանկութիւնները: (Կարգ մը թերթեր մինչև 20,000 կենտինար հաշուցին բերքը, մինչդեռ 300,000 կը նախատեսէր և երկու միլիոն ոսկի կանխավճար եղած

էր: Ութսուն տարեկան ծերունիներ չէն յիշեր որ այսքան ողորմիլի բերք հասած ըլլայ կիրատոնի մէջ):

Ուրիշ պարագայ մը.— այս տարի չափազանց առատ եղած է պտուղի արտադրութիւնը, մասնաւորապէս Թրակիոյ մէջ: Մասնաւոր աննախընթաց կը համարուի սեխի և ձմերուկի բերքը: Եւ սակայն, «պտուղները կը փոխն պարտէզներու մէջ: Գնորդ չկար: Պոլիս փոխադրուած ահպին քանակութեամբ պտուղները փոսած են վաղոններու մէջ: Գիւղացիները կը նախընտրէին պարտէզներու մէջ թողուլ բերքը, որպէսզի փոխադրութեան ծախքէն ազատին: Փտութեան դատապարտւած են նաև Պրուսայի դեղձերը»:

* * *

Գիրք մը ևս թիւրքերոյ մասին.— «Mustaph Kémal ou L'Orient en marche» (Մուսթաֆա Գեմալ կամ Ալեմիլ դը յաապ կը յաապ): Հեղինակն է՝ Փոլ ժամբիդոն, «Թան»-ի Պոլսոյ թղթակիցը, այժմ Հռոմ փոխդուրած: Արաբտու լրագրող է ճարտիկ աշխարհաքաղաքացի, պ. ժամբիդոն իր երկրին շահերը յարմարցնել զիտէ արհեստին պահանջներուն, և պարբերաբար գրքի վերածել իր թղթակցութիւնները: Գիտէ, նաև, յարմարիլ հովերուն: Պոլիս դունած չըջանին, միևնոյն տանել թղթակցին ըլլալով Բալկանեան երկրներու, միջոց կը գտնէր նոյնքան դիմաւորուն հողագործական իշխանութիւնը (Սթամպուլինսքի), որքան զայն տաղալող ոյժը, այսօրեան կառավարութիւնը: 1922-ին անգամ մը ճամբորդած ըլլալով Էնկիւրի, կը դառնար տաք տպաւորութեամբ, և պարտք համարեց դասախօսութիւն մը տալ Սօֆիայի մէջ, ի նպատակ քեմալականութեան: Այնուհետև, ամբողջ հինգ տարի, պարբերական թղթակցութիւններով ներկայացուց նոր թիւրքեան, որուն սպազային կը հաւատայ առանց վերապահութեան:

. Թրքառէ՞ր է պ. ժամբիդոն. կամ շատ հաճոյակատար: Ձևը ուզեր քրքրի: Մէջտեղն է իր գիրքը — ամփոփումը իր թղթակցութիւններուն (346 էջ), ու պարբերաբար թարգմանութիւններ կատարուած են մէջ թերթերուն մէջ, բայց կարժէ նորէն թղթատել: Ու մասնաւոր պարողն այն իրողութիւնը թէ՛ մարդիկ այլու և չեն տարբար հին ծանօթութիւններով, և այսօրեան թիւրքեան կը դատեն ինչպէս իր կայ, ինչպէս որ կընթանայ: Չմտնինք մարդոց սրտի ծալքերուն մէջ, և ներկայացնենք ա՛յն ինչ որ կըսեն: Ուրովհետև, այլ ևս ժամանակը անցած է միայն անուշ, «հայասիրական» ձայները լսելու, և կոպիտ իրականութիւնը մտացութեան տալու:

Իր յառաջաբանին մէջ, պ. ժամբիդոն սուր հեգնութիւն մը կարճակէ բոլոր անոնց դէմ, որոնք տարիներով և հատոր հատորի վրա բարդելով կը շեշտեն թիւրքերոյ անշարժութիւնը, հեղուցութիւնը, անհողութիւնը, ճակատաբազապաշտութիւնը և զայն կը ներկայացնէին իբրև անդարձանիլ բրածոյ մը: «Նոյնիսկ ոմանք իր մօտալուտ անհետացումէն կը ճառէին, իր մահազգը կը հրատարակէին»:

Այդ բոլորը սուտ ելան: «Այսօր, այլևս կարելի չէ

առանց հոմերեան ծիծաղի մը կարգաւ այն դերքերը, որ կը խօսին մտիա դարձած և մահամեծ թիւրքիոյ մասին, ինչպէս և այն բոլորը որոնք անշարժ Արևելք մը կը ներկայացնեն: Թիւրք ժողովուրդը, առաջինը խառն ժողովուրդներուն մէջ, յարմարեցաւ մեր ըստ-զաբակութեան: Եւ արդէն, Թիւրքիոյ օրինակը իր պատշաճութեամբ տաւ է: Պարսկաստանը, Աֆղանիստանը, Սիւրիան, Եգիպտոսը, Արաբիան իսկ խորհունի բարե-չըջման ենթարկուած են: Ճիշտ է, դիմադրութիւններ կան տակաւին. որովհետև, զեմալական բարենորոգումներու յաղթանակը՝ նշանն է իսլամական բոլոր հին բանաձևերու մահան: Բայց այժմէն, վստահաբար և ստուգապէս կարելի է նախատեսել հին Արևելքի հաշ-ւեյարգարը բոլոր ասպարէզներուն մէջ, — զաղաքա-կան, ընկերային, մտաւոր, գեղարուեստական, անու-սական: Նոր Արևելք մը կը ծագի: Իսկ դայն շահան-լով, Եւրոպան կրնայ տարբերակ տնկալներու առջև դնել ինքզինը»:

Այլ աւելի՛ մենք, որ անորձական շահ սենինք մեր աչքն ու ականջը սուր պահելու Թիւրքիոյ հանդէպ:

Գրքը բաժնուած է 12 գլուխներու, որոնցմէ մրջը կը վերաբերէ ոչ-խլամ փոքրամասնութեանց խնդրոյն:

Մէկզի դնելով արդէն պատմութեան անցած դէպ-քերն ու անդհարկութիւնները, ակնարկ մը՝ փոքրամաս-նութեանց դրսևում վրաս: Միայն թիւրքական պրոգրեսիւր բաղնիքով իր նիւթերը և միշտ հակամէտ՝ զեմալական տեսակները պաշտպանելու, պ. Ժանթիլյուն յաճախ թիւրքիստանութեան մէջ կիսիայ, փոքրամասնութեանց իրաւունքներու մասին խօսած ասէն: Իր կարծիքով, բոլոր փոքրամասնութիւններն ալ յօժարակամ հրաժա-րած են Լոզանի դաշնագրին տրամադրութիւններէն: Առանց վիճելու, այստեղ նոյնութեամբ կը թարգմա-նենք հասուած մը՝ Հայրերու ներկուած մասէն (էջ 258—259) .

— «Վ. Պալայոյ հայ հասարակութեան քննարկներն իբր 900 ստորագրութիւններով հանրագրութեամբ մըն էր որ Գրիգորեան Հայելը ինքնաբերաբար հրաժարեցան, իրենց կարգին, Լոզանի դաշնագրին փոքրամասնու-թեանց իրաւունքներն: Այս վիճակն արարէր արտա-վաբար լաւագոյն գրաւական մը պիտի կազմէ Թիւրքե-րու և Հայերու միջև ներդաշնակ արագայի մը մասին. նոր հանրապետութեան շրջանակին մէջ: Եւ սակայն. միշտ այն պահուն էրք երկու գեղերը, որ դեռ երկէ քաժմուած էին անագոյրսի հակամարտութեամբ մը, ձեռք կերկարեան իրարու, ժրմիկ մէջ յղացուած է ծրա-գիր մը. դէպի Կովկաս, Երևանի շուրջը ուղղելու հա-մար մեծ թիւով Հայերը՝ մասնաւորապէս Սիւլիաշէն, Յունաստանէն և Պուկարիայէն: Արդ, հայկական նոր զանգամով մը այս սեղափոխումն ու սեղաւորումը Կովկասի մէջ, կրնան շատ մը փափուկ խնդիրներ յա-րուցանել: Նայի, ստոյգ է որ մարդաբարկան տեսա-կետէն, նոր ձեռնարկը, որուն Մոսկուան այժ կուտայ բոլոր միջոցներով, կը կազմէ սգրքանադրութիւն մը լուծելու Մոսուտը Արևելքի ամենէն զմեզակ խնդիր-ներէն մէկը, ամէն պարագայի մէջ ամենէն կարևորնե-րէն մէկը այն խնդիրներուն գոյս մեծ պետութիւնները չկրցան լուծել պատերազմէն յետոյ: Բայց — կը հարցնեն Թիւրքիոյ հանրային կարծիքն ու մասուրը —

խորհրդային իշխանութեան կողմէ այնքան յանկարծա-կի րնծայած դիւրութիւնները արտասահմանի Հայե-րուն, որոնց մէջ բազմաթիւ են ամենք որ դաւաճանած են թիւրքագոյնին դատին և փայտած՝ քննարկան ցորեյնու զանազան տոնն. իսկպէս միայն մարդա-սիրակա՞ն զոհողութիւն մըն է: Արդեօք այդ դիւրու-թիւնները չե՞ն բխիւր քաղաքական կարգ մը նկատու-մներէ, որ կը ձգտեն. օրինակ, Կովկասի հարաւորագը կազմել հայկական հակաթիւրք գոնգաժ մը, կու հպատակ՝ Մոսկուայի հրամաններուն: Կարն խօսքով, հարկ է, այսօրքնէ իսկ, շեշտել թէ հայկական մեծա-թիւ գոնգաժներու տեղադրումը Կովկասի մէջ, կըր-նայ, օր մը, անգամ մըն ալ սրիւով Անատոլի փաշ-րաւանսութեանց խնդիրը, թիւրքեառու նոր հարց մը յարուցանի»:

Ամէն կերպով թիւրքական շահերը պաշտպանելու փորձ մը, որ սակայն թանկագին վնասութիւններ կը պարունակէ մեզի համար:

Թղթակէրը կը խոստովանի թէ, հակառակ օրէնքին հռչակած հաւասարութեան, զորոնական կեանքի մէջ խորութիւն կը տիրէ խլամ թիւրքին և ոչ-խլամներուն միջև: «Ոչ-խլամ թիւրք զաղաքացիները տակաւին չեն ընդունելու հանրային պաշտօններու և պետական մարչսութեան մէջ: Թէև ընտրող և ընտրիչ, անոնք ոչ մէկ կրնան փոխան ունին Ազգային Մեծ Ժողովին մէջ: Նաև, ոչ մէկ սպայ: Վերջապէս, չեն կրնար առանց արտօնութեան հետանալ որոշ շրջանակէ մը: Եւ ահա թէ ինչու, տակաւին երկրին մէջ կան երկու գաս զաղաքացիներ, անհաւասար իրաւունքներով, — իսլամ-ներ և ոչ-իսլամներ» (էջ 261):

Բայց, միշտ բարեհաճ և թրքամէտ, պ. Ժանթի-լյուն՝ այս խորութիւնը կը վերագրէ ոչ թէ կրօնական տարբերութեան, այլ բարոյական և անտեսական պատ-ճառներու: Առաջինը բացատրելու համար, կը յիշէ թէ անկախութեան պատերազմին զվարկէրը դասն հետքեր ձգած են բուն Թիւրքերուն վրա, որոնք չեն վստահեր ոչ-իսլամներու անկեղծութեան, և հաւատարմութեան աւելի իրական փաստեր կը պահանջեն Յոյներէն, Հա-յերէն և Հրեաներէն: Երկրորդը, անտեսականը, ունի աւելի խոր պատճառներ, — Թիւրքը վարժեցնել ար-հեստի և աւետարի, հարստութիւն դիպելու, որ ոչ-Թիւրքերուն շնորհն էր:

Ինչպէս յառաջաբանը, դրքին վերջաբանն ալ շատ լաւատես է Թիւրքիոյ արագայի մասին.

— «Պիտի դայ օրը, երբ Թիւրքը պիտի գտնայ ճշմարիտ զաղաքացի մը և Թիւրքեան պիտի ունենայ հանրային կարծիք մը: Որովհետև, հում նիւթը լաւ է: Եւ արդէն սիրտուն մէջ իսկ դրախ է կերպարանափո-խութիւն մը... Յստուի ճիւղ մը կը բաժնէ երկհասն սերունդը այսօրու սերունդէն և միևնոյն ընտանիքին մէջ հայրն ու տղան յաճախ իրարու խորթ են: Կարելի է ըսել թէ հանրապետութեան ամբողջ տարածութեան վրա չին Թիւրքը անհետացած է: Անոր դերը վերջացած է: Իր վրա ճնշող անցեալը կընըր կարտաքսէ ազգային կեանքէն: Մոսթաֆա Բեմալի բարձր ղեկավարութեան տակ, երեսասարգները տիրացած են երկրին և Թիւր-քեան դէպի նպատակը կը բալէ յամբարար, բայց ուղղակի»:

ԳԵՐԱՍԻՄ ԱԹԱԶԱՆԵԱՆ

Սոյն թւի օգոստոսի վերջերին, Չանդեգուրից դէպի Պարսկաստան անցնելիս, ոռու սահմանապահ զինուորների գնդակին դո՛ւ է գնացել Գերասիմ Աթազանեանը, կամ, ինչպէս ծանօթ էր առհասարակ, Ղափանցի Գերասիմը:



Ո՞վ էր նա:

Մինչև 1917թ. յեղափոխութիւնը Գերասիմը հասարակական և մարտական ասպարէզներում աչքի ընկնող դեր չէ խաղացել: Մնւած խորխոր Ղափանի Գիւտակում գիւղում, նա մեծացել է իր հայրենի լեռներում ու անտառներում և տակաւին պատանեկան հասակից յայտնի է դառնում, որպէս քաջ որսորդ և անշեղ նշանառու: Իր բնաւորութիւնն էլ կոխում է բնութեան արհաւիրքների ու դազանների դէմ մղած յանդուգն պայքարում: Ամուսնանում է շատ վաղ և որպէս բանուոր աշխատում է սկզբում Բաբելի նաւթահանքերում, ապա Ղափանի պղնձահանքերում: Համարում է գիտակից բանուորներից և բաւականին ազդեցութիւն է ունենում ընկերների շրջանում:

Ռուսական Մեծ Յեղափոխութեան ալիքը հասնում է և Ղափան՝ խորտակելով միապետութեան կաշկանդէի շղթաները և գործունէութեան լայն ասպարէզ է բացում ամենքի համար, ով իր մէջ կրում էր յեղափոխութեան սաղմերը: Դեռ ևս հանքերում, բանուոր Գերասիմը բռնուած էր յեղափոխական կայծերով: Իր մէջ նկատում է ուժեղ հասարակական ջրղ, որը աւելի ևս դարգանում է յեղափոխութեան յետադայ տարիներին: Իր կտրիճ, չիտակ ու համարձակ բնաւորութեամբ նա շատ կարճ ժամանակամիջոցում կարողանում է դրաւել հասարակական որոշ դիրք, և մի

երկու տարի անցած այլևս Ղափանում եղակի դէմք է: Բոլշևիկեան յեղաշրջումի հետեանքով Անդրկովկասում ստեղծւած քառասայիս դրուժինը է՛լ աւելի վտանգաւոր է դարձնում շորս կորմից թշնամի թուրքերով շրջապատւած Ղափանի հայութեան վիճակը: Ժողովուրդը մղում է գոյութեան օրհասական կռիւ, և Գերասիմը դառնում է Լեռնահայաստանի ինքնապաշտպանութեան սիններից մէկը:

Սկզբում իրենց զիւղի վաշտապետ, ապա շրջանային հրամանատար և վերջը ամբողջ Ղափանի ռազմական ղեկավար — նա Գերասիմի շորսամեայ զինուորական կեանքը: Եւ այդ կարճ ժամանակամիջոցին նա այնպիսի յանդուգն ձեռնարկների է մասնակցում ու անհասական այնպիսի քաջագործութիւններ կատարում, որ իր անւան շուրջ բազմաթիւ առասպելներ են հիւսւում: Իբրև Նժդէհի զինակիցներից մէկը, Գերասիմը, բոլշևիկների օրով ապաստանում է Խուստուպ և այնտեղից կազմակերպում հակաբոլշևիկ շարժումը, և երբ ժամանակը հասնում է, մի քանի օրում մաքրում Ղափանը կարմիր զորամասերից: Այս կռիւներին էր որ նա մի քանի ընկերներով գերի է առնում հարիւրաւոր ոռու զինուորներ:

Լեռնահայաստանի անկախութեան օրերին, Գերասիմը, որպէս Ղափանի հրամանատար, հոգատար վերաբերմունք է ցոյց տալիս Երևանից նահանջող Ժողովրդին ու զորամասերին, որոնք Հանքերի վրայով անցնում էին Պարսկաստան: Եւ բոլշևիկեան գրոհին դիմադրելուց յետոյ, երբ յեղափոխական բանակը տեղի է տալիս ռուսական զերպանց ուժերին, անցնում է Արաքսը ամենազերջին անցողների հետ միասին:

Կարճահասակ, վսիտ մարմնով ու արագ շարժումներով մարդ էր Գերասիմը: Այնքան անտպաւորիչ էր արտաքինը, որ դժար էր հաշուել այն մտքի հետ, թէ այս փոքրիկ մարդն էր Ղափանի հերոս հրամանատարը: Իր համեստ ու պարզ բնաւորութեամբ, սիրալիք ու ընկերական վերաբերմունքով նա ամենքի մէջ համակրանք էր առաջացնում: Վտանգի բուպէին, կուրի ժամանակ նա դառնում էր անճանաչելի՝ յանդուգն ու վճռական:

Պէտք էր տեսնել Գերասիմին, երբ դրուժինը ճակատում այլևս դարձել էր անյուսալի և Լեռնահայաստանի անկախութեան օրերն հաշուած էին: Ղափանի բոլոր գիւղերից Հանքեր հաւաքեցին պատգամաւորներ՝ խորհրդակցելու ստեղծւած կացութեան մասին: Պատգամաւորական ժողովի ճնշող մեծամասնութեան տեսակէտն այն էր, որ այլևս անիմաստ է դիմադրելը և միակ կէը խորհրդային վարչաձևը առանց կուրի ընդունելն է: Գերասիմն ամէն կերպ ճշնում էր համոզել,

որ դեռ վաղաժամ է յուսահատուել և պէտք է զէնքը ձեռքին թշնամու առաջխաղացման առաջն առնել և կամ՝ կուի դաշտում պատուով մեռնել: Տեսնելով, որ խոսքը ուժով անհնար է իր աեսողէտն սեղկացնել, նա, յանկարծ, վեր թռաւ տեղից և ձեռքը սեղանին ամուր դարնելով՝ բացազանչեց. — «Սա դուստանուութիւն է, հպարտ Ղափանի չի կարող վիղբ ծոել թշնամու առաջ և իր կամքով գրկուել ազատ ու անկասկէանքից: Ես իմ զինուորներով դուրս կը գամ կուելու, և ձեզինք մէկիս ու մէկը թող համարձակի արգելք հանդիսանալ...»

Բարկութիւնից կարմրած ու դողդոջիւն՝ դուրս եկաւ սրահից: միւս օր բոլոր զեղերի վաշտերն արդէն Հանքերում էին՝ պատրաստ կուի...

Կոիւր Գերասիմի տարերքն էր: Ժակառ մեկնելուց առաջ դճոյր-սրահնան նստում էր, մարտիկներ սկսում էին պարել և ուրախանալ, Գերասիմն էլ՝ նրանց հետ: Եւ մի լաւ պարելուց յետոյ շարժում էին դէպի կուի: Կոիւր այդ քաղ յեռնականների համար խաղ ու պար էր:

* * *

Տարազրի կեանքին Գերասիմը շկարողացաւ համակերպել: Կտրել իր միջավայրից ու ժողովրդէից, թողնել կուի դաշտ՝ անհարկազատ եւ նրա անհանդիստ խանութքին: Յարաւում պաշարք ու պատուաւոր մահ՝ ահա ռազմիկի կեանքի նշանաբանը: Եւ մէկ ամիս հազիւ թաւրիցում մնացած՝ նա դադարի վերադառնում է հայրենիք:

Ղափանում Գերասիմը սպրում է վաղտնի: Երկու և կէս տարի կրում է ամէն զրկանք և ենթարկում հազար ու մի վտանգների: Ականատես է լինում իր պաշտած ժողովրդի ստապաններին ու բուշելիկան վաշտապետներին: Բանիք-քանիք անգամներ նրա մտքով անցնում է պատժել անարգ իշխանաւորներին ու շարժում առաջ բերել: Բազմաթիւ անջամներ այս ու այն կողմից դիմումներ է ստանում, որով պատրաստակամութիւն է յայտնում ապստամբելու: Սակայն, հաւատարիմ կուսակցութեան հրահանգին, ատամներ սեղմած՝ մինչև վերջ մնում է իշխանութեան հանդէպ օրինապահ: Թէև նրա ներկայութիւնը ահ ու սարսափի տակ է պահում շրջանի պաշտօնէութիւնը, բայց և նրանցից ոչ մէկի քիթը չի արինում: Յետապային Գերասիմը պատում էր, թէ հոգեկան ինչպիսի ծանր պարտմաներ է ունեցել այդ օրերին: Բոլոր հնարաստութիւններն ունենալով հաշուարժ՝ որեւէ քայլ անելու իրաւունքը չուենեալ՝ շատ դժւար էր նրա համար: Եւ երեք տարի իրեն պահէց որպէս կարգապահ զինուոր, մազաչափ անզամ շշուղետով կուսակցական հրահանգէց:

Չկարողանալով փախտական Գերասիմին ձեռք ձգել, խորհրդային իշխանութիւնը՝ կատաղութիւնից անգոր՝ սկսում է զիւղացիկներին նկղել ու հայածանքը կրկնապատկել: Որեւէ միջազէպից խոյս տալու նպատակով, 1924թ. ամուր Գերասիմը որոշում է անցնել Պարսկաստան: Բայց թուրք առաջնորդող դուստանում է և նախօրօք պայմանաւորելով Չեկայի չևտ՝ ճանապարհին թակարդն է ձգում Գերասիմին: Չգալով դաւաղութիւնը՝ Գերասիմը կուի է բռնուում և սպա-

նելով դաւաճան թուրքերից մէկին՝ նորից վերադառնում է Ղափան:

Այս անգամ իշխանութիւնը դիմում է իր սովորական խարդախ միջոցին: Երջանի մի շարք ազդեցիկ մարդկանց միջոցով Գերասիմի հետ բանակցութիւններ է սկսում և առաջարկում է լեռներից իջնել զիւղ՝ խոտանալով անձի անձեռնմխելութիւն, պայմանով, որ նա էլ իշխանութեան հանդէպ մնայ օրինապահ: Երկար տատանումներից յետոյ Գերասիմը համաձայնում է, պայման դնելով, որ ինքը չի դիմաթափուի: Պայմանն ընդունում է և երկու տարի ութ ամուսյ փախտական կեանքից յետոյ, Գերասիմը առաջին անգամ ազատօրէն՝ զիւղամէջ է երևում: Կառավարութեան կողմից մի շարք պաշտօնների առաջարկ է ստանում, սակայն, պտուստանալով նոր դաւաղութիւնից՝ դերադատում է իր զիւղում մնալ:

Ձինադադարը Գերասիմի և իշխանութեան միջև տևում է ընդամենը մէկ ամիս: Մի օր միլիցիայակետից հրակէր է ստանում, որով շատ քաղաքավարի կերպով խնդրում է դալ Հանքեր կենտրոնից ստացւած ինչ ու կարևոր թուղթ ստորագրելու: Գերասիմն իր հետ առնելով միայն ատրճանակը՝ ներկայանում է միլիցիայակետին: Վերջինս ընդունում է շատ սիրալիբ կերպով և ծոցից հանելով մի թուղթ՝ յանձնում է Գերասիմին: Այն միջոցին, երբ Գերասիմը սկսում է կարողալ թուղթը, յետևի կողմից, պատի տակ թաղւած մի քանի միլիցիոներներ յարձակւում են վրան: Ճիգիբազէս թոյլ՝ Գերասիմը չի կարողանում դուրս պրծնել նրանց ձեռքից և հանել ատրճանակը: Երբ որ ձեռքերն արդէն կապւած էին ու այլևս անվտանգ էր, միլիցիայակետը մօտենում է և մտրակի մի քանի հարւածներ իջնցնում զլիսին: Անգօր բարկութիւնից կատաղած, Գերասիմը առիւծի նման մոնջում է. — «Նամա՛րդ, զնդակով խփիբ և ոչ թէ մարակով»...

Ժողովրդի կայրոյթից վախենալով՝ նոյն օրն իսկ Գերասիմին տանում են Գորիս: Կասկածից դուրս էր, որ ճանապարհին կամ Գորիսի Չեկայում Գերասիմին պիտի զնդակահարէին: Երբ հասնում են Որոտան գետի մօտքը, Գերասիմը խնդրում է ուղեկցող միլիցիոներներին, որ ձիւս թամբից արձակեն ձեռքերի թոկի ծայրը, քանի որ ձին արագ շարժելուց ինքը չի կարողանում քայլել, և ձեռքերն էլ ցաւում են: Միլիցիոներները զիջում են՝ վտահ, որ ձեռքերը կապւած բանտարկեալը չի կարող փախչել մի քանի կուսակցների հսկողութիւնից: Սակայն, Գերասիմն արդէն որոշած ծրագիր ունէր: Կամհիւրջից անցնելու ժամանակ, նա, յանկարծ, ցատկում է ու նետում մի քանի մետր բարձրութիւնից գետի մէջ: Ջուրն ընկնելիս գարնում է քարերին և պատում և զուրկում մարմինը: Արագընթաց գետի ալիքները սկսում են խոզդել կապւած Գերասիմին: Միւս կողմից էլ կամուրջի վրայից պահակներն սկսում են կրակել ու վազել դէպի ափ: Մուլթը վրա է հասնում, և Գերասիմը կիսաուշաթափ, շարժւած ու արինտա մի կերպ ափ է դուրս պալին և թաղւում անտառում: Պահակները, ենթադրելով թէ նա կամ սպանւած է և կամ խեղդւած, շարունակում են իրենց ճանապարհը:

Հետեկայ օրը անտառը շրջապատում է և սկսում

խուզարկութիւն: Երկու օր Գերասիմը թագաւորից դուրս չի գալիս: Երբորդ օրը միայն, Էրեկոյեան կողմը, մօտենում է անտառի ծայրին ու դիտում ճանապարհը, ուր նկատում է էշաւոր մէկ թուրք պատանու: Գաղտալողի մօտենում է թուրքին և, յանկարծ, դէմը ինչելով սպանում է սպանել, եթէ անմիջապէս իր ձեռքերի կապերը չարձակի: Վախից զողալով ու լաց լինելով՝ թուրքը հանում է դանակը և կարատում թուրքը: Մի կողմից ջերմն ու մարմնի ցաւերը, միւս կողմից քաղցն ու ծարաւը ամբողջապէս ուժասպառ էին արել նրան: Բայց ձեռքերի ազատութիւնը նոր յոյս ու եռանդ է ներշնչում և իր ազատարարի հացի կէսը վերցնելով՝ անյետանում է:

Սարափած պատանին դիզ հասնելով հաւար է կանչում: Սակայն, իշխանութեան ձեռք առած բոլոր միջոցները դուր են անցնում, և Գերասիմը ապահով հասնում է Ղափան, ուր և հիւանդանում է շատ ծանր: Մի ամբողջ ամիս մահուան դէմ մաքառելուց յետոյ, սպաքինում է և նորից բարձրանում լուս: Նորից պաշտօնէութեան մէջ իրարանցում: Միլիցիապետն անմիջապէս հեռանում է Ղափանից, և բոլշևիկները սիրտ չեն անում մտթն ընկնելուց յետոյ փոքրցում երեսւր: Կատալարութիւնը Գերասիմի գլուխը գնահատում է 3000 սօկի բարձր: Սալայն, Ղափանի ժողովուրդը չի յանձնում իր սիրած հերոսին:

Այս անգամ էլ Գերասիմը, հաստարիմ իր կուսակցութեան հրամանին, ոչ ոքի ձեռք չի տալիս, շնայած սիրտը լեցուն էր անձնական վրէժխնդրութեամբ: Այդ օրերին Երկրի մարտիները շ.Յ.Գաշնակցութեան իրզը Ընդհանուր ժողովին մասնակցելու հրաւեր էին ստացել: Լեռնահայաստանն իր կողմից պատգամաւոր է նշանակում Գերասիմին, որը 1924թ. նոյեմբերին, զապտեի, անցնում է սահմանը՝ ճանապարհակալով Եւրոպա:

Փարիզ հասաւ բուլղոզի նիհարած, յոգնած դէմքով ու սաստիկ ջղայնացած: Երեք տարիների փոթորկոտ և արկածալից կեանքը իր կնիքը դրոշմել էր վրան: Դէմքին դեռ թարմ էին Որտան գետում ստացած վէրքերի սպիւնը: Աչքի մէկը նկատելիորէն փոքրացել էր ու ջղայնութիւնից երեսը ծածածակել: Սօսկիս դէմքի մկանունքները ցնցում էին ու հաշտացն արտայայտում էր ինչ որ կասկածանք ու անվստահութիւն դէպի շրջապատը: Նոյնիսկ ժպիտն անբնական էր երևում և էլ աւելի ծամածուռու դէմքը:

Գերասիմը հարկը Ընդհ. ժողովի վերջին հասաւ: Ամաշկոտ էր, քաււղ ու ակնածամքով դէպի սուպ ընկերները: Լեռնահայաստանի մասին կարգացած գիւղացուէր դուրս էր պարզ ու միաժիտ ոճով, անկեղծ ու բուն շեշտով և ճշմարիտ ու հարգատա նկարագրութեամբ: Անահճման սիրտը և կարօտի զգացում ունէր դէպի հայրենի Ղափանն ու այնտեղ մնացած իւրայինները: Առանձին պաշտամունք ունէր Երկրի ընկերների հանդէպ և ամէն միջոց գործադրում էր պաշտպանելու համար նրանց տեսակէաներն ու շահերը:

Ջարմանալի շիտակ ու միամիտ բնուորութեան տէր էր: Միաժամանակ դիւրաբար ու ջղային: Չափից դուրս քնքոյշ սիրտ ունէր և վարչիկանի ազդեցութեան տակ տրամադրուող: Դէպի գործը խոր հաւատ ունէր և շուտ ոգևորուող էր: Չնայած արդէն 35 տարեկան տղամարդ էր, բայց դեռ ևս բնուորութիւնը վերջնականապէս չէր կազմակերպւած և ընդունակ էր հրամայելու ամէն տեսակ անակիտներ: Վճռական էր ու հիւանդոտ ինքնախերութեան տէր: Յճախ խօսքն արտասանելուց և գործը կատարելուց յետոյ էր անդադանում արածին և խորապէս աղքատ էր: Եթէ գղջում էլ էր, լեռնականին յատուկ յամառութեամբ չէր ուզում խոստովանել սխալը:

Մի ահաւոր թշնամի ունէր նա, — խաղաղ կեանքը, ուն էլ Եւրոպայի կենտրոնում: Յիշում էմ, Փարիզ հասած հետեւեալ օրը պայցիքը հաղտուս դնելու: Երբ կապիկի փոփոխուող, նայից հայելու մէջ ու շատ յուզւած, համարեա արտասուելով առայ.

— Հիմա ես ի՞նչ կարող եմ անել, երբ տասնցուս ձեռքիցս առնելով փողկապ կախեցիք վղիցս...

Ընդհ. ժողովից յետոյ Գերասիմը մի ատ ժամանակ բժշկուում է ջղային հիւանդութիւնների մի յայտնի մասնաբաժնի մօտ, որից յետոյ աշխատում է գործարանում, որպէս բանուոր, իսկ վերջին էլ մի ծանօթ բժշկի մօտ պաշտօնավարում է:

Փարիզի կեանքն ու վզից կարեւած փողկապը՝ չէին յարմարում նրա անհանգիստ խառնած քին: Հայրենիքից ստացուող արտուր լուրերը յուզում էին հոգին ու բուցովաւում սիրտը: Գործօն սրայքար և անինայ կոյի, — ահա նրա պահանջը: Թագմիկի պարզ միտքը չի համակերպուում այն դրութեան հետ, թէ հակառակորդը կարող է անպակաս կելեկեկ ժողովուրդին ու հայրենի մեր ընկերներին:

1926թ. յունւարին Հայաստանում տեղի ունեցած պետաձաձային ձերբակալութիւնները լեցնում են Գերասիմի համերութեան բամբակ: Մեր օրինակաւ ըստ քաղաքակրթութիւնը խորհրդային իշխանութեան հանդէպ խորը դժգոհութիւն էր առաջացնում նրա մէջ, և Բիւրօին ուղղած մի շարք գրութիւններով նա առաջարկում էր հակառակորդին պատասխանել հակահարեւածով՝ իրեն արամարելով այդ գործին: Պարզ է, որ Բիւրօն չէր կարող առաջնորդել ամբողջապէս գրացմունքներին վերջը դարձած մի ընկերով ցուցմունքներով: Գերասիմի դժգոհութիւնը էլ աւելի սաստկանում է, և նա վերջնականապէս կորցնում է հաւատարակչութիւնը, որը և օգտագործում են Ձեկայի դարանակալ գործակալները: Գերասիմը իրեն Դաշնակցութիւնից հեռացած է յայտարարում, խաղաղ դառնալով «Երևան» թերթի շուրջ համախմբած կարմիրների ձեռքին:

Բարոյական սայթաքումը կատարւած էր: Բարոյական անկման առաջին քայլին անխուսափելիորէն յաջորդում է երկրորդը: Փոխանակ գգասանաբաւ և սխալ ուղղելու, Գերասիմն այդ սխալն արգարացնելու համար ամբողջ յանգունքը բարդում է դեկադարների դրիին և բարտախնդիր մարդկանց թելադրանքով սուտ ու սխալ յայտարարութիւններ անում: Այլևս առանց իրենց հաշիւ տալու, Գերասիմն ամբողջապէս աղքատ է ջղերով ու գրացմունքներով, որոնց սանձը գտնուում

էր անաղնիւ մարդկանց ձեռքին: Գերասիմի մէջ խօսում է ամէն ինչ, բացի բանակոնութիւնից:

Մեր կուսակցութեան պատմութեան մէջ ուրիշ նման օրինակներ էլ կան: Գերասիմից շատ աւելի աչքի ընկնող դաշնակցականներ սայթաքում են ունեցել: Բայց նրանցից և ոչ մէկը անպատիժ չի մնացել: Պատժւեց և Գերասիմը: Կուսակցական շարքերը երես դարձրին նրանից և Երկրի իր ընկերներն ու Հարազատները խիստ զատապարտութեան խօսք ուղղեցին: Կան յանցանքներ, որոնց արտաք զբաշտում է զործարարի ճակատին և կեանքի սե. բիծը անհնար է մաքրել՝ նոյն իսկ պատուաւոր մահով:

Սակայն, ի՞նչն էր Գերասիմի ահաւոր յանցագործութեան րուն պատճառը:

Այդ պատճառները երեք են: Առաջինը՝ անձնական է: Այդ մասին դժւար է հրապարակով խօսել: Յեղափոխական և կուսակցական լինելով մէկ տեղ Գերասիմը մարդ էր և, ի հարկէ, նրան էլ յատուկ էին մարդկային սպրտմաները...

Երկրորդ, Գերասիմը քաղաքականապէս հասուն մէկը չէր: Նա պայքարող ու զայափարէ համար միշտ զոհուելու պատրաստ մարտիկ ոչ էր: Նա էլ համախած էր Երկրի գանգաձիւ հոգեբանութեամբ, մի հոգեբանութիւն, որը կարմիր թերի պէս անցնում է մեր ազատարական շարժման պատմութեան ամբողջ ընթացքում: Այն է, թէ արտասահման ամենազոր է և իր արամադրութեան սակ ունի ամէն հնարաւորութիւն: Վճռական պայքարի ձգձգումը և արտասահմանեան մոգական դաւազանի հրաշագործութեան ուշանալը յուսախարութիւն և յուսալքում է առաջ բերում անկայուն ու ջղային հիւանդոտ բնաւորութիւնների մէջ և այստեղից — սայթաքումը: Արտասահմանեան դառն իրականութիւնն ու գաղութային հիւանդոտ մտայնութիւնն անպայման կարեւոր ազդակներ են և Գերասիմի հոգեկան աշխարհի յեղաշրջման լուսաբանութեան համար: Նրա քայքայած ջղերը չղկմացան այդ փորձութեան:

Երրորդ և ամենակարեւորը՝ Գերասիմի կուսակցական դրութիւնն էր: Նա իր խտնւածքով յեղափոխական էր և համոզումներով դաշնակցական և որպէս այդպիսին էլ մեռաւ: Սակայն, դէպքերի բերումով և իր անձնական յատկութիւնների շնորհիւ էր, որ նա որոշ տեղ զբաւեց մեր կազմակերպութեան մէջ: Միանգամայն գուրկ կուսակցական դատախարակութիւնից՝ նա չէր անցել կուսակցական-յեղափոխական աջ դպրոցը, ուր իւրաքանչիւր ընկեր մինչև ուղն ու ծուծը համակուծ էր դաշնակցական դաղափարներով ու բարոյական-

նութեամբ: Նրան անձանոթ էր դաշնակցական կենցաղը, կուսակցական բարոյական կողմը նրա մէջ թոյլ էր մնացել: Որով և իր դժգոհութիւնն արտայայտելու և տեսակէտը պաշտպանելու ձեւերը չիմացաւ:

* * *

Գերասիմի սայթաքման դրդիչները, անձնականից դաս, գերազանցապէս հատարակական էին: Նա իր արարքը բացարձակ էր որպէս միակ միջոցը օգնելու հալածական ընկերներին ու հայրենակիցներին: Փարեգում էրեն հաստացրել էին, որ Երկրում ամէն ինչ փոխել է և իշխանութիւնը դրժաղրում է իր դրած պայմանները: Եւ հրաւիրում էին անձամբ դնալ ու ստուգել: Ո՞րք միամտ: Կարծում էր, թէ իր պայմանները որեէ արժէք ունէին խորհրդային կառավարութեան համար և իր բարոյականի զահարելումով կարող էր փրկել ժողովուրդը: Ինքն իրեն դաւաճան չէր համարում և այն հաւատն ունէր, որ սպառաշում ուրիշներն էլ կը համոզուեն այդ բանում:

Եւ մեկնեց Հայաստան: Գրան յաջողուող դէպքերը յայտնի են ամենքին: Իր պատածի ճշշտ հակառակը տեսնելով և բարոյական վերջնական անկումից ու ստոյգ մահուանից փրկելու համար, 1928-ի վերջերին, ընտանիքով, փոխաւ Պարսկաստան, որտեղից մի շարք թղթակցութիւններով արտասահմանեան մամուլի մէջ խորհրդային դաւազիլ ու կործանարար քաղաքականութեան մեղակցութեան արաւ:

Պարսկաստանում իր նախկին ընկերներն այնքան էլ զրկարաց չընդունեցին նրան: Այդ հանգամանքը խորապէս ազդել էր վրան: Միջոցներ է մտածում անարգանքից ազատուելու: Միակ ելքը մնում էր գործնականում սպառուցանել իր ինչ լինելը: Եւ շատ շանցած նորից վերադարձաւ Երկիր, որտեղից յետ դալիս սահմանի վրա ընկաւ թշնամու գնդակից:

Եւ ընկաւ տղամարդու պէս: Ստացած տեղեկութիւններից երեւում է, որ նա հնարաւորութիւն ունեցել է խոյս տալ կուլից և ազատել մահուանից: Բայց անպատուութիւն է համարել թիկունքը սոյց տալ թշնամուն և, անգամ առանց գետն անցնելու, ջրի մէջ ճակատ աւ ճակատ կուլ է բռնել և զարնել է կրծքից:

Իր վերջին նամակում Թաւրիդից, Գերասիմը նորից ու նորից յիշեցնում է, թէ ինքը երբեք չի դաւաճանել և չի դաւաճանի իր դաղափարներին...

ԱՇՈՏ-ԱՐՄԻՐՈՒՆԻ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՃԱԽՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Մասնատար Գամակից)

8 նոյեմ. 1929

... Դուք գիտե՞ք, որ ես մեկնեցի իբրև բարեկամ-կամ: Կարձուեմ էի, որ խորհրդային իշխանութեան մասին գրասենյակից շատերը սուտ են կամ դիտարկում կերպով շահագործում Իրականութիւնը ցոյց տես: առիթն, ջան ես սպասում էի:

... Մասնատարի վրա են Թաղային Կոմիտեի ան-կանութիւնները: Դախ խիստ շննեցին անպարտքը, ապա պայտասկները, որքան զրամ ունի իրաջան-չիք ճամբորդ եւ այլն: Մասնատարը հարկադրում դրոշմը մտնելները 1 ռուբլի 94 կոպեկով: Զգալի է խնդրի միտարարը: Դարձեալ, ապա Թաղային Կոմիտեի, մարզու ընկել է Թաղապետը, այլևս ինքը իր տեղը չի ե ինքնակամ է ամէն տեսակ անմարտան անանկանները: Այդպէս էին դրանք բոլոր ճամբորդները անխախտ: այլ ես յուս էին ամենքը:

Միշտ ուղիք գիտեմ, այս ու այն կողմ, պատուհանի մաս կանգնած գիտում էի ջար ու ցրի, յիստ փոքր անակներ, փայտեայ անձուներ շինածները, տանիքները խոտով ծածկում: Գնումադարի ապագութիւն էին թողնում: Գալտում կենդանութիւն չի նկատում: մարդիկ ու կենդաններ չեն երևում: երբեմն երևում են եզերով չին ձուով թուած սայլեր: Մարտուկներ պատ-անբարձր յետոյ, շնորհի տերոջ աշխարհակ կարգե-րի, երբեմն չեն երկրորդ, այլ նկատում տարածութիւն-ները մասնի են խոտայն ու վայրենացում:

Ճանապարհին, փոքր կայարաններում շարժում չկայ: միայն պատաններն են ցնցոտիներով ծածկում գիւղացիներ: Մուրացիանութիւնը շահագանց շատա-ցած է: Կանդիպոլոյց զրամ են ինչոյում: Շատերը խորի արեիներ ունեն նպաստ: առնաաարակ չին ու մաշած շարժում են: Ի՞նչ տեղ երևում գիւղացի շինչ կտարում էին բաժակ շինում: Համար ինքները անխախտ պետական են, ոչորակն արտաքինով է սպ-գասու: Հայ, միւ, կարեղն, շարք չկայ: Գիւղացի կամ քաղաքացի անխախտ տեսք են ու յուս: Արանց շահագանցութեան մի մարդ շինուանքի միմտային-ուար են բռնի բուն նշանակութեամբ: Մինչև Մոսկու կարեն թէ անապատով անցայ:

Մասնատար եւ միւր երկակայան էի շքեղ և զեղեցիկ մի քանի: Մրտուկներ սպասում էի անակն ապա-հնայցուանքի արժանի քաղաքը, բայց որդիներ՝ հրա-

Պատմութիւն փողոցները կեղտոտ, փոշի, կտր շարե-րը զուրա ցցում, երկարաբար արածվաները նու-ցած, մաշած, անկանոն: Երթնեկում են շատ արագ: կայարանի մաս կանգնած էին մի շարք մի միանի կտորներ՝ փոքր, կանոնաւ, երկաթները ծանցուտ, քաղ-զերը զուրա ցցում ու կաշիները կախ:

Փողոցներում բազմութիւն չկայ: Մարդիկ ցրի, վախկոտ, յուս, իրանց ու զանազոջ քայլերով գնում են Տիտրի է ամէն, ամէն բան: կարծես ետ էրկեց նարպարաններին գերեզմանատուն են տարել, հողին յանձնել ու վերադարձնում են: Նկատելի է, որ մէկը միանց զգոյշ է և վախկոտ է: Փողոցներում անպե-րում են երկաթ-ուրկար շարաններ, որոնք պոչ թռնած Ներթին են սպասում մի կտոր սև, խմոր խոցի նամար: որքան անտանելի է այն ժամերի սպասու-մը...

Նորիկը անմիջապէս նկատում է իր արտաքինով, նազուստով և զինքի Թաղային Կոմիտեի: ամենքի ոչին նաշածքին է արժանանում, ներս աշխուշ, ինչպէս յախտան թանաքներեան գրտապարտում չկիր, որ երկաթեայ պատուհանի նեղ ծակից անդրա դիտում է արտա երկինք ու արեի տակ երթնեկող ու թնութիւնը յարկեց ժարկեցում: Չկայ ինքնիշխան, ինքնուրուտ, խորտա քայլածք ու շարժում: անկեանցելի է սուս ժո-ղովրդի նախկին ռաբա, անհոյ, միմտայկտ ու պարզ բնութարանները: Ես Թաղային Կոմիտեի կոչներն ու անուրիները: Նորիկի Երեսուցիները, մանուանգ չկիրաները շու են նազուտ: Գուտոյ, ինքնուրուտ և արագ քայլերով անդադար երթնեկում են, վազվազում, երևում են ամէն տեղ՝ փողոցներում, նաշարաններում:

Բարձր շրջաններում փոքրամասնութիւնը կատարելն է, սակայն, զուս, իրանց մտային շին նաաարակ մանկաա-ցուներին, նրանք չեն խաւնում ժողովրդին: փողոց-ներում թէ անզամ կարել է յանգնել շքեղ նազնած մարդկան:

Պայտաններին, մանապէտներին ստացած վարժա-տարութիւնը շատ շինի է նախմտաաւ ապրուստի պա-րամներին: այլ ունեկով նազու մի մարդ կարող է ապ-րել, սակայն, 4-5 հոգիոց բնուանիքներ, յանախ, սպրում են փոքրամ կանգնով: ամենի նամար պարզ է, որ զեղեցում են կատարում: կաշտակութիւնը և շարաշահութիւնը մարքայագութեան են նաւել, բայց ո՞վ էր Համարանիկի հրապարակներ: Ուղիք վրա գալուտի անուտոյը շատ է տարածում — ընտրի կտորեղենն-րի, նուրթիներին, գոհարեղեններ և այլն, բայց, մանուանց, զոյարի ու ստեղծելի: կատարարներն թանկ զուրար անուտ է ևր: 94 կոպեկով, իսկ փողո-

վրդի մէջ, աս շուկայումս դուրսը արժէ Լ-ն բարձր
 ինքս անձամբ գորար Եսեկեցի կոմունիստի Եւ այս
 անկեր կատարում է կարծիք քրեաների, կոմունիստ-
 ների միջոցով կամ Երանց նոյնանորոյթեան տակ.
 Ճիշտ է, կատարարութիւնը շեղակցում է և բունան-
 ներին իրտա դատում է, բայց անգոր է. սրբօնեան
 գուշ տեղի է:

Մտակայում կատարել սով է հայի. նպատակի,
 մի և ժամամբ շարքի: Փողովորդը արտաքին ուշ-
 արարչից կարում է և միանգամայն տեսնելակ. սեռում
 է տեղական թերթերով. թեև նախատեսող չկայ: Մի
 օտա տիկին նարցում էր ինձ. «Երբիքումս նաց կու է,
 արտասանմանում նպատակեցիք ստա ա է, Ներտու-
 թեամբ մեր կը թերի: Ինչեմ ժողովուրդ, բնութիւնն
 ու թշտութիւնը Երանց արտասանութեան ու Երտու-
 կայութեան սանձանն անցած կարծեսցիցէ է: Միտու
 Երանց, որ ասիք են ունենում անանկա երտպայցի
 ճամբորդներին, զգում են իրենց անասման թշտու-
 թիւնը:

Բուլեիկները իրենց միջնպայային վարտները սոր-
 քել են ասել չընդ, քան Փրանտիկան ու զերմանական
 վարձանները. սայուններ օտի, ուսելիքներն ու լոճիքը
 արտաւ: Եսեկ անուարարէ Գրա գունում քաղաքներում
 պատրաստել են չընդ նիբանցներ ճամբորդներին
 լլայցնելով, աշներին փոշի փշելու նամալ: Ինքս գի-
 անցի միտա երկաթուղիներ, չընցի նիբանցները
 սենեակ սիտակալու պատրաստել ենք սարսափներ թըշ-
 ատութեան, երկաթուղիները նին ու Խարտուլ, նիբա-
 նցները կըպտա ու անասնելի:

Դրութիւնը աննեղից գարծից է վարպետ, Խորա-
 մանկ ու զգուշ, Խուստիւմն են գարգ Խուստիւմ, ասելի
 լուս Խուստիւմ են. քան Խուսում, Դժոխք է կեանք չէ
 այց ժողովրդի կեանքը:

Մտակայում արտաին օրը, մինչև տեղաուրեկա Եր-
 կար թագաւոցի, սպիտակ նաց ու ժամի կերակուր
 չկարողացայ գտնել. Վերջ է վերջէ, մի նրեայի ճա-
 շարանում (պետական) գիտնասնձորի և այլ կանաչե-
 ղիկի Խուստուրդով մի քան կերայ: նիբանցները բո-
 ւորը չիքն էին. կես զընդերն նացի կարողացայ տեղ
 Խարէ:

Շատ սարքերիմակ բաներ լոնցի աշտուղի կեանքի
 մասին: Նարտաներին, գործուտեղներին կատարելուց ու
 փշայնելուց չետու, վերջին սարքները նայանել են և
 փոքր, մասնաւոր տեսարակուններին. այսպէս, մէկը
 նպար բարձրի անուտար ունի, Երտեղի 1400-1500
 լարչի տուրք են պահանջել: Ինչո՞ւ մարդը իր ամբողջ
 ունեցածը յանձնել է կատարարութեան ունիք պատա-
 յու նամար: Շատերը գրանով էլ չեն ազատուում: Այժմ
 Ներքով գրողայնութեան է, որ ճիշտում է անողոք
 կերպով:

Անցեալ տարի Բուլուում մի զող մերթապետով՝
 ստանում են գատարան: Դատարարը յայտնում է, որ
 քանտարական երկրում զրոյութիւնը անպատեի գործ է
 և յանցանք է նամարում: Գողը պատասխանում է,
 թէ՛ սովան ու անուր էր, ստիպում զգուրթիւն է
 արել. զողարիկն էլ ին անկտար չէ. որ յանցանք
 համարի... Եւ Խուստանում է այլիս գողութիւն շանկ
 և ապա է արձակում:

Կոմունիստները և ժամամբ քանտարներէց քատ,
 նասարակութիւնը անպատմելի պայմաններում է ապ-
 րում: Երբ որ գրչիք անգոր է գրանց գրութիւնը նկա-
 րագրելու: Դիբարու նախաչափախոսկաններ նամար-
 ւում են կրեականները. գրանց նացի, մախ, նպատակի
 ու շարքի ստանակ չի տրում և գրակները զարոց
 չեն ընդունում: Եր սմեղըրը քատում է գրակը: Այս
 անտանկի գրութիւնից գուրա գուրա նամար շատերը
 քաժանում են ընտանիքից. մայրը պապանքան է տա-
 լիս անտանկ, գրակներին նու ապրում է անտանկն և
 նամապատարան վարչութիւնից ստանում է գործ և
 նացի տուն:

Տոնակա ունենայի էլ զեռ յուսական չէ. պէտք է
 մանկրով ու օրերով կանգնել կոտորատիւններ ու
 զիտակալու Խուստիւմերի տուն մի քան անտանկա նա-
 մար: Մի բնաները պատմում էր, որ 8 օր շարունակ
 ներքի են կանգնել կոտորելի գնելու նամար, բայց
 ներքի իրենց չի նասել: յուսանա թողի ու Նեոացի
 են:

Մի Խուսով. դժոխք է, դժոխք, կեանք չէ այս
 երկրի մարդկանց կեանքը, այլ կատարելու նախատա-
 կութիւն: Բնչպէ՛ս են գիտանում — անհասկանալի են:



Հ Ա Յ Ս Տ Ե Ս Ը Ի

ЗАРЕВАНД

ТУРЦИЯ И ПАНТУРАНИЗМ

С предисловіем А. МАНДЕЛЬШТАМА

Цѣна 15 фр.

Ս Խ Ա Ս Ե Լ Ի Խ Ա Մ Ա Գ Ի Ը Կ Ե Կ Դ Ր Օ Շ Ա Կ Ե - Ի Ը



Հ. Յ. Գ. ՔԱՄԱՆԱԿՆԵԱՆԻ ԱՐՔԻՒ

Եկող 1930 թվականին կառուած է Հ. Յ. Գաշապի գուժեան թատերաստանակը: Այդ սաթիւ Գրոշակ ուր առանձնապէս լաշն անկ պիտի տայ պատմական կիւթիքին ու յեղատիտական յաշիքին: Ազգրում ենք մէկ ընկերներին և մարտիներին հասցնել մեկ

- ա. Սեղագիտական մեծագրկնիքի պատմութիւններ.
- բ. Սեղագիտական կրօնների Յիպոպոլիտիւններ.
- գ. Սեղագիտական դարձյունների կիտապոլիտիւններ.
- դ. Բաշիք Հ. Յ. Գաշապիտիան ստիկալից.

ե. Սեղագիտական մտղովրդական երկեր, առգրումներ, անկրտաներ, գրայեալի պատմամներ յեղագիտականների կեանքից

զ. Կրի տանել և ուղարկել, առտարապիւ, այի ամենը, որ կարող է յուտարանել մեր կուտակութեան անցիակ կեանքի այս կամ այն կողմը.

Այլ և ինչքում ենք ուղարկել մեկ յեղագիտական գործի վաշիքին յառանկարներ, թատրոններ, խորհրատեպի թեղիքներ և ուրիշ: այլ կարողի կիւթիք:

Այս խնամած յատուկ խնդիր ուղղում ենք մերկի ընկերներին:

Ուղարկել «Գրոշակ»-ի խմբագրութեան հասցեով:

ՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՏԵ

Կիրառիտանքի մասնան տարեկ սրճի և Գերաթիւ Աթոյանեանքի մասնան հետևանքով «Գրոշակ»-ի այս յամարում տարիք ենք կրկու կենտարական յողամենք, որով « Կրի յեղ Հ. Յ. Գաշապիտիան դիտանեն » յամենք ստիկապ մեք յետանգի յաշիքը համարին:

« ԳՐՕՇԱԿ » - Ի ՄՈՏ ԱՐ ՎԱՅԱԿԻՆ

- Գ ԿԻՒՋԱԿԱՆ, Հայ հաղութական մտքի զարգացումը 10 Ֆր.
- ԼԵՒԻՆՈՒՄ, Ընկերական, միջպագայական և մեղում մտղովրդները, յարդ. Կ.Մասունի 10 Ֆր.
- Ե. ՖԻՄԵՆԻՆԱՆ, Միւր փիլիսոփայական աշխարհայեցողքը 25 Ֆր.
- ԹԻՏԻՆՆՈՒ Մ, մազախոս 5 Ֆր.

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ա Կ Է

Մ Տ Ա Շ Ո Ւ Մ Ե Ի Ր

Հ. Յ. ԳԱՄԱՆԱԿՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Կ. ՀԱՆԿՈՑՑ

ՀՐԱՏ. « ԳՐՕՇԱԿԻ ՄՈՏԵՆԱՇԱՐ » - Ի



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի ծրագրի տխուր վախճանը (Խմբագրութեան)	225	Տնտեսական հաղափայտութեան խնդիրներ (Ն. Բաղդասխան)	240
Մատուցներ Հ. Յ. Գաշապիտիան մասին (Ն. Հակոբյց)	228	Կիւր-Կուտան (Յ. Ստեփանեան)	243
Թուրքի յուշեր Բրիտանոտարի կեանքից (Խ. Սեւան)	232	Թիւրքի յարդ	247
		Գերաթիւ Արաշտեան (Աշոտ-Արթուրի)	250
		Թղթակցութիւններ	254



« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի
Թիւն սրճի 2 Ֆր. 50 սանա.

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցին՝
M^{me} S. AGOPIAN,
8, rue des Gobelins, 8, Paris (13^e)